



Բ Ա Վ Ի Ն

Թ. ՏԱՐԻ 1970 ՄԱՐՏ  
digitised by A.R.A.R.@

ԹԻԻ 3

پاكين  
 مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
 مدير المسؤول  
 السيد ارنيين كارنيك قزائجيان

**PAKINE**  
 REVUE MENSUELLE  
 LITTÉRAIRE & ARTISTIQUE  
 Propriétaire  
 Dr. A. KAZANDJIAN

**բ Ա գ ի ն**  
 ԱՄՍԱԳԻՐ  
 ՆԵՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
 ԵՒ ԱՐԹԻՒՆԵԱՆ

- ՎԱՌԶ ԽՄԱԳԻՐ
- Կ. ՍԱՍՈՒՆԻ  
 ԽՄԱԳԻՐ
- Պ. ՄԱԳԵԱՆ
- ԽՄԱԳՐՈՒԹԵԱՆ  
 ԱՆԴԱՄՆԵՐ
- Յ. ԳԵՂԱՐԻ
- Տ. ՈՍԿՈՒՆԻ
- Բ. ՓԱՓԱԶԵԱՆ
- Ն. ՊԱՐԹԵՒՆԵԱՆ
- Ժ. ԱՐԹԱՐԵԱՆ
- ՀԻՄՆԱԳԻՐ ԱՆԴԱՄՆԵՐԵՆ  
 † ԵՒ ՊՅԱՅԵԱՆ

**ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ**

- Ա. ԱՐՓԻՆԷ
- ԱՐՄԱՆՏ
- Ս. ՍԱԳԳԻՍԵԱՆ
- Ռ. ԳԱՌՕՆԷ
- Ա. ԱՐԾՐՈՒՆԻ
- Ա. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ
- Ն. ՎԻՐԱՊԵԱՆ
- ՅՈՎՀ. ՇԻՐԱԶ
- Ս. ՍԱՆԻՆԵԱՆ
- ՇԱՀԱՆԴՈՒՆԵՍ
- Յ. ՊԷՐՊԵՐԵԱՆ
- Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
- Փ. ՊՈՒՐԺԱՏ
- Բ. ԵՂԻԱՑԵԱՆ
- Լ. ՄԿՐՏՁԵԱՆ
- Բ. Փ.

Խմբագրութեան հասցէ  
**G. SASSOUNI**  
 Rue Sélim Boustani,  
 Beyrouth-Liban  
 Հեռաձայնի թիւ 296898

# Բարձր

## ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Թ. ՅԱՐԻ, ԹԻՒ 2

ԻՐԱՆ 1970

ԳԼՈՐՈՒԹ

### Ա. ԱՐՓԻՆԷ

## Ո Ւ Ր Ո Ւ Ա Ն Կ Ա Ր

ԱՄէն ամառ, զոնէ շաբթուան մը համար կու գամ ուս պանդակը, թէ՛ քիչ մը արեւ ծծելու, թէ՛ ծովու օդ շնչելու եւ թէ՛ մանաւանդ՝ սա զեղատեւսիլ լիճին գրացնութիւնը վայելելու:

Այդ տարին, եկեր էի տաանց նախապէս իմաց տալու, առանց նախապիտակ սենեակի սպասուած ըլլալու, եւ ուրեմն, ստիպուեր էի առնել որք որ տրամադրելի էր:

Գանդատելու պատճառ մը չունեցայ սակայն, երբ դայն տեսայ: Պատուահին առջեւ պարտէզի ընդարձակ տարածութիւնն էր՝ իր զեղեցիկ անտէրով: Կարմիր ծաղիկներու իրար սեղմուած անհամար գլուխներ, սրանց մէջ փառող ելեկարական կտուցները՝ խոշոր կայծոռիկներու, կամ երկինքէն թափած աստղերու պատրանքը կու տային, երբ մութը իջնէր: Քիչ անդին, լիճը փռուած էր իր սրտին ջուրերով ու իր հայելիին մէջ գրկած շուրջի ամառանոցներն ու ծառերը:

Հասեր էի ուշ տանն ու յայնժամ: Եարաթներու հեղձուցիչ տաքը կ'երեւի հազարաւորներ ծովափէր նետած, այնքա՞ն խնդրուած էր փայտուղին եւ ես կարճ պտոյտէ մը հոգե՛ զացի հանդիշելու:

Յանկարծ, քունէս ընդոտտ արթնցայ: Մէկը կը խոկար, կը խոկար այնքա՞ն բարձր, այնքա՞ն մօտ, կարծես սենեակիս մէջ ըլլար...

Յուսացի որ ժամանակաւոր էր այդ. թէ՛ շուտով, մարդուկը ով որ էր քով պիտի դառնար, կամ արթննար, քայց ի զուր...

Աղմուկը իր գանազան երեւէջներով ու սուլոցներով կը շարունակուէր. կարծես այդ բաւական չէր՝ անոր վրայ եկաւ աւելնալ կնոջ մը պզտիկ հազը, որ հակառակ յայտերուն՝ բոլորովին անխորտակ մտքով փայտողը...

digitised by



Եթէ այսպէս շարունակուի, ինչպէ՞ս պիտի կարենամ հանդստանալ, ըսի մտովի ու փորձեցի պատճառը փնտրել:

Ի՞մ եւ քովի սենեակը իրար միացնող դուռ մը կար երկու կողմերէն ալ կը պուշուած ու դրան տակի լայն բացութեան հետեւանքով էր հաւանարար, որ ամէն ձայն ու ազմուկ այդպէս սենեակին մէջ ըլլալ կը թուէր:

Հուսնալու մօտ քնացեր էի ու քաւական ուշ կըլայ: Մեծ եղաւ հրրճւանքս, երբ պատշաճ ուղղակեցայ ու տեսայ, թէ դիտ անքուն պահողներուն դուռը բաց էր ու մեկնուծի պատրաստութիւն կտր ներսը...

Տրամադրութիւնս բարձրացաւ: Հանդիստ, քունս խանդարող պիտի չըլլար այլևս...

Որքա՞ն շուտ լուստես կը դառնանք...

Խոր ու աղուոր քունով մը քնացայ այդ պէշեր, քնտտ էի ու լու քնացայ, բայց սենեակս կիսամութ էր տակաւին, երբ ձայնասփիւտ մը արթընցուց դիտ: Կոպերս կը մերժէին բացուիլ ու անիծեալ ձայնասփիւտը պէտք եղածէն ուելլի բարձր՝ իր քաղաքական լուրերով սենեակին մէջն էր կարծես...

Յանկարծ, աչքերս լայնօրէն բացուեցան եւ ժպիտը տարածուեցաւ դէմքիս: Կարծես ճառագայթ մը ինկաւ հողիս մէջ ու իր ջերմութիւնը հրճուանքի ալիքներով ողողեց էութիւնս:

— Ետէ՛ սաւիկա, Խոսրով շտէ՛ սաւիկա, դը, դը, դը կ'ընէ՛ կոր, էնըսք ըրէ...

Մ', քաղցրութիւնը, քաղցրութիւնը մայրենի լեզուիդ, նոյնիսկ, իր ազնատուած դիճակով...

Քաղցրութիւնը, օտարութեան մէջ, օտարներու մէջ յանկարծօրէն յայտնուող արիւնակիցներուդ, զեղակիցներուդ:

— Հէ՞, — կը հարցնէ մարդը, — հէ՞...

Կի՛նը կը կրկնէ՛. յայտնի է, որ ամուսինին ահանջը ծանր է ու խօսակցութիւնը կը շարունակուի մեկի բարձր:

Մտիկ կ'ընեմ, ձեռքերս գլխուս տակ ու աչքերս առաստաղին, ուր հեռաքրքրական ոչինչ կայ:

— Մի՛ անիւրիւր, ճանրմ՝ երէկ ուշ ատեն անիւրեցար, վաղը առտու կ'անիւրուիս... Յոգին համար ի՞նչ ըսա...

— Աղուո՛ր է, աղուոր, շատ աղուոր օդ է, վաղն ալ աղուոր պիտի ըլլայ, կենա՞նք անպա, — խոպոտ ձայն մըն էր, հաւանարար, բարի ու հանձնակատար մարդուկ մը, — հայտէ՛ կիւր, էրթանք Բաքի մը խմենք, մեր Արաքսին ո՛վ դիտէ քանիին պիտի էլլայ, — կը լռէ պահ մը ու կ'աւելցընէ, — շիտակը բան մը ըսե՛մ, էս ատ տղան բէք չհաւենեցայ... մենք պիտի ձյկնք էրթանք, աղջիկը շարաթ մը մինակը աստեղ...

— Ձօճուիս չէ եա, ըրածը դիտէ:

— Ի՞նչ դիտում...

— Մեղա՛յ Տէր, Սեպտեմբերին քսանմէկ տարեկան պիտի ըլլայ, խելքը դուրսը հասած աղջիկ է ալ...

— Անանկ մը ըսիր՝ դիտես քի քառսունմէկ տարու պիտի ըլլայ:

— Է՛հ, հապա՛... էս ատ տարիքին քեղի էրկու դաւակ տուած էի...

— Է՛, ան վախը՛ք պաշխա էր, Արաքսին ինծի համար չօճուիս է տահա...

— Մեղա՛յ Տէր Աստուած, խենթեցա՛ր, մա՛րդ. Ալէքսը քսաներկուքին շամուսնացա՛ւ, Վարդուհիս քսանին: Անոնց համար ատանկ բան չը-

սիր... Հա՛, Ալէքսիին համար իրար անցանք, դիւեր ցորեկ տէրտ քրինք, քուն չփոսցանք, լացինք, ամձա, աղջիկը օտար ըլլալուն համար էր, չէ քի կարգը իլ ուղերուն: Մութլախ, էրկուքս մինակ պիտի մնանք տէյի վախէզ է...

— Զանրմ, տղան քիչ մը բէք աչքը բաց բան կ'երեւայ կոր, ինտո՛ր բսեմ, հանած վարած, աչքերը Փըրըլ Փըրըլ կը խաղան կոր, մեր Արաքսին մաքուր աղջիկ է, թեւերնուս տակը մեծցած աղջիկ, ի՞նչ պիտեամ...

— Քա՛ հարկաւ ճարպիկ, աչքը բաց տղայ է. անանկ չըլլոր նէ ինտո՛ր հոս պիտի պար, հի՛մ դուչն էրթար, հի՛մ ախտոտէր պիտի: Աս տարի դարոցը կը լմնցնէ. մենծ ընկերութեան մը մէջ դործը պատրաստ սեպէ: Փառք տուր քի հայ տղայ է, հայ մեծցած աղայ է, հայ աղջիկ կը փնտոէ...

— Հա՛, հա՛, հարկաւ, հարկաւ...

Փամանակ մը լռեցին:  
— Խոտրով, սանտրս վա՛ր ինկաւ նայէ... Սըւոր տակը զնայ կարծեմ... Հա՛, հա՛, հոգ... Ամէն տարի աւ մեր քովի սենեակը Արաքսիին կուտային, սա օրթայի դուռը բաց կը ձգէինք, իրարմէ լուր կ'ունենայինք...

Կականարկուէր սենեակիս. պատճառ եղեր էի իրենց անջատման: Ակնարկս ինկաւ դրան ու յիշեցի Աւետիս Ահարոնեանի «Լուսթիւն»-ը, փորձութեան մղող բռնայի ծակը: Եւ որպէսզի Ահարոնեանի հերոսին ճյանջաւոր անհամեմատութիւնը շարժեմ՝ մեր էրկուտեք ապահովութեան համար, առաջին գործս եղաւ թուղթի կտորով մը խցել այդ ծակը:

— Անգի՛ն, Արաքսիին սենեակին թիւք ի՞նչ էր...

— Տասը, զիմացի կարդին վրայ է. ձայն տալու պէտք չկայ, անիկա ուշ պառկած է, տակուին կը փնտնայ...

Լսեցի դրան բացուիլը. այն ատեն, ես ալ դուրս ելայ ու պատշաճ ուղղուեցայ:  
Մարմնեղ կին մը ու ճերմակ մազերով, բարի աչքերով մարդուկ մը անցան քովէս:

Դիտեցի լինը: Զուրբը անհանդարտ էին ու հոյն ու ամպերը իր հայտնի փշրած, խորտակած: Բազերն ու սողերը իմբովին իջեր էին լողանքի, թեւեւ ալ ի խնդիր կերի... Սաղերը կը մխրճէին իրենց դուխները Զուրին մէջ, մինչ բազերը՝ պուշերին միայն օդին՝ ինձ համար անյայտ բանք կը փնտոէին հոն վարը:



Թիւ տասը սենեակէն Արաքսիին ելլելն ու մտնելը մէկէ աւելի անգամներ տեսեր էի արդէն: Տեսեր էի զինք՝ իր լողանքի տարազով. տեսեր էի զինք՝ իր երեկոյեան արդուզարդով:

Փոքրակազմ, հայու խոշոր աչքերով, նուրբ ու սիրուն աղջիկ մըն էր՝ Բայց չէի տեսեր տակուին իր բարեկամը, որուն նայուածքը շատ ալ վրտաւորութիւն չէր ներշնչած աղջկան հօր, որ հաւանաբար, ամէնէն առաջինի, ամէնէն իտէալ ամուսինը միայն արժանի կը նկատէր անոր:

Բացառապէս աղուոր օր մըն էր: Մեղմ դեփուռ մը, ջինջ երկինք, խաղաղ ծով:

Նստեր էի փայտուղիի նստարաններէն մէկուն առանձին ու կը դիտէի վարը, աւաղին վրայ արեւ ծծողները, Զուրը մտնողները, խաղացող երեխաները:

Նախորդ օրուան ալեկոծ սփիւնոսը խաղաղած էր. գորը Զուրբը

մաքրուեր էին ու ծաւի պայծառ աչքեր յիշեցնող ջինջ կապոյտով մը փուռեր էին մեր առջեւ:

Լսողութիւնս լարեցի. հայերէն խօսակցութիւն մտառ. միջին տարիքի երկու զոյգեր էին:

— Ախ, սա ի՞նչ աղուոր հանդիպում, մենք ալ ճիշդ հիմա մեր խօսքը կ'ընէինք... Ինչպէ՞ս էք, է՞րբ եկաք, տղաքն ալ եկա՞ծ են...

— Պզտիկը հոս է, մեծը ամիս մը առաջ ամուսնացաւ... Հապա՛, տուն տեղ եղաւ, ես ալ կենուր եղայ...

— Հա՞յ է, աղջիկը հա՞յ է...

Մրտցաւ հայուն անխուսափելի հարցումը:

Չեմ լսեր պատասխանը, բայց կը տեսնեմ դիմացինը, որ դուրսը օրօրելով՝ կը յարէ:

— Հա՛, հա՛, ամէն տուն քանի մը հատ օտար մտեր է հիմա...

Ու կը քայլեն միասին:

Աւաղին վրայ խումբ մը երիտասարդ աղջիկներ ու տղաք կ'աղմկեն: Հայերէն երգի պատառ մը ուշադրութիւնս այն կողմ կը հրաւիրէ: Աղջիկ ու տղայ իրարու ձեռքէ քաշելով ոտքի կը ցատկեն իսկոյն ու պարի եղանակը իրենց շրթներուն՝ կը վազեն ջուրը:

— Բա՛քսի, Գեղա՛մ, — ձեռքով կը կանչեն ետեւ մնացող զոյգը, որ կը մերժէ իրենց հետեւիլ:

Կը դիտեմ այս վերջինները ու իսկոյն կը ճանչնամ Արաքսին: Նուրբ, շատ նուրբ եւ շատ սիրուն: Դէմքը արեւէն կարմրած, մինչեւ ուտերը հասնող մութ շագանակագոյն մաղբրը ականջներուն ետեւ, թաւշեայ մորթով ու կլոր աղուոր դիծերով:

Տղան՝ մաղոտ ու մկանոտ, գէմքը պրոնդի գոյն առած. խոլոր-խոլոր սեւ ու փայլուն աչքեր ու կարճ, շատ կարճ խուլուած մազեր:

Կը թուէր վերջին ծայր եռանդուն: Գրեթէ միշտ ինք էր խօսողը: Աղջիկը լուրջ ու թէ՛ մը մտայնի, մտախոհ ու անմեղ աչքերով կը դիտէր զայն ու երբեմն կը ժպտէր: Այն ատեն՝ ամբողջ գէմքը այնպիսի լոյսով մը կը վառէր, այնպէս կը կենդանանար, կարծես գեղեցիկ դիմանկար մըն էր, որ տղուն աչքերուն ջերմութեան տակ յանկարծ կեանքի կու դարձնէր՝ անդիմադրելի դրուշուրեանք մը զայն կախարդելու համար...

Աղուոր, շատ աղուոր զոյգ մը, խորհեցայ ու հրճուեցայ:

Աղջիկը թէեւ այս ակերտուն վրայ ծնած, բայց աւանդապաշտ ծնողքին թելին տակ մեծցած, պարկեշտ հայ աղջիկ. տղան՝ հայահոծ շրջանէ եկած, ազգային կրթութեամբ, ազգային դիտակցութեամբ թրծուած, հայութեան բոցը իր մէջ, բոց մը, որմէ հաւանաբար կայծեր պիտի իյնային սա աղջկան էութեան մէջ, սա աղջկան, որ Արաքսի էր մկրտուած, բայց դպրոցի սեմը ոտք դրած օրէն Բաքսի էր փոխուած... Ու... երկուքը միասին պիտի կաղմէին հայաբոյր աղուոր բոյն մը, ուր հայ ձաղուկներ պիտի մեծնային ու այդպիսիներով պիտի երկարաձգուէր կեանքը դադութին:

Այսպէս խորհրդածեցի ես այն ատեն երջանկօրէն ու երկա՛ր մնացի նստարանիս վրայ: Հորիզոնն ու ամպերը հետզհետէ մանրակի երանդներ ստացան ու աւազը ոսկի ցոյքեր: Քանի մը ճերմակ գրօսանաւեր կը կտրէին խաղաղ ծովուն ջուրերը ու մեզմ ալիքներ կու դային գէպի ափը քնքջօրէն, սիրերպի մը քաղցրութեամբ, մինչ խարակներն ի վեր ջուրը կը նետուէր դուարթօրէն, սէրէն խենթեցած պատանիի մը նման:

\*\*

Տարիներ են անցեր հիմա այն օրէն սաղին ու նստած եմ ես հոս կըր-  
կին: Քոյ՛մ՝ բարեկամուհի մը ու անոր տարեց զբացին: Կը դիտենք աւաղին  
միայնի բազմութիւնը: Սիրարանող զոյգեր, արտասոց մարմիններ, խազացող  
մանուկներ, աղաւնիներու ու ճայերու երամներ:

— Աղջի՛ Արուս, աէ, էնտեղ նիստող մեր Անդինի աղջիկ Բաքսին չի՞...  
— Այո՛, — կը պատասխանէ բարեկամուհին:

Կը նայիմ ցոյց տրուած կողմը, աւաղին միայն նստող կիներուն. երեքն  
ալ անծանօթ են ինծի, բայց կը թուի, թէ անոնցմէ մին տեսած եմ տեղ մը...  
Կը պրպտեմ յիշողութիւնս... Մշուշ... մշուշ...

«Անդին, Բաքսին, կը կրկնեմ մտովի ու կրկին պրպտուք... Ո՞վ է...  
ո՞ւր տեսած եմ... Ե՞րբ տեսած եմ... ու յանկարծ՝

— Ո՞րն է Բաքսին, — կը հարցնեմ:  
— Գլխարկովը, — կըլլայ պատասխանը:

Արաքսի՛ն... Աչքերը մարած, պղտիկցած, թարմութիւնը բոլորովին  
կորսուած, կարծես միջին տարիքի կին մը եղած ըլլար...

— Ժամանակին մեղի դրոյցի էին, — կը շարունակէ բարեկամուհին,  
— շատ սիրուն աղջիկ էր, շա՛տ, որքա՛ն փոխուած է հիմա... Ամուսինէն  
բաժնուած, երկու դաւակները առած՝ հեռացած է տունէն:

Կարծես քարացայ: Յիշեցի իր հայ բարեկամը, որուն հետ ալ ամուս-  
նացաւ անշուշտ: Յիշեցի հօրը խօսքերը, հօրը վախերը անոր նկատմամբ ու  
զիտեցի Բաքսին...

Պատմեցի բարեկամուհիս անոր ու ծնողքին հանդիպելու տարիներ  
առաջ:

— Մեղք եղաւ, շա՛տ մեղք, աղուոր անուշ աղջիկ էր Բաքսին, ով ու-  
ղէր կրնար առնել, բայց սիրտը այդ անպիտան օտարին էր տուեր ու հայրը  
մայրն ալ չէին զիտեր: Համարձակութիւն ալ չունեցաւ ըսելու ու օր մըն ալ  
այդ սղոռն հետ փախաւ...

— Հայր որ լաւ, վրէժն կաթուած իջաւ, քանի մը ամիս ետք մեռաւ,  
— կ'աւելցնէ դրացուհին:

— Բայց հայ տղու մը հետ էր, երբ ես տեսայ...  
— Հա՛, այո, Գեղամը: Չէ, չէ, չեղաւ անիկա. կ'երեւի փորձեց, բայց  
չկրցաւ մտերմանալ. ինք հոս մեծցած, սիրտն ու միտքը այդ օտարին, Գե-  
ղամը անդիի կողմէն, ուսումնական հայ տղայ:

— Ես օր տեսայ, ըսեցի էս գործ չեղնիր...  
— Որքա՛ն փոխուած է, չէ՞... Ո՞ւր դացին, ի՞նչ եղան անոր աղուոր  
աչքերը... Ամուսինը շարաթը քանի մը օր խմած տուն կու գայ ու կը ծեծէ  
ալ եղեր... քաշուելի՞ք բան է...

— Ի՞նչ եղաւ միւսը, հայ տղան, Գեղամ՞ ըսիր...  
— Իրաւ չեմ գիտեր, վատուհ եմ ան ալ Բաքսինի աղուորութեանը միայն  
դարձուած էր, հոգեկան կապ մը չեմ կարծեր գոյութիւն ունէր... Անոնք  
հայ են անշուշտ եւ հայ ալ կը մնան, թէեւ անոնց մէջ ալ այստեղիներէն  
աւելի շատ ու աւելի շուտ օտարանալու մարմաջ ունեցողներ չեն պակսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Երբեք չեմ գիտեր, վատուհ եմ ան ալ Բաքսինի աղուորութեանը միայն  
դարձուած էր, հոգեկան կապ մը չեմ կարծեր գոյութիւն ունէր... Անոնք  
հայ են անշուշտ եւ հայ ալ կը մնան, թէեւ անոնց մէջ ալ այստեղիներէն  
աւելի շատ ու աւելի շուտ օտարանալու մարմաջ ունեցողներ չեն պակսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Կը դիտեմ ովկիանսուր, որ այնպէ՛ս ալեկոծ է. ալիքները խլացուցիչ  
աղմուկով ու սպաննագին վայրագ զրոտցով կը խուժեն ցամաք ու փրփրոտ  
ջուրը կ'հոսայ աւաղին միայն: Այն աւաղին՝ ուր տարիներ առաջ երջանիկ հայ  
բոյնի ուրուանկարն էի տեսիր...

Ա. Ա.

### ԱՌԱՋԻՆ ԻՄ ՇԷՐ...

Քն անսեքեւեք խօսքերն եմ սիրում  
 Եւ՝ քն սիրող մերկ,  
 Եւ՝ քն մերկ հոգին,  
 Որ լողում են յար  
 Քն աչքերի խոր լճի մէջ կապոյտ:

Ամէն մի խօսքդ, քա՛ռդ մանանայ՝  
 Մասունքը հոգուդ՝  
 Շրթունքիդ քուստէ՝ արիւց պոկւում է  
 Որ ընկնում հոգուս լճի մէջ կապոյտ,  
 Ինչպէս հագուագիւտ  
 Թանկագին մի քար,  
 Ու իջնում մինչեւ յատակը հոգուս,  
 Արձակում արմատ,  
 Դառնում նունուփար՝ սպիտակ կապոյտ:

— Հագի՛ր եմ սիրում՝  
 Ափիս նման մերկ,  
 Հայելու պէս ջինջ,  
 Որ կ'արտացոլէ երկինքը կապոյտ,  
 Աստղունք ու լուսին, —  
 Առաջի՛ն իմ սէր  
 Ու գիւտս վերջին...

### ՏԵՐԵՒՆԵՐԸ ԽԵՆԹ

Հեռո՛ւ լեռներից հովը վազեց ցած  
 Ու սուլեց մի երգ մերկութեան մասին.  
 Թեքեցին իրենց գլուխները քաց  
 Ծառերն՝ ունկնդիր երգին այդ շատ հին,  
 Որ ունէր իր մէջ խորհուրդ մի դեզին՝  
 Լաւ կանչը հողի...

Եւ օրորուեցին ծառերն դաշնօրէն՝  
 Հասունութեան այդ երգին ունկնդիր,  
 Մինչ տերեւները՝ կարմիր ու դեզին՝  
 Վե՛ր էլան օդում ու պար բռնեցին,  
 Եւ սպա իջան ցուրտ կրճէին հողի՝  
 Դանդաղ, անզադում:

— Օ՛, տերեւները, տերեւները խենթ՝  
 Պարելով են միշտ նրանք մահաճում...

Թ. Լ. Տրան

ԱՐՄԱՆՏ



Ե Ի Ն Ա...

Նա չարաւ ո՛չ մի վատութիւն կեանքում  
 Եւ չմտացաւ ո՛չ մի լաւութիւն:  
 Զը գիտեր ինչ է կեղծիքն ու սուտը,  
 Դաւն ու նախանձը,  
 Եւ՛ ի՞նչ է գանձը.  
 Ու նա գանձն էր իսկ կուտարմութեան...  
 Հացադուլ արաւ երբ մեռաւ տէրը  
 Ու հանգչեց նրա շիրիմի վրայ.  
 Եւ նա՛ մի շա՛ւն էր  
 Ատուած՝ է վկայ...»

Շ Ք Ե Ղ Ծ Ե Ր Գ Ո Ւ Թ Ե Ա Մ Բ

Թէ չհաճայես, չես կարող արել  
 Թիկնի՞նք է նա, քէ ծառ խնձորի.  
 Մերկացել է, տե՛ս, նա մանկան նման,  
 Ասես քէ մօրից նոր ծնուած լինի:  
 Դեռ երէկ էր որ՝  
 Ծաղկել էր նա նոր  
 Մի հարսի նման.  
 — Ո՞վ իսկց փողը նրա կաթնաթոշր,  
 Մաքրեց սեգոյրը  
 Այտերից վառման...»

— Նա զուգուել է արդ  
 Շքե՛ղ մերկութեամբ,  
 Իր սիրտը տերեւ՝ տունի է հովին,  
 Թեւերը պարզել արեւի շողին,  
 Կախուել է ծամին նրա ոսկեթել,  
 Հայցում է քիչ էլ յամենայ, մնայ,  
 Որ պաղ մասունքը մի քիչ տախմայ...»

— Նա զուգուել է արդ  
 Անբիծ մերկութեամբ,  
 Մրգերը կրծքի պակել է մէկ-մէկ  
 Ու նուիրել է անցնող աղջկան...»

Թեհրան

ԱՐՄԱՆՏ

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳԻՍԵԱՆ

ՄՏՔԻ ԱՐՏԱՑՈՂԱՑՈՒՄ

Ընկերուհիիս դուաթ մը սուրճ առա-  
ջարկեցի ու հաղիւ քառորդ ժամ անցած՝  
արդէն սեղանի մը առջեւ նստած էինք,  
դէմ-դիմաց, Պէյրուսի ծովափերեայ սրբ-  
ճարաններէն մէկուն բացօթեայ թէրթա-  
սիմ վրայ:

Գարնանային յետ-միջօրէն կարծես  
կը յորանջէր, այնքան հանգարա էր ծո-  
վը, այնքան հաղուադէպ էին անցորդնե-  
րը ու այնքան փոքրաթիւ՝ յաճախորդնե-  
րը:

Յօրանջելու կարգը ինձի ալ հասաւ  
եւ ընկերուհիս, գուցէ կռահելով արա-  
մազութեանս յանկարծական անկումը,  
ծիդ մը ըրաւ խօսակցութեան մը սկսելու  
եւ յաջողեցաւ:

— Այս հազուադէպ գոյնը ի՞նչ է, —  
հարցուց, ցոյց տալով իր նոր զգեստին  
թեղանիքը:

Յօրանջեցի: Ժպտեցաւ:

— Մեղրազոյն, — ըսի:

— Այս հազուադէպ մեղրազոյն է:

— Ես աչքերուդ գոյնը ըսի, արդեօք  
դուն հազուադէպ գոյնը հարցուցիր:

— Այո՛, — ըսաւ. ծիծաղելով, —  
արթնցի՛ր, ծո՛ւլ տղայ:

Իսկապէս, հազուադէպ անորակելի  
գոյն մը ունէր: Դեղին չէր, կանանչ ալ

չէր, նարնջադոյնի կը մօտենար եւ քիչ  
մըն ալ շաղանակադոյնի կը զարնէր:

— Ես, — ըսի, — կը պաշտեմ գոյ-  
ները: Կարծիրը, կանանչը եւ կապոյտը  
ի՞մ նախասիրած գոյներս են:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Սիրելի՛ս, իրականութեան մէջ,  
աշխարհի վրայ գոյներ գոյութիւն չու-  
նին:

— Ինչե՛ր կ'ըսես, — բողոքեց, —  
լո՛ւրջ կը խօսիս, երբ կ'ըսես, թէ գոյ-  
նէր գոյութիւն չունին: Բայց սա հա-  
զուադէպ մտքարտը արդեօք գոյն չէ՞,  
սա յայնատարած ծովը, որ փռուեր է մեր  
աչքերուն առջեւ, կապոյտ չէ՞, իսկ մեղ-  
րազոյնը, գո՛ր քիչ առաջ կը տեսնէիր  
աչքերուս մէջ:

— Գոյնէր գոյութիւն չունին, —  
կրկնեցի, — մեր զգայարանքներն են, որ  
կը ստեղծեն այդ պատրանքը: Սա ծովը,  
որ կը տեսնես, կրնանք համարիտ ըլլալ  
որ գոյութիւն ունի, սակայն բնաւ չենք  
կրնար պնդել, որ կապոյտ է, քանի որ  
որեւէ կերպով չենք կրնար փաստել գոյ-  
նին գոյութիւնը:

— Ինչե՛ր կ'ըսես, — զարմացաւ  
կրկին, — ինչո՞ւ մեր զգայարանքները  
պիտի խաբեն մեզ:

— Լա՛ւ, մտիկ րբէ, սա արեւը, որ կը տեսնես, ո՞րքան մեծ է կը կարծես:

— Մեծ է, շատ մեծ:

— Իսկ հիմա դուն ո՞րքան կը տեսնես արեւը, — ըսի նայուածքս սեւեռելով իր աչքերուն:

— Սալափ, — ըսաւ ընկերուհիս, երկու քնքոյշ ձեռքերը կամարածել միացընելով իրարու:

— Լաւ, քանի որ այդչափ կը տեսնես, ինչո՞ւ կը պնդես, թէ շա՛տ մեծ է: Պիտի ըսես, թէ հետու է, այդպէս լսած ես, այդպէս փաստած են քեզի: Սակայն նախամարդը, որ տեսած է արեւը, չե՞ս խորհիլ թէ ձեռքը երկարած է զայն բռնելու համար, չե՞ս կարծեր որ մազլցած է մինչեւ ծառին կատարը, հպելու համար երկինքի արջային, կամ օրերով ճամբայ կտրած է բարձրաբերձ սարերու կատարները բարձրանալով, մինչեւ որ կրցած է հաստասել, թէ իր տեսողութեան ստեղծած մէկ պատրանքն է տոտիկա: Հիմա ես ուրիշ փաստեր եւս պիտի տամ, հաստասելու համար, որ մեր զգայարանները հարիւր առ հարիւր չեն ցուցներ ինչ որ կը տեսնեն, կը շօշափեն, կը հոտուբտան, մէկ խօսքով՝ կը զգան:

— Կը սխալիս, — հակաձայնեց ընկերուհիս, — օրինակի համար, հիմա որ ես այս սեղանը կը շօշափեմ ու կը տեսնեմ, կրնամ անխարան ըսել, թէ փայլուն է ու կարծր:

— Այո, կը կարծես որ փայլուն է, սակայն եթէ խոշորացոյց մը բերես ու լաւ զննես, պիտի տեսնես, թէ հաղարաւոր ելիւզիներ ունի այս փայլուն տախտակը: Սակայն ամէն բանէ առաջ, պէտք է առնենք շորս տեսակ անձերու զգացական չափանիշը. գիծովի մը, երազողի մը, թմրեցուցիչ առած մէկու մը եւ ճնշումալք մարդու մը: Անշուշտ պէտք է ճշդը գտնել, որ ճնորմալքը չակերտաւոր է: Պիտի հաստատենք, որ ամէն մէկը տարբեր ձեւով պիտի տեսնէ, պիտի լսէ ու զգայ: Թմրեցուցիչ առնող ենթական ամէն ինչ պիտի տեսնէ մեծ, լայն, հսկայ, մինչ զինովը տարբեր ձեւով պիտի զգայ: Ո՞վ

կրնայ ըսել, թէ ճնորմալք մարդուն տեսածն ու զգացածն է իրականը:

— Կրնա՞մ հարցում մը ընել, — ծիծաղեցաւ ընկերուհիս, — դուն այս շորս տեսակներէն ո՞ր մէկուն կը պատկանիս:

— Ես հինգերորդ տեսակէն եմ, ճնորմալքի եւ երազողի մէջտեղ զսնուող տեսակ մը:

— Ուրեմն դոյներ գոյութիւն չունին, մե՞ղք, հարիւրաւոր կտաններու մէջէն ընտրեցի այս հազուատիս գոյիւ:

Սպասեալը սուրճը քերաւ, յարգանքով սեղանին վրայ շարեց գաւաթները եւ կամայ մը հեռացաւ:

Պահ մը լռութենէ ետք, ընկերուհիս վերսկսաւ.

— Հիմա որ գոյները ընկնցինք տշխարհի երեսն, կրնա՞ս ինծի ըսել, թէ ուրիշ ի՞նչ բաներ գոյութիւն չունին:

— Այո, — ըսի աւելի ու աւելի աշխուժանալով, — կը ժխտեմ նաեւ գոյութիւնը հեռագոյութեան եւ ժամանակին: Երկուքն ալ պատրանքներ են, որ մեր միտքը կը ստեղծէ: Աշխարհի վրայ ամէն ինչ կեցած է:

— Ըսել է ժամանակ գոյութիւն չունի՞:

— Մի՛ վրդովիր, ժամանակ իրկապէս գոյութիւն չունի: Առնենք վայրկեանը եւ անոր յարաբերական տեսողութիւնը շորս տեսակի անձերուն հետ: Երազողի մը համար, վայրկեանը երբեմն տարիներու տեսողութիւն ունի: Հետո չեթանք: Որքան՞ տեսնէ ի վեր հոս ենք, կը կարծես:

— Քառորդ ժամ մը եղաւ կարծեմ:

— Տեսա՞ր, ճի՛շդ քառասուն վայրկեան կ'ընէ, որ հոս ենք: Հաճելի խօսակիցի մը հետ, ժամանակը շատ շուտ կ'անցնի, մինչդեռ սափրիչին քով, կէս ժամը կարծես երկու ժամի կ'երկարի:

— Ատիկա չի փաստեր, որ ժամանակը գոյութիւն չունի, — առարկեց:

— Ես՛ հիմա փաստեցի, որ ժամանակը պատրանք մըն է, իսկ երբ հեռագոյութիւն չկայ կ'ըսեմ, դարձեալ հաւատա՛խօսքիս: Օրինակի համար, տեղէ մը

ուրիշ տեղ երթալու համար պէտք է նախ այդ հեռաւորութեան կէտը կարես, այնպէս չէ՞ :

— Այնպէս է :

— Ուրեմն այդ կէտին հասնելու համար, պէտք է այդ կէտին կէս ճամբան կտրես, ապա այդ կէս ճամբուն կէտին կէտը... կը հասկնաս, ու այս ընթացքով կը հասնիս տեղ մը, ուր կը տեսնես թէ կեցած ես... տսկիս տնուշտ գիտուհան տեսութիւն մըն է :

— Ուրեմն ամէն ինչ պատրանք է, խարուսիկ է, սուտ է, սխալ եւ թի՞ւր :

— Ո՛չ, — ըսի, — իրականութիւններ կան: Ինչ որ տեսական կը կրկնուի, իրական է: Օրինակի համար, արեւը, որ ամէն օր կը ծագի, յարարերական իրականութիւն մըն է, սակայն բացարձակ չէ, կրնայ ըլլալ որ օր մը արեւը չծագի :

— Այսօր իենթ քաներ կը խօսիս, նոյնիսկ թէական կը գտնես արեւին գոյութիւնը, ուրեմն եթէ արեւը օր մը չծագի, ի՞նչ բանի կը վերածուի տիեզերքը :

— Տիեզերքը մի՞տք է, — բացատրեցի ժպտելով, — մտածումն է, որ գոյութեան հասկացողութիւնը կու տայ: Մտածելը՝ գոյութիւն ունենալ է :

— Իսկ ի՞նչ է հոգին :

— Հոգի՞, հոգի գոյութիւն չունի, — ըսի մինչեւ մըտքը պարպելով դաւաթը :

— Իսկ չէ՞ որ կ'ապրինք :

— Այո՛, կ'ապրինք, մեր սիրտը արեւնի շրջանը կը կստնաւորէ, իսկ ուղեղը կը ղեկավարէ ջիւղերը: Ինչպէս ծառը կը ծաղկի, ինչպէս աղբիւրը կը բխի: Ասոնք յարարերական իրականութիւններ են, իսկ ասոնցմէ վեր՝ կայ միտքը: Քու կարծիքովդ ի՞նչ է միտքը :

— Մի՞տքը, — դարձացաւ, — միտքը ուղեղն է :

— Կը սխալիս, ինչ որ դուն կը հասկընաս հոգի ըսելով, միտքն է ասիկա: Կը կարծե՞ս, որ դանկին մէջ կոպուած այդ մասկոյտը ըլլայ միտքը: Իմ կարծիքով միտքը մեր մարմինին մէջը չէ, եթէ մէջը ըլլար, կրնայինք տեսնել մեր

ներսիդին: Ոչ ալ դուրսն է, քանի որ չենք տեսներ մեր արտաքինը: Սակայն, եթէ կը հաւատաս մտքի արտացոլումին, պիտի տեսնես, որ երբեմն միտքը կը զատուի անշարժացած մարմինէն, թեւեր առնելով կը բարձրանայ՝ թեթեւ ամպի մը նման: Այն ատեն է, որ կը տեսնես ինչպիսիք պատկած, անշարժ: Այս երանելի վիճակը շատ քիչերու շնորհուած է, բարի, անմեղ մարդոց :

Սպասեակը եկաւ ու դաւաթները տարաւ :

Արեւը սկսաւ սուղուիլ ծովու հայելիին մէջ :

— Քանի որ անմեղ մարդոց մասին խօսեցար, կ'ուզեմ իմանալ, թէ ի՞նչ կը մտածես դրսուտի եւ դժոխքի մասին :

— Գո՞տիւք, դրա՞խտ, ապուշութիւններ են ասոնք, — ըսի, — ինծի համար, երջանկութիւնը պայմանաւորող մէկ օրէնք կայ. «Ինչ որ ցանկես, այն կը հընձես»: Ասիկա է դրսուտն ալ, դժոխքն ալ :

— Ուրեմն այդպէսով կը համարձակես միտել նաեւ Աստուծոյ գոյութիւնը :

— Ո՞ր Աստուծոյ, — դարձացայ :

— Ան՝ որ ստեղծած է տիեզերքը :

— Տիեզերքը մէկը չէ ստեղծած, — ըսի, — տիեզերքը յաւիտենական այժմէութիւնն է, տիեզերքը կայ, գոյութիւն ունի եւ պիտի ունենայ: Գիտե՞ս, Աստուածաշունչի առաջին բառերն են ամենամեծ ճշմարտութիւնը որ երբեքից արձանագրուած ըլլայ դրքի մը մէջ. «Սկզբանէ էր Բանն եւ Բանն էր Աստուած եւ Աստուած էր Բանն»: Աստուածը այստեղ, այն ասեղ զատուորը չէ, որ աշխարհի բազմապիսի կրօնականները կը ներկայացնեն, ո՞չ, այլ այսքան կատարեալ եւ օրինաւոր հիմերով գոյութիւն ունեցող տիեզերքն է :

— Ուրեմն շեռ հաւատար նաեւ Աստուծոյ :

— Աստուծոյ կը հաւատամ, — ըսի հանդարտեցնելով վրդովուած ընկերուհիս, — բայց այն Աստուածը, որուն ես կը հաւատամ, քու պաշտած Աստուածդ չէ: Ես կը հաւատամ այն Աստուծոյ, որ

դոյութիւն ունի սիրտըն, տիեզերական  
 ձգողութեան հետ: Նոյնիսկ անոր, որ ես  
 կը հաւատամ, չեմ ուզեր տալ Աստուած  
 տնունը, չնսեմացնելու համար անոր հը-  
 մայքը: Որովհետեւ, չեմ հանդուրժեր,  
 որ իմ հաւատացած Աստուածս շփոթեմ  
 քու պաշտած Աստուծոյդ հետ, որ վրէժ-  
 խնդիր է, ոխակալ, քու Աստուածդ, որ  
 հողարուսր տարիներէ ի վեր կաշկան-  
 դած է խեղճ մարդկութեան միտքը: Փի-  
 լիսոսիայութեան մէջ, Աստուած՝ հաւա-  
 սար է անսահման տաւելութեանց, այ-  
 սինքն՝ կատարելութեան: Իր բազմաթիւ  
 աստուելութիւններէն մէկը՝ էր անստար-  
 կելիութիւնն է:

Մեկերուհիտս դէմքը իր հազուամին  
 դոյնը ատու:

Բնաւ չէր երեւակայեր, որ իեղճ ե-  
 րելոյթովս կրնայի այսքան ամբարա-  
 ւան ըլլալ իր պաշտած կուռքերուն հան-  
 դէպ:

— Ինչո՞ւ այդպէս սժգունեցար, —  
 ըսի դարձացած, — երբ այնքան կը նո-  
 յիմ, կարծես ըսել կ'ուզես: «Վուրժքիս  
 վրայ տաքցուցի քեզ, օ՛ձ, որպէսզի այս-  
 պէս խայթե՞ս գիտ»:

— Խենթ, — ծիծաղեցաւ, — գի-  
 տե՞ս, տեղ մը գրուած է, ամէն մարդ  
 գրախտ կ'երթայ իր նախնարած ձեռով:  
 Ես միւսինար չեմ, որ ջանամ քեզ համո-  
 ղել, ոչ ալ մոլեռանդ կրօնամոլ մը: Ես  
 պարզապէս կոյր հաւատացեալ մըն եմ եւ  
 կը խնդրեմ, որ չփորձես հրաշքով մը  
 աչքերս բանալ:

— Դուն սիրուն ծիծեռնակ մըն ես,  
 — ըսի, — Հոտուէտ ծաղիկ մըն ես:  
 Չայնդ անուշ մեղեդի մըն է, իսկ հմայ-  
 քըդ՝ գինուցնող ըմպելի մը:

— Կը բաւէ, լաւ որ իմ դոյութիւնս  
 կ'ընդունիս, ան ալ մանրամասնութիւն-

ներով: Սակայն, վստա՞հ ես, չըլլա՞յ որ  
 դրամարանքներդ խարեն քեզ:

— Ատիկա ըսած են բոլոր փիլիսո-  
 փաները դարերու ընթացքին:

— Քիչ առաջ, հաղար փաստարկու-  
 թիւններով ուղեցիր ապացուցանել, թէ  
 ամէն ինչ անշարժ է: — Ըսաւ ընկերու-  
 հիս դիւթական ժպիտով մը ձեռքը դնե-  
 լով ձեռքիս վրայ, — չե՞նք կրնար ար-  
 դեօք փորձ մը ընել, տեսնելու համար,  
 թէ արդեօք մե՞նք ալ անշարժ ենք:

— Մենք կրնանք շարժիլ, — ըսի  
 ոտքի ելլելով ու հաշիւը դնելով սեղա-  
 նին վրայ, — քալէ՛, մե՛ղք որ այս ւս-  
 նուշ իրիկունով կ'ուզես տուն վերադառ-  
 նալ:

Քիչ մը քալեցինք ծովափն ի վար,  
 թեւանցուկ, մէլու շողակրատելով:

Վճռեցինք որ մեր ուղեղները արդէն  
 չափազանց բեռնաւորուած էին արօթեայ  
 հողերով: Իզրակացուցինք, թէ արդէն  
 երջանիկ էինք, երկուքով, առանց բնու-  
 թեան եւ տիեզերքի զաղտնիքներուն թա-  
 փանցելու պէտքը զգարու: Սակայն, մեր  
 երկրային կեանքի ապագան հաստատ  
 հիմերու վրայ դնելէ առաջ, ընկերուհիս  
 ուղեց կարծիքս շօշափել հանդերձեալ  
 կեանքի մտաին:

— Ի՞նչ հանդերձեալ կեանք, — դար-  
 մացայ, — միտքը չի մեռնիր, մարմինն  
 է, որ կը մեռնի ու կը փոշիանայ:

— Իո՞վ մի՞տքը:

— Միտքը կը վերածնի:

— Թերեւս դուն կը զգաս նախորդ  
 կեանքերէդ մի քանին, — ծիծաղեցաւ,  
 — սակայն ես, կարծես առաջին անգամ  
 է, որ ծնած եմ:

— Ես ալ ճի՛շդ քեզի պէս, սակայն  
 երբ մէկը վերածնած է Հարիւր անգամ,  
 հաղար անգամ, միլիոն անգամ, ինչպէ՞ս  
 կ'ուզես որ յիշէ իր նախորդ կեանքը:

Ս. Ս.

### ՀԱՂՆ ԻՄ ԱՆԻՒՆԻ

Ի՞նչ պիտի լինի արդեօք անիւնն իմ տառապակոծ  
 Երբ փոշիանայ,  
 Որպէս հող միայն դամբա՞նը ծածկի մի նոր մտեալի,  
 Արգասանց արտի ակօսների մի մասնի՞կը լինի,  
 Կամ իր գրկի մէջ բնէն ծաղիկներ պիտ' անեցնի՞,  
 Թէ որպէս շագախ հողն իմ խառնուելով ուրիշի հողին  
 Պիտի կանգնեցնի ապարա՞նք մի պերն,  
 Լոյսի մի տանա՞ք, թէ մի խրհիք խեղճ,  
 Էհ. այդ ով գիտէ,  
 Իսկ եթէ հարցնեն փախա՞նք իմ սրտի  
 Առանց տատանման պիտի ասեմ ե՛ս —  
 Որ կ'ուզեմ միայն գինետուն դառնալ,  
 Այնտեղ, ուր մարդիկ չեն տեսնում աշխարհն  
 Այնքան սեւ՝ որ կայ,  
 Այնտեղ, ուր մարդիկ վերացած ու խենք,  
 Սրտները մի պահ թեթեւ պիտ' զգան,  
 Այնտեղ, ուր տեհն է անգաղար հոսում՝  
 Խաղաղեց մարդկանց հոգիների մէջ,  
 Այնտեղ, ուր կեանքն է ուրախ ու խնդում  
 Այդ գինետունն է միայն, գինետունն,  
 Օ՞ր, թէ գինետուն դառնայ հողը իմ  
 Հազար-հազարներ իմ գրկում իրենց  
 Տաւը չեն զգայ,  
 Այնտեղ վիշտ ու հոգս մեռել են,  
 Այնտեղ խեղճ է լոկ ներկայ,  
 Ա՛հ... թէ գինետուն դառնար հողը իմ...

ՌԻՄԱ ԳԱՌՕՆԷ

ԱՐԱ ԱՐԾՐՈՒՆԻ

**Ա Ղ Ո Ւ Ո Ր    Ճ Ա Մ Բ Ա Ս**



Պատանեկան օրերուս, երբ տակաին նոր ոտք կը դնէի զարմանալի դէպքերով լեցուն աշխարհէ մը ներս, երբ կը հանդիպէի գուարթ ու տխուր գոչներու, կը սիրէի թուղթին յանձնել մտածումներս, մանաւանդ այն մտածումները, որոնք չէի կրնար արտայայտել հրապարակաւ :

Կը գրէի ինծի համար՝ ձերբագատուելով զիս չարչրկող միտքերէն. կը գրէի վանկու համար սրտէս աշնանաբոյր ծաղիկները :

Թուղթերը կը դիզուէին դարակիս մէջ :  
Զարմանալի. թուղթերու դէզին հետ մեծցաւ տխրութիւնս, մինչեւ այն օրը, երբ առաջին սիրոյս հետ միասին՝ եկաւ այն աղջկան բուխ խնդու-  
քը ու ինկաւ տխուր թուղթերուս փռչիմներուն վրայ :

— Բայց այս թուղթերովդ կը թունաւորես մթնոլորտդ. — փսփսաց, սահելով թելերուս մէջ :

Ժպտեցայ : Իսկ ան՝ խանգաղատանով լի չարանքնի ժպիտ մը գծեց աչքերուն մէջ .

— Պիտի այրեմ թուղթերդ, անմիտ սպայ... :  
Իր տաք համբոյրներուն տակ մախրացան թուղթերս :  
Պարպուած դարակիս մէջ դրի աղջկան լուսանկարը ու նայեցայ պա-  
տուհանէս դուրս :  
Գարունը իր լիութեան մէջ կը խայտար... :

\*\*\*

Նոր վէպ մը սկսած էր ինծի համար. անգիր վէպ մը, որուն համար-  
ները կը սկսէին ազդիւրի մը կարկաչէն, բզկտի ու ծաղիկին համբոյրէն,  
կարմիր լոյսերու եւ այրուող այտերու հպումէն... : Վերջակէտ չունէր մեր  
վէպը, անհատնում ստորակէտներու երջանիկ յաջորդականութիւն մըն էր ա-  
նիկա :

Այդպէս կը կարծէինք... :  
 Մի հարցնէք, թէ ինչո՞ւ, կամ ինչպէ՞ս յանկարծ վերջակէտ մը փակեց վէպը :  
 Փոքրիկ լուսանկարին մօտ սկսան անիլ նոր թուղթեր :

\*\*

Տարիները սահեցան : Գիտակցութիւնը սանձեց թռչեցները : Պարտաւորութիւնները մոռցնել տուին միտքեր թուղթին յանձնելու սէրը : Երեխաներու ծիծաղը արծազանգեց . գահունակութիւնը խայտաց արտերուն տակ . մարեցան կիրքերը . ճանճուրջ :

\*\*

Քաջի դարակու . նկարներու եւ յիշատակներու ղէգեր կային հան : Թօթեցի փոշիները անոնց վրայէն ու որոշեցի «գրել փորձել» :  
 — Ճանճի՛մ, սա գրելու *սէլտարէզ վազ* անցիր, *չուրխ-չոճուրխ* տէր մարդ եւ այլեւս, — խրատեց առեւտրական տարեց ազգական մը :  
 Չպատասխանեցի :

\*\*

Պաշտօնակից բարեկամս՝ Յովհաննէս գրասէր էր : Առաջին պատմըւածքս տուի իրեն : Կարդաց : ժպտեցաւ .  
 — Գէշ չէ, — ըսաւ, — բայց այնպիսի սխալներ եւ ըրեր, որ իսկապէս կը զարմանամ : Ռոշ շրջան մը պէտք չէ գրես, այլ պէտք է միայն կարգաս . կարդաս՝ ողջափ որ կրնաս : Եթէ կ'ուզես կէտօրէ ետք երբանոք բարեկամի մը գրախանութքը, լաւ գլխէք ունի :  
 Կացի՛նք : Գնեցի գիրքեր : Կարդացի : ժամանակ մը ետք . հոր գրութիւններ ներկայացուցի «անձնական քննադատիս» :  
 — Կամաց-կամաց կ'ըլլայ կոր, — ըսաւ :

\*\*

Գիշեր մը, երկու տետրակներ դրած թելու տակ՝ գացի քրտն տունը : Քեռայրս գրագած էր ընթերցանութեամբ :  
 — Գիտե՛ս, երկու տարիէ ի վեր գրելու փորձեր կ'ընեմ, — ըսի, — ահա, բերած եմ զբաններս, որպէսզի կարդաս :  
 Զարմացած՝ հայեցաւ տետրակներուս . ապա՝ աչքերուս :  
 Վերապահ մարդ էր . բան չըսաւ :

\*\*

Շաբաթ մը ետք հարցացի .  
 — Է՛հ, ի՞նչ է կարծիքդ :  
 Պահ մը մտածեց .  
 — Լաւ կ'ըլլայ, եթէ տետրակներդ յանձնենք «Բաղին»-ի խմբագրութեան, — ըսաւ, — մեր Պողոսը կը հանչնա՞ս :



- Շատ լսած եմ իր մասին, բայց անձնապէս չեմ ճանչնար:
- Լաւ էնմադաւտ է, — ըսաւ, — հասկցող, խիստ, բայց ինչ մը ժըլխտական:
- Վնաս չունի. — ըսի, — կը նախընտրեմ որ խիստ ըլլայ:
- Լաւ, այն ատեն տետրակներդ կը յանձնեմ Պօզոսին:
- Ուրախացայ այս կարգադրութեանը համար.
- Իսկ ինչ կարծիքդ ի՞նչ է, — հարցուցի:
- Պօզոսը երբ կարդայ, պէտք եղածը կ'ըսէ:
- Վերապահ մարդ էր. բան չըսաւ:

\*\*

Երկու շաբաթ ետք, քեանայր յայտնեց, թէ պատմաւածքներդ կարդացած եմ, ու կէսօրէ ետք, ժամը հինգին պէտք է հանդիպիմ *«Բարդին»*-ի խմբագրատունը:

- Անհամբեր էի: Գացի:
- Նիհարակազմ, քիչ մը քոյակն շարժումներով երիտասարդ մը ընդունեց զիս:
- Պարոն Պօզոսը կ'ուզեմ տեսնել, — ըսի:
- Ես եմ, — ըսաւ, — ի՞նչ կայ:
- Շատ հաճելի չքուցեալ խօսելու խիստ ձեւը:
- Ես Օննիկին կոչվեցի կա՛ գամ: Երկու տետրակներ յանձնած էր ձեզի...:
- Հա՛, այո՛, հասկցայ, նստէ՛:
- Նստայ:
- Սիկարէթի նմոթկուած տուփ մը հանեց գրպանէն, հրամցուց:
- Շնորհակալութիւն, չեմ ծխեր. — ըսի:
- Ձծխող, շիմազ, չը... *Քիփերը* չեմ սիրեր, ատանցմէ բան դուրս չի գար. գրականութիւնը մօլի, մօլեռանդ, տարականոն մարդոց գործն է: Եփոքեցայ:
- Ես ամէն ինչ կը սիրեմ ընել, — բռնովեցի, — բացի՛ ծխելէ:
- Ժպտեցաւ:
- Հիմա գանձ բա՛ հարցիդ, — ըսաւ, — ուրախ եմ որ երկու տետրակով կը ներկայանաս: Կը նշանակէ, թէ աշխատած ես. առանց երեսնալու փառաստե՛նչութեան. ասիկա լաւ է, աշխատողը կը յաջողի:
- Ինքնավստահութիւնս վերադարձաւ.
- Պարոն Պօզոս...:
- Սա «Պարոն»էն *վայ* անցիր: Հաս պարոն-մարոն չկայ:
- Մտերմութիւն մը զգացի իրեն հանդէպ:
- Պատմաւածքներդ մէկը ուշադրութիւնս գրաւեց ու սրբագրեցի, — ըսաւ, բանալով առաջին տետրակս:
- Տնկուցայ: Եթէ Հիւկոն մեր մօտը ըլլար, անկասկած պիտի կրկնէր իր նշանաւոր խօսքը: Այո՛, կարծէ՛ք բուրբն էր անցեր պատմաւածքիս վերայէն: Սրբագրութեան կարմիր գիծերը աւելի շատ էին. քան իմ գուրգուրանքով ընդօրինակած կապոյտ գիրերս: Կատարեալ ջարդ մը տրուած էր պատմաւածքիս:
- Աւելորդ բացատրութիւններ շատ կան, — ըսաւ Պօզոսը, — օրինակ, այստեղ գրած ես. *«Տեսայ կիսամերկ աղջիկը՝ բնկողմանած սննեա-*

կին մէջտեղ դրուած տիւանին վրայ: Փայլփրուն ջահերէն փախչող լոյսերը ինկած էին թաւշեայ վարտոյրիներուն վրայ: Պատերը ծածկուած էին իւրաներկ նկարներով: Բարձերը...», եւայլն, եւայլն: Չեղա՛ւ... Մօ՛, տա՛քարիւն տղան կիտամերկ ազջիկ մը տեսնելէ ետք կը կեմայ տակաւին ու ջահեր, վարագոյրներ, բարձեր ու նկարներ կը դիտէ, թէ ուղղակի կ'անցնի գրտի...: Չէ՛, չեղաւ: Այդ տղան անմիջապէս պիտի մտածէ ուրիշ բանի մասին...: Հասկցա՞ր:

Հասկցայ: Բացատրութիւնը տպաւորիչ էր:

Կարմիր մատիտը անցած էր միջանկեալ նկարագրութիւններու վրայէն. ազան ներս մտնելուն պէս... անցած էր գրտի:

Պողոթը խօսեցաւ: Կրճատ էր: Յանախ ձեռքը կը գարնէր սեղանին. կը հասկնայի, թէ կտրուկ պէտք է ըլլայի նկարագրութիւններու մէջ: Սրտնեղած կը բռնար թեւերը... «չեղա՛ւ...»: Ուները կ'ամփոփէր, ձեռքերը կը մօտեցնէր կուրծքին, քննուր տեսարան մը կը բացատրէր:

Յանկարծ դադրեցաւ խօսակցութիւնը: Ելաւ ստի:

— Երբեք յոյսանոց: Մէկ կողմէն խօսիմք, միւս կողմէն՝ սուրճ եփենք:

Այդպէս մտերմացանք: Շուտով եկան «Բաղին»-ի միւս սլատախանաւումները: Հանելի մթնոլորտ մը կար հոն: Կարծէք շատոնց եղած էի իրենց հետ. կամ, աւելի ճիշդ, հին օրերէն եկող՝ բայց ընդհատուած տաճարքան մը վրայ հոր կամուրջ մը կը նետուէր:

«Բաղին»-ը հոգեկան տուն մը դարձաւ ինծի համար:

♦♦

— Քառասուն տարի է մազ կը ներմկցենք շուկայի վրայ, տղա՛ս, — բացազանչեց անուարկան ազգականս, — դուն խօսքս մտիկ ըրէ, վա՛ղ անցիր այս գրեթէ սկզբալէջ, թէ ոչ, օր մը դուն ալ անօթի կը մեռնիս՝ այդ խնդրալիք բաներ գրող պայտեցի մարդուն նման...:

♦♦

Առաջին գրութիւնս տպուեցաւ «Բաղին»-ի մէջ, կեղծանունի մը տակ: Երբ կարդացի տպագրուած գրութիւնս, առաջին զգացումս եղաւ գոհունակութիւնը: «Ծառ շոյուած էր. հանելի էր: Անմիջական հակադրեցութիւն. պատասխանատուութիւն մը զգացի: Պէտք է կոկէի ինքզինքս:

Նոր աշխատանք. հոր դէպքեր. հոր էջեր:

Ճամանակը կ'անցնէր: Էջերը կը շատնային:

Մտածեցի պատմութեանս ամփոփել գիրքի մը մէջ:

♦♦

Բարեկամներս ուրախութեամբ ընդունեցին որոշումս: Մտագրութիւնս անոնց յայտնելէ առաջ, անկասկած պիտի վազէի քեռայրիս մօտ, եթէ անակրկալներով լեցուն այս կեանքը ընդմիջտ մեզմէ բաժնած չըլլար գայն: Լաւ գիտէի, թէ իր վերապահ խառնուածքին տակ պահուած էր անկեղծ սիրտ մը, ու կ'ուշախանար տեսներով խանդավառութիւնս: Լաւ գիտէի, կը տեսնէի իր փայլող աչքերը:

Երբ ծրագիրս յայտնեցի Պօղոսին, ըսաւ.

— Լաւ է. հրատարակէ՛, բող ընթերցողները հաւնին, չհաւնին, գո-  
վեն, բզկտեն: Գիրքի հրատարակութիւնը տաշուելու շուագոյն միջոցն է:

Կարն պահ մը ինկաւ մտածումներու մէջ. ծխախոտ մը հանեց նմրոք-  
կըած տուփէն. վառեց. ծուխը փչեց դէպի առաստաղ: Յանկարծ լայն ժը-  
պիտ մը գծաւեցաւ դէմքին վրայ:

— Լաւ է, — կրկնեց, գարմանալի նայուածք մը գամելով աչքերուս,  
— այս կը նշանակէ, թէ վարակուած վերջացած ես. ետ-դարձ չկայ այլեւս:  
Հրատարակէ՛, մտիր լուծի սակ: Ճաշակէ նաեւ գիրք հրատարակած ըլլալու  
տառապանքը:

Իր բառերը դաժան էին դարձեալ. բզկտում, լուծ, տառապանք: Բայց այնպիսի ռոճով մը կը փոխանցէր այդ խօսքերն ու միտքերը, որ ամէն  
ինչ հրապարիչ կը թուէր ինծի ու կը բարձրացնէր կորուստ: Եթէ չըլլային  
իր քաջախիտանքները, խստութիւնն ու քիթու անկեղծութիւնը, գրութիւններս  
անկասկած սիրտի մնային դարակներուս մէջ՝ իբրեւ անձնական թուղթեր:

\*\*

— Ի՞նչ, գիրք հրատարակել, — գարմացաւ առեւտրական ազգա-  
կանս, — խենթացա՞ր, ի՞նչ է: Ա՛յդ էր պակաս: Տղա՛ս, խելից գլուխդ հա-  
ւսէ: Ի՞նչ պիտի շահիս գիրք գրելով: Հարի՛ր ոսկի... երկո՞ւ հարիւր:  
Զարժելը, տղա՛ս, չարժեք այդ քանի մը ոսկիին համար այդ գործը ընել:  
Վաղ անցիր այս սեվտայէջ:

Զպատասխանեցի: Եթէ ըսէի, որ քանի մը հարիւր ոսկիի գումար մը  
կը կորսնցնէի գիրք հրատարակելով, թերեւս սիրտը դադարէ բարախել:

\*\*

Հանելի մթնոլորտի մը մէջ անցան աշխատանքները: Լաւ մարդոցմով  
շրջապատուած էի: Ու ահա ամիսներ ետք պատրաստ էր գիրքս: Առի՛ ձեռ-  
քս: Այո՛, յուզանցայ միջոց այնպէս՝ ինչպէս յուզանցայ այն օրը, երբ ծը-  
նաւ անդրանիկ գաւակս:

\*\*

Մանկութի՛ւն, պատանեկութի՛ւն...:

Երկու ճամբաներ, որոնք դեղնած թղթածրարներու վերածուած՝ կը  
քղթատուին սրտիս մօտ:

Ու ահա ճամբան երիտասարդութեան՝ իր անհատուած հրանգնէրով:  
Ճիշդ է, թէ անծայրածիր է աշխարհը, ու նաեւ անհաշուելի են իր  
լանգրուանները, բայց ես կըցած եմ ամփոփել ապրած օրերուս երեք հան-  
գրուանները մեր յզմատանջ քաղաքի ճամբաներէն մէկուն մէջ, ու հոն դը-  
բած մանկութիւնս, պատանեկութիւնս ու երիտասարդութիւնս:

Մառախիտ, երագային ճամբայ մըն է անիկա, որ կը սկսի մեր քա-  
ղաքի հասարակաց պարտէզին մօտէն ու կը հասնի Համրա Քաղամասի  
սկիզբը:

Կը սիրեմ այդ ճամբան...:

Տարիներ առաջ՝ մանկական անհոգութեամբ կը վագէի ընկերներու հետ հանրային պարտէզէն դուրս, դէպի աւագուններու ամայութիւնը, փըշտ տղամաքաւզեր հաւաքելու: Տարիներուն հետ միասին, մանկական զըւարթ օրերու նման անյայտացան նաեւ ազամաքաւզի քուփերը ու նոր բացւած համբասներու կողքին բարձրացան տնակներ, ապա՝ շէնքեր, քաղաւտեր...:

Սկան պատանեկան օրերը:

Հանելի էր անցնիլ մանկութեան հին համբէն, պատանեկան նոր զգացումներով, զգալ՝ թէ նոր ուժ մը կը ծառայի կուրծքին ու մկաններու մէջ. զգալ՝ կեանքի նոր աւելի մը վագէր երակներուդ. զգալ՝ ազդիկներու նորաբոյս կուրծքերուն տակ տրոյտող սպասումը:

Իմ անցեալի աղուճը համբաս, պիտի չմտնամ ինձ...:

Կը սիրէի ըլլալ հոն՝ սիրած ազգական հետ: Կը սիրէի նաեւ ըլլալ առանձին, ու ծառերու նիւղերու շշուկներու յանձնել տխրալիւններ: Կը սիրէի պատսպարուիլ հոն՝ անձրեւտ օրերուն, ու մտածել ամպոտ երկնքին ու անսպարանքով դէպի տուն վագազ մարդոց մասին: Կը սիրէի ըլլալ անպլտութեան հետ:

Հիմա, երբ ամէն օր, երեկոյեան անցնիմ իմ համբէն ու հասնիմ հանրային պարտէզի ցանկապատիմ մօտ, իսկոյն կը մտնում առօրեաւ: Անկայկ մը կը նետեմ ամայացած պարտէզին, ու հին համբաներու դեղնած քղթած ծառերու վրայէն խորհրդաւոր հով մը կ'անցնի: Կ'անցնի՞, ու իրեն հետ քաղթի կտոր մը կ'անցատուի ամբողջութեանէն, կը բամայ հին յուշի մը վագոյրը: Մերք ուրախ, մերք տխուր, պատանեկան կամ մանկական տեսարաններ կը գծուին աչքերուս առջեւ...: Կը հալեմ՝ տխուր կամ ուրախ ժողով մը շրթներուս. կը հալեմ... կը յիշեմ ծառերուն հին շշուկը. կը յիշեմ մեկնող ազգական անհոգ ծիծաղը, որ օր մը խեղդուեցաւ իր արցունքոտ աչքերու հայելիին. կը յիշեմ հին մեծութիւնս...: Ու տես, բարի ժողով մը կ'ու գայ ու կը թառի տխրութեանս վրայ. կը ջնջուի յաւտ կորստած ազգըկան թախիծը: Կը ժպտիմ...: Մեր ժպտները կը վերածուին նոր կեանքի. տես մանկական ծիծաղներ կը ծնին մեր համայնքներէն, երջանկութիւն մը կը նետուի առաջ. կեանքս է, որ կ'անցնի իր գունագեղ համբէն...:

Կը սիրեմ ինձ, իմ հին ու նոր, աղուճը համբաս:

Ինքնաշարժներու ճշակները կը յիշեցնեն, թէ հասած եմ Համբաս: Կը դադարին մտածումներս ու յաջորդ օրուսն երեկոյեան համար դարձեալ կը ժամադրուիմ իմ համբասու հետ:

\* \*

Անա՛ դարձեալ հանրային պարտէզի ցանկապատիմ մօտն եմ, քեանցուկ իմ առաջին գիրքիս հետ: Աշնանային հովը համ է դարձեալ ու հանգարտած կ'իջնէ դեղնած քղթածրարներուս վրայ: Կը ժպտիմ ու կը նայիմ գիրքիս...:

Կը հալեմ նոր ընկերոջս հետ: Նո՞ր. բայց ո՛չ, շատ հին ընկեր մըն է ան, որ լոյսի գալու համար անհանգիստ կը սպասէր իմ մատներուս ծնուցիչ խնամքին:

«Անա եկաք, բարեկամ, բարձր եկար: Գիտե՛ս, ումնեմ ծիծաղեցան իւր տեսան երկունքս ու ծնունդդ: Ծիծաղեցան, ու ամբարտաւանութեան ախտեր վերագրեցին ինձի: Բայց, ինչպէ՞ս չծնէիր դուն, երբ լոյս տեսնա-

ցող բազմաթիւ խռովքներ կ'ալեկոծէին, երբ կար սրբութիւնը, կա'ր հացի ու առօրեայի մտահոգութիւնը, կային դասագիրքերը, որոնք կը ճգմուէին աշխատանքի մը մեքենաներում ակաակներում տակ. կա'ր Կազանդ պապուկը, որ խտրականութիւն կը դնէր փոքրիկներու միջեւ. ու կա'ր սէրը, բնկերութիւնը, արհամարհանքը, ու օտար մայքեր, ամծանօթ երկինք, ու տակաւին սէր՝ դէպի եռաւոր հայրենի լեակը, լեռը, գետը... ու կարսըււած, առաւօտեան արգանդին մէջ վիժած արշալոյսները բոլոր... :

«Կը ներես, եթէ բոլոր այս յոյզերէս ետք՝ մնացիր անկատար: Ատոր համար է արդեօք, որ չէ հանդարտած սիրտս. դուն միայն մէկ մասն էիր այն անհատում ապրումներուն, որոնք ամէն օր քերք առ քերք կ'անցատւէին աշնանային հովին համբոյրէմ: Ոչինչ է փոխուած, ոչինչ սիրտս դարձեալ յոյ է նոր յոյզերով, նոր պոռթկումներով...»:

Ինքնաշարժի հչակները կը յիշեցնեն, թէ հասած եմ Համրա: Կը թռդում ծառախիտ ճամբաս ու կը դառնամ աջ:

Համրայի լոյսերը կը յիշեցնեն կեանքի իրականութիւնները: Վաճառատները՝ իրենց ցուցատախտակներով՝ կը դիտեն զիս: Կ'անցնիմ:

Կը կենամ առաջին սրճարանին մօտ, կը դիտեմ էակները, որոնք կը հոսին մայքերու վրայէն: Կը ծպտիմ: Գեղեցիկ է կեանքը: Ինչպէ՛ս համբերել, ինչպէ՛ս չպարպուիլ. չպոռկալ, չպոռալ՝

Կը սիրեմ քեզ, կեանք... :

Կը սիրեմ ձեզ, լոյսեր իմ քաղաքիս, որ ձեր շիքերը կը նետէ անցողիներու դէմքերուն վրայ, կը բանաք, ծալքերը հոգիներուն: Կը սիրեմ շեզ, ո՛վ կարճագոյնս գեղուիներ, ու քեզ՝ ստահակ, որ անյագ աչքերով կը դիտես անցնող սրունքները... : Կը սիրեմ քեզ, կի՛րք, որ կը սպաննես յմրութիւնները կեանքի. ձեզ, ո՛վ ատելութիւն, կեղծիք, ծպտիտ եւ արցունք, որ կը գունաւորէ կեանքը. ու քեզ, ընկերութիւն, որ կազմաւորութիւններովդ կ'օրօրես մեզ: Ողջո՛յն, ողջո՛յն քեզ, մաքրամաքուր քաջիծ հայրենի՛ կարօտ ու սպասում... : Ու ողջո՛յն բոլոր անոնց, որոնք շնչեցին, սիրեցին կամ հարուածեցին զիս, լեցուցին սիրտս, սեղմեցին... :

Ահա կը քալեմ իմ հին ու նոր, պղուտ՝ ճամբէս ու սիրտս դարձեալ յոյ է նոր յոյզերով :

Ա. Ա.



Ք Ա Ռ Ե Ա Գ Ն Ե Ր

Ժպիտներիդ ծաղկեփունջը ի՞նձ ես բերում, —  
 Նոր դարդեր ես, ինձ բերում,  
 Թախծներիս դեղին խուրճը քեզ եմ տալիս, —  
 Կառ վարդեր ես ինձ բերում.  
 Համեստութեան վայրկեաններում  
 Կապոյտներ ես դու փնտռում,  
 Գիշերային սեւ ծաղիկը քե՛զ եմ տալիս, —  
 Արեւներ ես ինձ բերում:

\*\*

Անշրպեօտի պարզութիւնով, մեզ ես ժպտում մանկութիւն,  
 Երջանկութեան փողոցներից, մեզ ես ժպտում մանկութիւն,  
 Պարզութիւնի սկունքները անապատում՝ մտռացուած  
 Դո՛ւ մանկական պարզութիւնով, մեզ ես ժպտում մանկութիւն:

\*\*

Ամառնային տօքը մայրերին, — գարունը մի երա՛գ է,  
 Ուտ չփոխած՝ դալուկ աշուն, — գարունը մի երա՛գ է.  
 Ծիծեռաքեւ իմ մանկութիւն, արի բեւեմք, հեռաճա՛նք, —  
 Հասնեմք հեռո՛ւ պարզութիւնին, որ գարուն է... գարուն է:

\*\*

Կամենո՞ւմ ես կեանքը փոխել, — արի՛, փոխիր,  
 Կամենո՞ւմ ես դուր դատել, — արի՛, դատիր,  
 Թո՞ղ մի քայլ էլ կեանքը չեզոքով ընթանայ,  
 Կամենո՞ւմ ես մարդկանց վախել, — ե՛րբդ փոխիր:

\*\*

Արշալոյսից կքած ցօղ,  
 Տօղուններին՝ լոյսի շող,  
 Կեանքը ուզեց, լինել վայրկեան, —  
 Կեանքի՛ կամքը կեանքին թող:

\*\*

Ինձ վիճակուեց կալիս նայել՝ կակաչ երգել,  
 Ես կամեցայ մքին լսել՝ արեւ երգել,  
 Ձե՛՛մ տատանում, ժամանակը կարն է, ծողի՛կ, —  
 Նախընտրել եմ՝ ուտքս ցեխում՝ աստղեր երգել:

\*\*

Ալ կակաչի թերթերի պէս լուս կը թափուես,  
 Մի՛ հառաչիլ՝ դու լոյսերում կը կակաչես,  
 Նոր գարուններ՝ գալիքներքի սար ու քարին, —  
 Բլրակներում չես կրկնրի՛ դու կակաչ չես:

\*\*

Իմ մկանից մոխիր մնաց, — որտե՞ղ մնաց Արշալոյսը,  
 Իս յագնեցի հաւատալուց, — որտե՞ղ է իմ Արշալոյսը.  
 Դու ասում ես՝ քեզ հաւատամ. — քե՛զ հաւատամ թէ հաւատալիս,  
 Ես սնում եմ գիշերներով. — կը խմեմ իմ Արշալոյսը:

ԹԼՀԲԱՆ

ԱՐՄԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ

Շ ՈՒ Ն Ս Մ Ե Ռ Ա Ւ

Թէպէտ մարդոց հետ շուտով չփման մէջ մտնելու կարողութիւնը չունիմ, բայց այս դրացիներու հետ արաք ծանօթացայ:

Գիմացի յարկաբաժինը կը նստէին տէր եւ տիկինը ու իրենց մէկ հատիկ չունը. լաւ մարդիկ կ'երեւային, իրենց չունն ալ լաւ էր. բնաւ զրոտ չհաջեց:

Ընդհանրապէս շէր հաջեր, բարի էր, «Սիթրոնէն»ի կը նմանէր, ցած եւ լայն մարմին մը ունէր ու կարճ ոտքեր. շատ դուրս շէր ելլեր, միշտ կնկան դիրկը կը դստուէր ու յաճախ տիրուհիին կուրծքը հոտուտելով զրոզած կ'ըլլար: Շատ կը սիրէր կաթը, օրական երեք անգամ շոքոլայով կաթ կը խմէր ու պարզ ջուրով խաշած միս շէր ուտեր, կը նախընտրէր ընտիր իւղով տապկուած միսերը, ու անոնց ալ տակը պէտք չէ այրած ըլլար: Հիւրասննեակի չուն էր:

\*\*\*

Կիրակի առտու մըն էր ու զուտաց: Ինչպէս ներս մտաւ՝ չեմ գիտեր, ճերմակ թաւիկնակով մը քիթը բռնած էր ու աչքերէն արցունքը հեղեղի պէս կ'իջնէր, հոնդուր-հոնդուր կուլար:

Դրացիս՝ տիկին Մարիան՝ այդպէս լալով արուս մը մօտեցաւ ինծի, երբ բազկաթոռին վրայ նստած զիրք մը կը կարգայի:

— Շունս մեռա՞ւ, — ըսաւ ու սկսաւ հեծկլտալ:

Գիրքը պոցեցի, իրեն նայեցայ. մաղերը խոնոտած էին, կոպերը կարմրւած: Լսած էի լացի ձայն մը, բայց չէի տնդրադարձած, թէ ինչո՞ւ համար էր. զարմացած՝ ղինք կը դիտէի. Ի՞նչպէս միթարէի, անա՞նկ սրտածմլիկ կերպով կուլար, կարծես լհարզս կը ճանկրտակէին:

— Ի՞նչպէս մեռաւ, — հարցուցի:  
— Օ՛, չեմ գիտեր, չեմ գիտեր:  
— Արդեօք անհանդի՞ստ էր:  
— Երեք օրէ ի վեր տաքութիւն ունէր:

Մտքովս անցուցի, որ անշուշտ վերմաստիճանին նայեցաւ ու պտտկերացուցի, թէ ի՞նչպէս ջերմաստիճանին նայեցաւ:

— Բժիշկի տանէիք, — ըսի:  
— Օ՛, տարի, դեղ գրեց, տուի, օգուտ չըբաւ, — պատասխանեց զուլը օրօրիլով:

Ետքը պատմեց, թէ ինչպէս ախորժակէ կարուեցաւ այս վերջին օրերը ու

սկսանք միասին մահուան գառճառները փնտռել: Արդեօք լուգանքէն ետք պաղ դետիներ պատկեցաւ, թէ ոչ պատշաճմբ արեւուն տակ շատ կենսալէն արեւահար եղաւ:

— Չըլլայ որ կերակուրը դպած ըլլայ իրեն, — ըսի:

Ի վերջոյ այն եզրակացութեան եկանք, որ սաստիկ տաքը կրնայ գլխուն ցարկած ըլլալ:

Երտակը ես ալ քիչ մը ցաւեցայ. ընդհանրապէս շուները չեմ սիրած ու նոյնիոկ կը վախճամ անոնցմէ, քանի որ միշտ վրաս հաջած են: Արդեօք, կ'ըսէի ինքիսինս, եթէ դեղեցիկ ըլլայի, դարձեալ պետի հաջէին: Բայց ատեն-ատեն ինձմէ տղեղները կը տեսնէի, որոնց ոչ թէ չէին հաջեր, այլ նոյնիսկ պոչ կը շարժէին, կը քաւէին: Ամբողջ կեանքիս մէջ միայն ա՛յո շունն էր, որ ինծի չէր հաջած: Երբ այստեղէն յարկարստին մը վարձեցի, հետուի հետու որ զիս տեսաւ, լուրջ նայուածք մը նետեց վրաս, գլուխը մէկ կողմ ծոնց, այն ատեն քիչ մը կարտպեա աղայի նմանեցաւ. ինքն ալ կարծես զիս ճանչցաւ, կարծես մտքէն անցուց, որ այս տղան տեղ մը տեսած եմ, իսկ երբ քովէն անցայ՝ չհաջեց. շատ սիրեցի չհաջելը: Իսկ յաջորդող օրերուն, երբ ծանօթացայ զրացիներուս ու երբ կնկան ըսի, որ ձեր շունը շատ սիրեցի, կիներ աւելի կապուեցաւ ինծի հետ, ու այնուհետեւ գրեթէ միասին եղանք:

Երբեմն շուկայէն շունին համար ալ ուտելիք կը բերէի: Կիներ շատ պո՛հ կը մնար ու միեւնոյն ատեն կը զանդատէր, որ ամուսինը շատ անտարբեր էր շունին հանդէպ:

— Դեռ օր մը իսկ շուկայէն բան մը չ'ենլով չէ բերած շունիս, — ըսաւ:

Կը ճանչնայի ամուսինը. այդ տունը վարձելէս հաղիւ երեք ամիս ետք մեռաւ, բայց կիներ բնու չ'ըսցաւ: Մարդը յանկարծամահ եղեր էր դիւերը ու աստու երբ գործի կ'երթայի, կիներ ըսաւ:

— Գիտէ՞ք, դիւերը ամուսինս մեռաւ, պէտք է Փիււրըրը հոս լուր տամ: Մարդիկը եկան ու տարին մեռելը: Իսկ հիմա, ամուսինին մեռնելէն մօտ հինգ ամիս ետք, կեանքը ձեր շուներուն, չո՛ւնն ալ մեռաւ. սակայն այս անգամ սուղը անմխիթարելի էր. բաւական աշխատեցայ մխիթարել զինքը, որ կեանքը ելեւէջներ ունի, ու մարդկային արարածը պէտք է պատրաստ ըլլայ կեանքի փորձութիւնները դիմադրաւորու, ու իրեն պատմեցի օգտնաւային ահուկի արկածներու մասին, որոնց հարիւրաւորներ գո՛հ դացած էին, անուշտ անոնց հետ շուներ ալ կային:

Բաւական նստելէն ետք, շնորհակալութիւն յայտնեց, պնաց. լայն շունը մը առի. մէկ շունի համար այսքան լացը խելքիս չէր պտուկեր:

Քրոջս հեռամայնեցի:  
— Գնա՛, — ըսաւ, — այցելութիւն տուր, անոնք կը սպասեն:

Ուրեմն այցելութեան ալ պէտք է երթայի, ցուակցութիւններս յայտնէի: Ամուսինի մահը միտքս կու գար, գլուխս կը շարժէի. ինչպէս ալ կը դուրսդուրան շուն վրայ. ամուսինը դործէն եկեր է թէ չէ եկեր, հոգ չէր ըներ. մինչ շունը դիւրկէն չէր իջեցներ ու ամէն իրիկուն ալ դաշտերը օդափոխութեան կը հանէր: Ու վերադարձին՝ շան մասին խօսելիք մը կ'ունենար. «Մըանչելի՛ շուն մըն է. խելացի՛, ճարտար՛, ուշի՛մ»:

Օր մը, ելեկարական սիւնի մը ստորոտը միզելու ատեն՝ ոստիկանական ինքնաշարժը կը տեսնէ, անմխիթապէս գործը կէս ձգելով՝ սիւնին ետեւը կը պահուրարի:

— Հանճար է, հանճար, — ըսեր են ոստիկանները: Օր մըն ալ լուգաւորանին մէջ աղջիկ մը եւ տղայ մը լողուլու միջոցին համբուրուեր են. շունը տիրուհիին նայիք է. աչքերը շարանհօրէն կը պճլտան եղեր, ու դէմքին վրայ ալ ժպիտ կայ եղեր: Ասանկ բաներ կը սրտմէր ու կը համբուրէր շան դուռը:

Կ'երեւայ մարդը կա՛մ նախանձէն եւ կամ ղղայնութեան չկրցաւ դիմառաւ ու



մեռաւ. Լիլէ ես իր տեղը ըլլայի, տասը տարի առաջ կը մեռնէի:

Շուն մը կար մէջտեղը եւ ուրիշ եկած էր շեմ գիտեր: Կինը ամբողջ սրբորով կասուած էր շան ու հիմա ալ կ'ողբար անոր անդարմանելի կորուստը:

Ի՞նչ ընէի, պէտք է երթայի, բայց որոշեցի թան մը ուտել անանկ երթալ, քանի որ առտու եկած էր կինը ու հիմա կէսօր էր: Անօթի էի, բացի սառնարանը և պատրաստ կերակուրները աչքէ անցուցի. այս պէշ լուրին վրայ ոչ մէկը ստամոքսիս խօսեցաւ. կարծես մէկ անդամէն ախորժակս փախաւ. մտածեցի նախ երթալ:

Դուռը դարկի, բացաւ, գետ աչքերը կարմիր էին. լուռ ու խորունկ տիրութեամբ մը դիտ ընդունեց: Նստայ, ամէն կերպով կ'աշխատէի որ ձեւով մը խօսք բանամ, այս անպատախ ըլլորովին ցամբած էր միտքս:

— Շունս կ'ուշի՞ք տեսնել վերջին անգամ, — ըսաւ ու սպասեց որ այս ըսեմ: Ըսի:

Շունը, ննջարանը գորդին վրայ պառկած էր. ըսաւ մեռածի երեւոյթ չունէր. վերջին յարզանքս մատուցանեցի ու վերադարձայ անօթիս: Ետքը պատրաստութիւններ տեսանք շունը դերեզմանատուն տանելու. մօտ քան մը գոն հեռու շուներու յատուկ դերեզմանատուն մը պիտի տանէինք զայն:

— Աւելի մօտը դերեզմանատուն չունին շուները, — հարցուցի:

— Մեր շուներուն ընտանեկան դամբարանը հոն կը դանուի, — ըսաւ:

Ճար չկար, պիտի երթայի: Յիսուս ըսաւ, որ երկրորդ մղոնն ալ պէտք է քալէք, ու ես սկսայ քալել: Դրինք դիտելի Քատիլաքին դրան վրայ շորցած լորձուներ հետքերը, փղծկեցաւ:

Ըսի.

— Կը յիշե՞ս, երբ օր մը դրացի աղղկ եւ դէր կինը կը լողար, ձեր շունը անանկ գլուխը շարժեց, կարծես ըսել ուզեց, որ այդ աւազանը աւելի երիտասարդներու յարմար է:

Կինը նորէն փղծկեցաւ ու սկսաւ լալ:

— Կարծես պիտի չկրնամ միտքարւիլ, — ըսաւ:

Ի վերջոյ հասած էինք դերեզմանատունը: Գեղեցիկ կերպով շինուած էր, օւտանները գրուած էին, անոնց ծննդեան ու մահուան թուականներով: Տեղ մըն ալ այսպէս գրուած էր.

«ՃէյՔըպլըն ընտանիքին շուներուն դամբարանը»:

Ու մէկ-մէկ շուներուն անունները տակ տակ գրուած էին:

Հասանք մեր շունին ընտանեկան դամբարանը ու յուզումով ցուրտ հողին յանձնեցինք մատակարար ու հաւատարիմ կենդանիին անշունչ մարմինը:

Այդտեղ, յուզիչ դամբանական մը խօսեցաւ այս գրութիւնը ստորագրողը: Թաղումը կատարուեցաւ կէսօրէ ետքը, ժամը երեքը քառորդ անց:

Կինը նորէն լացաւ. գրկեցի մարմինը: Աղուար էր: Միտքարկով ինքնաշարժ դրի:

Հիմա կնիկան ամենամօտիկ եղողը ես էի, մաքէս անցուցի, որ արդեօք Քատիլաքը որո՞ւ բաժին կ'իյնար, արդեօք եթէ ինծի կտակէ՞. Ի՞նչպէս կ'ըլլար. բայց ըսի իրեն.

— Մտնեցէք այս ինքնաշարժն ալ, ու ըլլորովին ազատուցէք հողերէ:

Տրամաբանական դատաւ ըսածս ու շատ շնորհակալութիւն յայտնեց, որ անկեղծօրէն իր հանգիստին մասին կը մտածեմ:

Հասանք տուն. շճեց որ մեկնիմ. ճաշի վար գրաւ դիտ, աղուար սեղան մը շտկեց. հնդկահաւ եփած էր, հետը՝ բրբինձէ փիլաւ ու աղցան. շատ համով էին, ախորժակով կերայ, մինչ կինը տակաւին կը պատմէր յուշեր շան կեանքէն:

— Քանի՞ տարի է կը պահէիք, — հարցուցի:

— Սեպտեմբեր երկուքին ճիշդ տասնեմէկ տարեկան պիտի ըլլար, — ըսաւ ու աւելցուց.

— Առաջ մեր տունը ունէինք շուներ,

բայց երբ ամուսնացայ, ամուսինս չուզեց որ հետս բերեմ. դժկամակեցաւ, բայց ես միշտ առիթներ կը ստեղծէի մօրս առնելու երթալու ու շունները սերեւելու. այնքան կուպուսած էի, մանուսանդ Րէքսին հետ. կարծես քոյր-կղբայր էինք, որ մը մեր էդ շունը վեց հաս շքանիկներ լոյս աշխարհ բերաւ:

— Որո՞ւ հետ ամուսնացուցիք, — Հարցուցի:

— Գրացիին Պէլլային հետ. արդէն անոնք օտարութիւն խնդիրք վերջացուցեր էին, — ըսաւ ու շարունակեց, — ու այդ վեց հասին ամէնէն սիրունիկը գրկեցի ու սուսա բերի ու մինչեւ հիմա ալ միասին էինք:

— Օ՛, շատ-շատ անուշիկ, խելացի բան մըն էր. ի՞նչ որ ըսէի, անմիջապէս կը հասկնար:

Կինը յուզուած կը պատմէր:

— Այո, — ըսի, — դեռ ասպրեւիք ունէր սիրոմածը:

Կնկան սուզը մեղմելու համար խոստացայ կերպով մը շնիկ մը կարգադրել, ձեւով մը դոցելու համար նախորդին թողուցած բացը: Ու մեկնեցայ:

Ժամանակը բաւական յառաջացած էր. միտքս լեցուն էր շան հարցով. ամբողջ օրը շուն հոյովեցինք ու ինքզինքս փողոցները նետեցի, զով օդը շնչելու: Մտնալու:

Ջարմանքս չէր անցած դեռ: Երբ ամուսինը մեռաւ՝ իր պաղարիւնութեանը ի տես դարձացած՝ կ'ըսէի ինքնիրենս — Քհա՛ զարգացած ժողովուրդ մը, որ արեւելքիի պէս չի լար, չ'ողորար, պաղարիւնութեամբ դերեղման կը դնէ իր մե-

ռելները, քանի որ դիտէ, թէ լայր օդուս շ'ըներ:

Մինչդեռ, շունին մահուան հանդէպ բռնած դիրքը գլուխս պայթեցնելու ստուրեան կը խճողէր հարցերով. ինչպե՞ս կ'ողորար շան կարուստը. մինչ մեռած ամուսինը կարծես ինքնաշարժ նստած՝ սեղ մը դացած էր ու կինը չէր օպտսեր անոր վերադարձին:

Ամէն մեղքիս վրայ, երկու օր ետքը, երբ դործէն յոգնած տուն եկայ, հագիւ նստած՝ հետամայնս սկսաւ զանդահարել. բացի, ինքն էր. զիս քովը կանչեց նուազկուս ձայնով. դացի. հիւանդ պառկած էր:

Բժիշկ տարի. քննութենէն ետք, բժիշկը ըսաւ.

— Մասնաւոր բան մը չունի. այս տեսակ բաներ ընդհանրապէս սոսկալի յուզումներէ յառաջ կու գան:

— Այո, — ըսի, — քանի մը ամիս տաջ ամուսինը կարսնցուց...

— Օ՛, ոչ, — ըսաւ բժիշկը, — շատ ուշ է:

— Իսկ երկու օր առաջ ալ, — շարունակեցի ծոծրակս քերելով, — շունը կորսնցուց:

Կարգը բժիշկին եկաւ ծոծրակը քերելու:

Քանի մը շարաթ ետքը խոստումս յարգեցի ու պղտիկ շուն մը տարի իրեն որդեկրելու. ասիկա Սիթրոյէնի շէր նրմաներ. աւելի Տոֆինի կը նմանէր, աղւոր սիրունիկ բան մըն էր. կինն ալ դո՛հ մնաց, բայց, ամէն անգամ շան առողջական վիճակը հարցնելուս, կը յուզուէր ու նախկին շան յիշատակը կ'ողեկու շէր...:

**Զ Ա Մ Ս Ե Ր Ո Ր Զ Ա Տ Յ Ն Կ Ի Շ Տ Տ Ը**

Մով ձգել կ'ուզէր ճկնորսն իր շանը,  
 Տես դու ապերախտ աշխարհի բանը:  
 — Շատ է գառամեղ՝ ինձ պէտք չի գալու՝  
 Գող ու գայլի հասն էլ չի գզալու,  
     Իր քթի տակ էլ՝  
     Շան օրն է բնկել,  
 էլ տուն չի պահում, ու մարդ անբանը  
 Նաւակից դէպի ծովն հրեց շանը,  
     Թշնամու նման  
     Մովն հրեց նրան՝  
     Իր հաւատարմին,  
     Իր հին մտերմին:

Ապշեց մի վայրկեան զոգստար շունը,  
 Նա, որ տարիներ պահում էր տունը,  
 Հսկում էր բունը տիրոջ ապիկար,  
 Գայլի հոտն անգամ չէր թողնում մօտ գար,  
 Ձմրան գիշերն էլ՝ հագար գայլով լի,  
 Բայց օր ձերուքեան՝ հանդիպեց գայլի:  
 Սկսուեց մի խօլ գօտեմարտ լռին, —  
 Բայց, կարծես, Աստուած ուժ տուեց զամփոփն:  
 Մարդը հրում էր, որ ծովը ձգէ,  
 Շունը թզում էր, որ կեանքը փրկէ,  
 Տիրոջն է կաշում՝ կառչում քաթերով,  
 Լուս ու կատաղութեամբ եւ թէ լուս սիրով,  
 Նայնիսկ աչքերում արցունք երեսց:  
 Բայց, երբ որ մարդն էլ կատաղեց, հեւաց,  
 Երբ անսիրտ մարդն էլ անմխ կատաղեց,  
 Մուտն նաւակը, շուտ եկաւ, քաղուեց,  
 Մովն ընկաւ մարդն էլ, բայց տես՝ ինչ տեսաւ՝  
 Շունը, ինզգուսդ տիրոջը հասաւ,  
 Բերանով իսկոյն բռնելով մարդուն,  
 Լողալով՝ մարդուն գուրս քերեց ծովից՝  
 Եւ ինքը մեռաւ իր սրտի ցաւից:  
 . . . . .  
 Երևէկ կրծքի տակ մարդկութեան այս բիրտ,  
 Բարախէր այսքան շնամեծ մի սիրտ:

ՅՈՎՀ. ՇԻՐԱՋ

(Անտիպ)

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ

ԴԵՊՔԵՐԸ ԶՕՐԶԸԶ ԽՄԻՉՔԱՐԱՆՈՒՄ

Ամէն տնգամ, երբ ես ստանում էի իմ շաբաթականը եւ աշխատատեղիից սուեն վերադարձին, փողոցում հանդիպում էի ԹՀին Չարլիին, նրան հրաւիրում էի George's խմիչքարանդակներում հարեկուրով հիւրասիրելու համար:

Մի օր էլ այդպէս կանգնած վարեջուր էինք խմում եւ խմիչքարանդակ շատ մարդ կար, այնտեղ մտաւ շատ աստիճան մի մարդ, որն ամէնքին ուշադրութիւնն իր վրայ դրաւէց:

Այդ շատ աստիճան մարդը զգուած սպիտակ բրդի պէս թաւ պիւխեր ունէր, որոնք շատ էին բոնում նրա վարդապետի գէմքին: Բոլոր նշաններից երեւում էր, որ այդ մարդը երբեք չէր ծխել եւ ոչ էլ խմիչք գործածել եւ ոչ էլ իր կնիւջ հետ կռուել, որովհետեւ ե՛ւ դէմքը, ե՛ւ նրա ամբողջ շարժում-ձեւը դեռ թարմ էին ու երիտասարդական: Այդ զարմանալի չէ: Լինում են այդպիսի մարդիկ: Սակայն, մեղ, George's խմիչքարանդակ յաճախորդներին շատ դարձանցողը, այդ ձիւք մարմնով ու բարձրահասակ մարդու հապուստիկապուստն էր:

Սեւ կերպասից կարուած նրա հապուստը տասնութներորդ դարի վերջի աստիճան էր ձեւուած: Ամուր, եւ այն կրողի նկատմամբ յարզանք ներշնչող հազուատ էր այդ հապուստը: Մերուսու սպիտակ վերնաշապիկի օճիքը շատ բարձր էր եւ սովորական փողկապի փոխարէն նա կրում էր սեւ մետաքսից պոլոնուած կլոր ու ծոպաւոր մի հաստ թել: Նրա ներքնաբաճկոնի երկու զրպանները իրար էին միացուած ոսկեայ հաստ մի շղթայով, որի մի ծայրին պէտք էր որ նրա ժամացոյցը լինէր, իր պէս հին ու իր հապուստի պէս ամուր, եւ անսխալ աշխատող: Նրա յլխարկի զապաթը, ինչպէս որ հիմա կրում են, կազերից չէր սեղմուած, այլ սեւ ձմերուկի նման կլոր էր ու ողորկ:

Ներս մտնելով խմիչքարանդակ, եկուորը կանգնեց նրա շեմքին եւ ձեռքը յլխարկին տանելով՝ ընդհանուր ձեւով ողջունեց ներկայ գտնուողներին: Ապա նա լայն քայլերով մտնեցաւ խմիչքապետին եւ նորից ձեռքը յլխարկին տանելով, հաստատուն ձայնով ասաց նրան.

— Պարոն, ինչպիսիք եմ օղնել ինձ:

Խմել՝ շատ ցածր մի պահ նրան նայեց զարմացած, ապա ժպտաց իր ուրիշ շատ ցածր ժպտով:

— Անշուշտ, պարսնու Իմ բուն ինձ հետ է, դրա համար էլ վարձատրում է, որ ողնեմ ձեզ եւ ձեզ նմաններին: Ի՞նչ էք ուզում խմել: Մարտինի՞, պրանդի՞, աւիսթի՞, բուրբոն՞, ֆրանսական գինի՞...:

Խմել՝ շատ ցածր մի պահ նրան նայեց զարմացած, ապա ժպտաց իր ուրիշ շատ ցածր ժպտով:

— Մակայն պատկառելի արտաքինով եկուորը ձեռքի տիրով յետ հրեց բուրբոնի աղի գեղեցիկ անուաները, որոնք դեռ կտնայած էին օդի մէջ՝ նրա եւ իւր միջնակետի միջև:

— Ո՛ր, ո՛չ, պարոն: Ես չեմ խմում:

— Այն ժամանակ... — յուսախարուած հարցրեց խմել՝ շատ ցածր:

Մերունին աջ ոտքի ծունկը ծալեց թեթեօրէն, ինչպէս այդ անում են սգնուակոններն ու իրենք իրենց դատարարական երեւակայողները, աջ արձուկի ծայրը դրուշուրեմով յենեց երկարուուն սեղանի եզրին, հաղիւ նկատելի թեքուեց խմել՝ շատ ցածր կողմը, եւ բարձր ձայնով հարցրեց:

— Ո՛ւր կարող եմ գտնել Լէյզի-Լայի Մինկիին:

Խմել՝ շատ ցածր ներսում դտնուող բաղձութեան մէկ մասը պիտնալով, թէ ինչու են փնտում Մինկիին, ծիծաղեց:

Մինկին, որ իր սովորական տեղում նստած խմում էր ու ծխում, լսելով իր անունը, տնդամ աչք շթարթեց: Նա երբեք իր «յաճախողներով» չէր հետաքրքրում:

Խմել՝ շատ ցածր ծերունուն Մինկիին ցոյց տալուց յետոյ, աչքերը յտեց առտատուին եւ երկու ձեռքով իր օձիքը թօթուեց, ցանկանալով ասել՝ «հօ՞, տես՞ ք այդ ծերունուն»:

Մերունին իր տարիքի եւ հարցումի պատճառով նախատինքի, արհամարհանքի եւ շատերի համար էլ զարմանքի առարկայ դարձաւ:

Կոնայք չէին կարողանում ծածկել իրենց հիացմունքը ծերունու նըկամումը:

Չարլիին եւ ինձ մօտիկ գտնուող երկու երիտասարդ կանայք ծերունուն էին դիտում շահախնդիր հետաքրքրութեամբ, մինչեւ որ նրանցից մէկը միւսին ասաց:

— Գեղեցիկ ազամարդ է այդ ծեր մարդը եւ... եւ կարող... մէկը...

— Ինչպէ՞ս դիտես... — հարցրեց երկրորդը եւ երկուսն էլ ծիծաղեցին բարձրաձայն:

Մինչ այդ ծերունին, միտնվամայն անտարբեր իր շուրջը ստեղծուած հետաքրքրութեանը, ճեղքելով բաղձութիւնը մօտեցաւ Մինկիին եւ ձեռքը սարաւ գլխարկին:

— Բարի օր, օրիորդ...

— Մէկ վայրկեան... — ասաց Մինկին եւ ըստ իր սովորութեան, առանց «յաճախորդի» վրայ նայելու, մէկ ուժգով խմեց իր խմել՝ շատ ցածր եւ ապա իր պայուսակի մէջ սկսեց հաւաքել իր ծխատուփն ու հրահանքը, ենթացելով, որ բարեւոյցը «սէր» է հարցնում:

Ես, որ օրերով գիտակ էի Մինկիին, պիտէի, որ նա ատում էր իր «յաճախողներին», ինչպէս որ մէկը կարող է ասել իր սխերիմ թնամուն: Եւ, որովհետեւ նա ատում էր իր «յաճախողներին» հաւասարակէս, նրա հա-

մար ոչ մի նշանակութիւն չունէր, թէ ով էր իր այդ «յաճախողը»։ Երբ-  
 տասնորդ էր նա, թէ ծերունի։ Սպիտակամոմք էր նա, թէ սեւամորթ։ Դեղ-  
 նամոմք էր նա, թէ կարմրամորթ։ Երան մի քիչ դրամ էր պէտք, վճարելու  
 համար իր խմիչքի, ծխախոտի եւ այն «սեռնակի» համար, ուր նա «ապրում  
 էր» եւ ուր ընդունում իր «յաճախողներին»։ Այդ դրամը նրան վճարում  
 էին նրա «յաճախողները» ի վարձատրութիւն այն ծառայութեանը, որը նա  
 նրանց մատուցում էր, իր մարմինը նրանց՝ տրամադրութեան տակ դնելով,  
 նրանց շնական ցանկութիւններին բաւարարութիւն տալու համար։

Մինչ ծերունին համբուրութեամբ սպասում էր, Մինկին ելաւ տեղից  
 եւ ոտքերին նայելով ասաց.

— Well ! Let's go !

Ծերունին անհանդուստացաւ։ Իր ներքնարանկոնի պրզանից հանեց մի  
 սոկեայ ծանր ժամացոյց, նայեց, ապա Մինկին դառնալով ասաց.

— Ի՞մ ժամանակը շատ կարճ է, օրիորդ, եւ ես շտապում եմ։ Փոխա-  
 նակ մի այլ տեղ դնալու համար ժամանակ կորցնել, լաւ է, որ մենք մեր  
 պրծը հենց այստեղ էլ լրացնենք։

Ծերունու այս առաջարկը, որ ամէն մարդ լուց, այնքան անհեթեթ էր,  
 որ ներկաներին զարմանքից քարայրեց իրենց տեղերում։ Միայն Զարլիին եւ  
 ինձ մօտիկ գտնուող կանանցից մէկն ասաց միւսին.

— Ես լրբութիւններ շատ եմ տեսել, բայց ծերունու այդ լրբութիւնն  
 անցնում է սահմանը...

— Մը՛սս, հետաքրքրական է... Սպասիր տեսնենք... — ասաց միւս  
 կինը, ձեռքն իր ընկերուհու ձեռքի վրայ դնելով։

Մինկին, որ անտարբերօրէն լուռ էր, վերջապէս առաջին անգամ լի-  
 նելով, իր «յաճախողներին» նայեց ու հարցրեց.

— Ատում էք, այստե՞ղ...

— Այո, ի՞նչ կայ որ... — դարձապաւ ծերունին։

— Ես այստեղ չեմ կարող... — խեղճ-խեղճ ասաց Մինկին։

Ծերունին շրջուեց եւ ցոյց տուեց խմիչքարանի վերի կիսամութ ան-  
 կիւնը.

— Այն ժամանակ դնանք այստեղ։

— Այնտեղ էլ չեմ կարող, — ասաց Մինկին, եւ նստելով իր աթոռա-  
 կին, խմիչքապեսին կարգադրեց իրեն խմիչք տալ։

— Մինկին ինչո՞ւ մերժեց, երբ այդ իր... իր... պաշտօնն է... —  
 դայրացաւ, ծերունու զլրբութեանը վրայ բարկացած կիներ։

— Ես էլ չեմ հասկանում, — ասաց նրա ընկերուհին, — նրա համար  
 ինչ ասարհութիւն ունի այստեղ, թէ մի ուրիշ տեղ... Մանուսնդ... մա-  
 նաւանդ, որ յարձակուողը այդ գեղեցիկ ծերունին սխտի լինէր... Իսկ ինքը  
 կրաւորական գերում... Հետաքրքրական կը լինէր... Ես ուզում էի այդ ծե-  
 րունու սիրային կարողութիւնը տեսնել...

— Օրբորդ, դուք ինձ միայն տաս ըստ ըստ ժամանակ պիտի յատկացնէք,  
 — Մինկին գիմելով անհամբեր դարձաւ ծերունին։

— Ոչ այստեղ... — շարունակեց յամառել Մինկին։

— Օրբորդ, ես արդէն ասացի, որ ժամանակ չունեմ մի այլ տեղ գնա-  
 լու, — սրտնեղեց ծերունին։

— Get Lost, — բարկացաւ Մինկին։

Խմիչքապետը ուսեթի գաւաթը Մինկիի առջեւը դնելով ասաց.

— Ես դժ շէի լինի, եթէ դրանից յետոյ ոստիկանութիւնը չփակէր  
այս խմբիչքարանը:

— Dnop dead, — ասաց Մինկին:

— Ես չեմ հասկանում, թէ ինչո՞ւ պիտի փակեն այս խմբիչքարանը,  
— խմբիչքարանին հարցրեց ծերունին:

— Բայց, պարոն... — կմկմաց խմբիչքարանը:

— Ի՞նչ, — հարցրեց ծերունին:

— Այն, ինչ որ դուք ուզում էք անել... Մինկիի հետ... արդելուած է  
հասարակական վայրերում...:

Ծերունին շօշափեց զթի մի կողմը:

— Արդելուած է օրիորդին մի քանի հարցումներ ուղղե՞լ:

— Հարցումներ միա՞յն, — յոնքերը վեր հանեց խմբիչքարանը:

— Հարցումներ միա՞յն, — պինկայանից յետոյ համարեա՞ր բոլոր ներ-  
կաները հարցրին միմեանց:

— Այո՛, հարցումներ: էլ ուրիշ ի՞նչ, — զարմացաւ ծերունին:

Մակայն, նրան շրայաարեցին:

Հարցումների մասին լսելով, Մինկին ոչ թէ ներկաների պէս յուսա-  
խար եղաւ, այլ ևս նկատեցի, որ շատ վախեցաւ:

— Ի՞նչ հարցումներ, պարոն, — դիմեց նա ծերունուն, — ըսեմ ան-  
միջապէս, որ եթէ դուք ոստիկանութիւնից էք կամ հարկերի բաժնից, ինձ-  
նից ոչ մի բառ չէք լսի, որովհետեւ ես հաւասարապէս ատում եմ այդ հաս-  
տատութիւնները... Եւ... եւ իմ իրաւունքն է չպատասխանել ձեր հարցում-  
ներին...:

— Ես ոչ ոստիկանութիւնից եմ եւ ոչ էլ հարկերի բաժնից, — ասաց  
ծերունին եւ ձեռքի կաշուեայ հնամաչ պայուսակը դնելով սեղանի վրայ,  
բացեց այն, — ևս նստարարչի բն:

— Իա՞ն, ևս չպիտէի, որ Մինկին մի օր ժառանգութիւն պիտի ստա-  
նայ, — ծաղրեց խմբիչքարանը եւ թեքուեց ծերունու բաց պայուսակի վրայ:  
Առաջին անգամ լինելով ծերունին բարկացաւ: Նա ձեռքը դրեց խմբիչ-  
քարանի պիտին եւ նրան յետ հրեց պայուսակից:

— Պարոն, երբեք մի նայէք այնտեղ, ուր ձեզ չի թոյլատրուած նա-  
յելու:

Միշտ հաւատարակչիւ Չարլին ծիծաղեց: Նա չէր սիրում խմբիչքարան-  
տին, որովհետեւ վերջինը նրան յոճախ դուրս էր անում խմբիչքարանից:

Ծերունին պայուսակից մի թուղթ հանեց, նայեց վրան եւ Մինկիին  
հարցրեց:

— Ի՞նչ է ձեր ազգանունը:

Մինկին խոժոռեց զէմքը եւ երկու ձեռքով սկսեց իր քունքերը տրորել:

— Ի՞նչ է, օրիորդ: Մի՞թէ դուք մոռացել էք ձեր ազգանունը, —  
հարցրեց ծերունին:

— Մէկ վայրկեան, խնդրում եմ միայն մէկ վայրկեան, — ձեռքը  
քունքից հետոյնելով, գլխի մօտը սկսեց շարժել Մինկին:

Ես նկատեցի, թէ ինչպէս նա շարժում էր շրթունքները եւ ճիշդ էր աս-  
նում յիշելու իր ազգանունը: Վերջապէս նա ժպտաց դառնօրէն, եւ առաջին  
անգամը լինելով ևս նրա դէմքին ժպիտ տեսայ:

— Percy, Sir, Percy...

Ծերունին նայեց իր ձեռքի թղթին եւ ասաց:

— Այդ ճշմարիտ է, օրիորդ, ձեր ազգանունը Փերսի է: Բայց, հիմա

ինձ ասէք, ճանաչու՞մ էք Sid Pole անուն ազգանունով մէկին: Եթէ այո, ապա երբ, եւ որտեղ:

Մինկին նորից նեղն ընկաւ: Մտածեց-մտածեց եւ ապա ասաց այնպէս, որ կործեա ներողութիւն խնդրեց.

— Ես իմ յաճախորդների տնուններու շեմ հարցնում...

— Յաճախորդների՞, — հարցրեց ծերունին, — ի՞նչ էք տնում գուք:

— Ես... — ասաց Մինկին եւ լռեց:

Ծերունին, նորից նայեց իր ժամացոյցին եւ մոտացաւ իր հարցումը:

— Ես ձեզ պիտի օգնեմ, որ յիշէք Սիդ Փուլին, այդ շատ կարեւոր է, — ասաց ծերունին, — Սիդ Փուլի չեա գուք լու բարեկամներ էք եղել տարիներ առաջ, երբ գուք ապրել էք Փարք պողոտայի վրայ: Նա շարաթը մի քանի անպամ ձեզ սյցելութիւն է տուել: Յիշեցի՞ք:

— Ոչ, — գլուխն օրօրեց Մինկին:

— Նա շատ հարուստ մարդ էր: Ձեր բարեկամութեան օրերին երևի եօթանասունի մօտ էր: Ձախ քունքին խոր սպի ունէր...

— Յիշեցի... — ասաց Մինկին:

— Նա մեռա՞ւ, — այնպիսի ձայնով ասաց ծերունին, որ կործեա Մինկին այդ լսելով պիտի ճշար եւ աղեկատուր լաց լինէր:

Ստեփան Մինկին միանգամայն անտարբեր, եւ միայն ըողաքովարու-թեան համար «օ՞», ասաց եւ լռեց: Պարզ էր, որ միանգամայն նրա հոգը չէր, թէ Սիդ Փուլը մեռել է, թէ շարունակում է ապրել ու վայելել կիսանքր:

— Այո՛, Սիդ Փուլը մեռաւ, — նորից տխուր ձայնով յայտարարեց ծերունին եւ ի յարգանք Սիդ Փուլի, գլխարկը հանելով դրեց սրտի վրայ ու իջեցրեց գլուխը:

Ծերունու տխուր ձայնը եւ նրա հանդիսաւոր ձեւերն ա՛յնքան ազդեցիկ էին, որ ներկաները, որոնք գլխարկ ունէին նոյնպէս գլխարկները հանեցին եւ դնելով իրենց սրտերի վրայ՝ գլուխներն իջեցրին տխրօրէն: Նոյնիսկ խմել-քապկտը, որ ցինիկ մէկն էր եւ գլխարկ չունէր, ձեռքի սրբիչը ոտրեց եւ դրեց սրտի վրայ: Ներկաներին նայելով, Մինկին էլ օղեց մի բան անել Սիդ Փուլի համար, մանաւանդ որ ծերունին ասաց, թէ նրանք բարեկամներն են եղել: Եւ նա ոտքի կանգնեց շուարած:

Մէկ բռնակ տեսած այդ հանդիսաւոր ու տխուր արարողութիւնից յետոյ, ծերունին հազաւ գլխարկը եւ ներկաներին Սիդ Փուլի կողմից շնորհա-կատութիւն յայտնեց:

Նա հենց այդպէս էլ ասաց.

— Հանդուցեալ Սիդ Փուլի անունից շնորհակատութիւն եմ յայտնում ձեզ, նրա յիշատակը ձեր կողմից այդպէս պատշաճօրէն յարգելու համար:

Այստեղ ներկաները ծերունուն նայեցին, ակնկալելով, որ նա Սիդ Փուլի հոգեհանգստութեան համար իրենց կը հիւրասիրի խմելքով: Բայց ծերունին զլացաւ այդ անել: Այդպէս էլ ի յարգանս Սիդ Փուլի յիշատակին կատարուած այդ հանդիսաւոր արարողութեան մասնակիցները կրօմ նեղու-թիւնն ի զուր անցաւ:

Պարզամիտ Մինկին էլ ենթադրելով, որ այդ ծերունին այդքան հեռու տեղից եկել էր, որ յայտնէր, թէ Սիդ Փուլը մահացել է, եւ ինքն էլ լռեց այդ տխուր լուրը, վճռեց տուն գնալ: Մանաւանդ որ «յաճախորդ» չկար, միւս կողմից էլ խմելու համար էլ դրամ չկար:

Ստեփան, նա հայիւ էր մէկ քայլ արել, որ ծերունին ոտտիկանական ճարպիկութեամբ «ցա՛փ» բռնեց նրա դաստակից.



- Սպասեցէք, օրիորդ...
- Ի՞նչ էք ուզում, — սարսափով հարցրեց Մինկին:
- Սպասեցէ՛ք, — ձայնը խտացրեց ծերունին:
- Բայց, ինչո՞ւ, — էլ աւելի վախեցաւ Մինկին:
- Ես սղարտաւոր եմ կարդալ Սիդ Փուլի կտակի այն մասը, որ ձեզ է վերաբերում:

- Նորի՞ց Սիդ Փուլը, — ձանձրացաւ Մինկին:
- Պարզ էր, որ Սիդ Փուլի կտակը նրան ամենեւին չէր հետաքրքրում:
- Ես ստացի՛, ես ստացի՛, որ Մինկին ժառանգութիւն է ստացել, — բացառանշէց խմբիչապետը, ցանկանալով ցոյց տալ, որ ինքը շատ իմաստուն մի մարդ է:

- Սմբոխի հետաքրքրութիւնը նորից լարուեց:
- Այո, այդպէս է, — խմբիչապետի իմաստութիւնը հաստատեց ծերունին:
- Ի՞նչ է ժառանգութիւնը, — ինքն իրեն հարցրեց Մինկին:
- Ծերունին վերաւորուեց, բայց եւ այնպէս միշտ Մինկինն նայելով ասաց.

— Բարի եւ մեծ մարդասէր Սիդ Փուլը մի քանի միլիոն դոլարի հարստութիւն է թողել իր ժառանգորդներին: Բայց, դրանք այդ ժառանգորդները, Վաու-Վաուից եւ Մու-Մուից բացի, քիչ համարելով իրենց ստանալիքները դատ են բացել այդ կտակի դորձադրման դէմ... եւ ես եկել եմ...

Խմբիչապետն, որ իր պաշտօնի բերումով, ժողովի մի նախագահի պէս, իրեն իրաւունք էր համարում միջամտելու սրահում տեղի ունեցող ամէն մի խօսակցութեան եւ ընդհատելու ամէն մէկին, ընդհատեց նաեւ ծերունուն.

— Ու՛րբ՞ ես այդ Վաու-Վաուն եւ Մու-Մուն, որ զո՛հ են իրենց ստացածով, եւ չեն ուզում աւելին ստանալ:

— Ես պիտի ասի այդ մասին, եթէ դուք ինձ շնորհատէ՛ք, — խմբիչապետին դիտողութիւն արեց ծերունին, բայց բացատրեց, — Վաու-Վաուն բարեգուծ Սիդ Փուլի սիրելի շունն է, իսկ Մու-Մուն Սիդ Փուլի կատուն է...

Խմբիչապետը շիրտառելով քիչ առաջ իրեն արուած դիտողութիւնից, նորից հարցրեց.

— Հետաքրքրական է գիտնալ, թէ ինչքա՞ն են ստացել պարսն Վաու-Վաուն եւ օրիորդ Մու-Մուն:

— Այդ մասին արդէն թերթերում գրուած է: Բայց եւ այնպէս ասեմ, որ Վաու-Վաուն ստացել է հարիւր յիսուն հազար դոլար, իսկ Մու-Մուն՝ հարիւր հազար, — ասաց ծերունին:

Ներկաները ալեկոծուեցին:

— Հետաքրքրական է գիտնալ, թէ ո՞րք են սպրում դրանք, — հետաքրքրուեց մէկը:

— Հինգերորդ պողոտայի վրայ վարձուած մի ճոխ բնակարանում: Ամբողջ օրը շնորի եւ կատուների համար հրատարակուող պատկերազարդ պարբերականներ են թերթում, գունաւոր պատկերասփիւռ գիտում, ուսումնական եւ հանդիսանում, — սրբաօսեց ներկաներից մի ուրիշը:

Սմբոխն ուրախ ծիծաղեց:

— Իսկ ի՞նչ են ուտում:

— Վաու-Վաուն յատկապէս Նոր-Չելանդիայից բերուած սոխակի սուկրներն է կրծում, իսկ Մու-Մուն տոյգ սոխակների ելիկամուկներից պատրաստուած խորոված է ուտում, եւ վրան շամպայն խմում:

Բազմութիւնը նորից բարձր ու երկար ծիծաղեց : Եւ, դարձանալի բան, առաջին անգամ լինելով ես տեսայ, որ ծիծաղում է նաեւ Մինկին :

Մերունին նկատեց այդ եւ յանդիմանեց նրան .

— Դուք պիտի շփոթադէտք, օրիորդ :

Մինկին մտիեցաւ եւ կծկուեց նոտած տեղում : Նա միշտ մտի մէջ էր ամէնքից : Տարիներ առաջ, նրա յաճախորդներից մէկը նրան պանակահաւորել էր եւ մշտապէս սարսափի աղպեցութիւն դործել նրան վրայ :

Մինկին կատարուած յանդիմանութիւնից յետոյ, խմիչքաբանում լրոնութիւն տիրեց : Երունին Հաղաց յաղթական, պայուսակից մի թուղթ Հասնեց եւ Մինկին հրամայեց .

— Ուրբ' :

Մինկին ցնցուեց եւ ոտքի ելաւ հնազանդ :

Մերունին նորից Հաղաց կարճ ու շատ պայտածակուն : Ապա ծոցի դըրպանից Հանեց սոկեայ ու լարի պէս բարակ շրջանակներով իր հնամեւ տիւնոցները, դրեց համարեա՝ թի ծայրին, որով եւ շատ ծիծաղելի տեսք ստացաւ, ապա ակնոցների վրայով Մինկին նայելով Հարցրեց .

— Ձեր անո՞ւնն, օրիորդ...

Նրա Հարցումն աշխարհ խիստ էր ու շոք, որ Մինկին սկսեց կակաղել .

— Մի... Մին... Մինկի...

— Ձեր աղպան՞նը, օրիորդ...

— Փե... Փերսի...

— Որեւէ մականուն կը ունէ՞ք...

— Այո... Այո, պա... պարոն...

— Ասացէ՛ք...

— Լէյզի... Լէյզի-Լայի... պարոն :

— Դադարեցէ՛ք կակաղելուց :

— Այո... Այո, պա... պարոն...

— Ընտրի՞ր է, որ դուք լաւ բարեկամներ էք եղել հանդուցեալ Սիդ-Փուլի հետ : Այո՞ կամ ո՛չ...

Այդտեղ Մինկին յապտեց անմիջապէս պատասխանելուց : Եւ ես նրա դէմքի վրայ տեսայ Հարկադրեալ սուտ խօսելու տառապանքը : Պարզ էր, որ նա չէր կարող բարեկամ համարել ԴՊ-ամենայ մի ծերունու, որ եղել էր այն ժամանակ Սիդ Փուլը, եւ որը Հարսթը մի քանի անգամ, ամբողջ զիշերուայ համար պնէլ էր ոչ միայն նրա մարմինը, այլեւ նրա հոյին ու դրամի դորոն-թեամբ նրանից պահանջ կատարել իր խնէշ ցանկութիւնները :

Պարզ էր, որ Մինկին, ոչ միայն իրեն բարեկամ չէր համարում Սիդ Փուլին, այլ ատում էր նրան, ինչպէս որ ատում էր իր թուր «յաճախորդներին» :

Սակայն նոտարն սպասում էր նրա պատասխանին :

Ծռնչը պահած՝ սպասում էր նաեւ ներկայ բազմութիւնը :

— Այո, ես Հաստատում եմ, որ հանդուցեալ Սիդ Փուլը եւ օրիորդ Մինկին լաւ բարեկամներ են եղել... — յանկարծ ընդհանուր լրութեան մէջ սասց խմիչքապետն, առանց մի բան պիտեալու այդ մասին, բայց գիտէր, որ եթէ Մինկին մտանդութիւն ստանար, ապա ստացած դրամները, եթէ ոչ ամբողջութեամբ, բայց մի մասն իր խմիչքաբանում կը ծախսէր :

— Այո, հանդուցեալ Սիդ Փուլն ու ես լաւ բարեկամներ ենք եղել, — խմիչքապետից յետոյ, ինքնաբերաբար սասց Մինկին :

Ներկաները Հառաչեցին թեթեւացած :

— Good, — ասաց ծերունին, թէեւ երևում էր, որ զժողով էր Մինկիին յայտարարութեան ուշացումից, — Սիր Փուլի կտակի ձեզ վերաբերող մասի գործադրումը կսկսուի ունէր ձեր այդ պատասխանից: Հանդուցեալն իր կտակում գրել է, որ եթէ դուք ժխտէք ձեր բարեկամութիւնը, կը զրկուէք ձեր մասնագումբիւնից:

— Այդ անբարոյական Սիր Փուլ կոչուածը, նոյնիսկ, բարեկամութիւնն ուղեցել է զրամով գնել, — կամացուկ ինձ ասաց Չարլին:

— Ինչքա՞ն է ստացել Մինկին, — անհամբեր հարցրեց պինպանը:

Ակներեւ էր, որ ծերունին արճամարհում էր խմբագրատիւնն: Բայց կարծում էմ, որ այդ շէր պատճառը, որ նա փոխանակ խմբագրատիւնն պատասխանելու, ինքը Մինկին հարցրեց:

— Օրինորդ Փերսի, համաձայն էք, որ հանդուցեալ Սիր Փուլի կտակի ձեզ վերաբերող մասը յայտնեմ այս մարդկանց ներկայութեամբ:

— Այո, — անմիջապէս պատասխանեց Մինկին:

Պարզ երևում էր, որ ամենեւին նրա հոգը շէր, թէ հանդուցեալ Սիր Փուլի կտակի իրեն վերաբերող մասն ուրիշների ներկայութեամբ իրեն կը յայտնեն, թէ առանձնակի: Նա բոլորովին հետաքրքրուած չէր այդ կտակով: Յոյնել էր ու ձանձրացել ծերունու հարցերից: Երևում էր, որ ծխել էր ուղում, որովհետեւ մի ծխադրանիկ պահել էր ափում, բայց ծերունուց վախենալով չէր համարձակուում վառել:

— Good, — ասաց ծերունին եւ ակնոցների վերելից Մինկին շեղուակի նայելուց յետոյ, սիսեց կարդալ, — «Փնտռել ու գտնել օրինորդ Մինկի Փերսիին, որն այլ կերպ կոչուում է Լէյֆ-Լայկ Մինկի եւ այն երջանիկ ժամերի համար, որ մենք անցուցել ենք միասին, նրան յանձնել յիսուն հարաւ դոլար:

Յ. Գ. — Այս գումարին վերաբերող պետական յարկը վճարել սոյն կրատակով թողնուած ընդհանուր գումարից:

Երկրորդ: Այս գումարն օրինորդ Մինկի Փերսիին յանձնել միայն այն պայմանով, եթէ նա ընդունենա լինի, թէ մենք իրապէս միասին երջանիկ ժամեր ենք ապրել եւ բարեկամներ ենք եղել...»:

Այդտեղ, անհամբերութիւնից այրուելով՝ խմբագրատիւնն ուղեց մի բան ասել, բայց ծերունին արեականօրէն ձեռքը շարժեց նրա վրայ եւ նորից դարձաւ Մինկին:

— Օրինորդ Փերսի, արդեօք դուք ուշադրութեամբ լսեցի՞ք հանդուցեալ բարեբար Սիր Փուլի կտակի ձեզ վերաբերող մասը:

— Այո՛, — ցրուած հայեացքով ասաց Մինկին:

— Օրինորդ Փերսի, դուք որեւէ առարկութիւն ունե՞ք հանդուցեալ բարեբար Սիր Փուլի կտակի ձեզ վերաբերող մասի վերաբերեալ, — նորից հարցրեց ծերունին:

— Ի՞նչ առարկութիւն, — չհասկացաւ Մինկին:

Մերունին հառաչեց.

— Գտնու՞մ էք, որ այս գումարը բաւարար է, եւ ուրիշների պէս չէք ուղում դատ բացել...»

— Ա՛յ, — ասաց Մինկին:

— Ա՛յ, ի՞նչ, օրինորդ Փերսի:

— Զգիտեմ...»

Մերունին նորից հառաչեց: Գրպանից հանեց իր հարիւր տարեկաննոց ոսկեայ գումացոյցը, նայեց եւ հարցրեց անհամբեր.

— Օրինորդ Փերսի, ընդունում էք մեր սասցած ժառանգութիւնը :  
 — Ինչո՞ւ չէ, ինչո՞ւ չէ... — Մինկիի փոխարէն բացազանչեց խը-

միջքապետը :

— Ինչո՞ւ չէ, — մեքենարար կրկնեց Մինկին :

— Բողոք չունէ՞ք, — Հարցրեց Ծերունին :

— Ո՛չ, — սասց խմբիչքապետը :

— Ո՛չ, — կրկնեց Մինկին :

— Good, — սասց Ծերունին եւ Մինկիի առջեւում մի թուղթ դնելով :

Իր գրիչը նրան պարզեց, — ստորագրեցէ՛ք :

Մինկին, որ երեւի սարսափում էր թուղթ ստորագրելուց, յետ-յետ քաշուեց :

— Ինչո՞ւ պիտի ստորագրեմ, — Հարցրեց :

— Ստորագրեցէ՛ք, որ դուք որեւէ առարկութիւն չունէք, հանդուցեալ մեծ բարեբար եւ մեծ մարդասէր Միզ Փուլի կտակի ձեզ վերաբերող մասի վերաբերեալ :

Մինկին սարսափեց .

— Այդ բոլորը պիտի գրե՛մ... —

— Ո՛չ, միայն ստորագրեցէ՛ք, — սասց Ծերունին :

Մինկին, որ երեւի երկար-երկար ժամանակ գրիչ ձեռք չէր առել, վերցրեց Ծերունու գրիչը, նայեց նրա երկու ծայրերին եւ մեծ դժուարութեամբ այն իր դողողացող ու դեղնցիկ մատներին մէջ բռնելով, աչքերը առաստաղին յառեց, երեւի նորից յիշելու համար իր ազգանունը, եւ ապա թեքուելով թղթի վրայ ստորագրեց այն :

— Մինկին ստորագրեց թո՛ւղթը : Մինկին կարողացաւ ստորագրե՛լ, — ուրախացաւ խմբիչքապետը :

Ծերունին վերցրեց ստորագրուած թուղթը եւ նրա փոխարէն մի ուրիշ թուղթ դրեց սեղանի վրայ :

— Այս էլ ստորագրեցէ՛ք :

— Այս ի՞նչ է, — համարձակուեց Հարցնել Մինկին :

— Ստորագրեցէ՛ք, — հրամայեց Ծերունին, — այդ մեր դրամի համար է :

Մինկին թէեւ չհասկացաւ, բայց ստորագրեց :

— Ա՛յ, դու էլ ստորագրե՛ր, — խմբիչքապետին կարգադրեց Ծերունին :

— Որպէս ի՞նչ, — ուրախացաւ խմբիչքապետը :

— Որպէս վրայ :

— Ս՛, բոյ, — Հպարտացաւ խմբիչքապետը, թեւոցները վեր քաշեց, ուսի վրայի սրբիչով խնամքով սրբեց ձեռքերի մատները, զգուշութեամբ վերցրեց գրիչը, կուրծքը ցցեց եւ ապա Հպարտ հայեացքով ներկաներին նայելով թեքուեց թղթի վրայ :

— Այստե՛ղ, — մատով ստորագրելու տեղը ցոյց տուեց Ծերունին :

Խմբիչքապետը տնքաց : Մէկ վայրկեան մտածեց եւ մէկ էլ գրչածայրը կարի մեքենայի ասեղի պէս երկարորէն ու ձայնաւոր սկսեց ստորագրել թղթի վրայ :

— Ձե՛ղ, զե՛ղ, զե՛ղ... —

Երբ խմբիչքապետը վերջացրեց ստորագրելն, ուղղուեց տեղում, գրիչը կոթի կողմից այնպէս մեկնեց Ծերունուն, որ կարծես երկրի մի նախազահ էր, մի կարեւոր օրէնք էր ստորագրել եւ յիշատակի համար այդ գրիչն ողորմածաբար նուէր էր անում իր նախորդներից մէկին :

— Ահա յիսուն հազար դուրբը — ասաց ծերունին, եւ մի շէք դրեց Մինկիի առջեւ:

Թմբիչապետը խից չէր, նսյնց վրան, եւ ասպա դիւրից վեր պահելով ցոյց տուեց բազմութեանը:

— Տեսէ՞ք, տեսէ՞ք:

Ծերունին իր դործը լրացրած համարելով, վերցրեց պալուսակը եւ սուստ ձեռքը տանելով դիւարիկին, Մինկիին հրատեղաւ տուեց:

— Յանտութիւն, օրիորդ:

Յանտութիւն, — տարամ մ. անտարբեր ասաց Մինկին եւ թուաց, թէ հանդատացաւ, որ ծերունուց աղատուեց:

Թմբիչապետը ձեռքերը պահեց կողքերին, ակերը վեր շրջեց եւ ներկաներին նայելով, ակերով երեք անգամ օդը վեր հրեց եւ երեք անգամ դուրեց:

— Հուրէ՛յ, հուրէ՛յ, հուրէ՛յ...

— Հուրէ՛յ, հուրէ՛յ, հուրէ՛յ, — թմբիչապետին կրկնեց Բէյրի Ձէյսը եւ ելաւ տեղից:

— Ո՛ւր, — նրան բռնեց Դիդին:

— Գնում եմ Մինկին շնորհաւորելու, — ասաց Բէյրի Ձէյսը:

— Այդ ես կարող եմ անել, — ասաց Դիդին եւ հինկով տեղից գնաց դէպի Մինկին:

Թմբիչապետը, որ այդ ժամանակ թեքուել էր Մինկիի վրայ եւ ինչ որ բան էր ասում նրան, ուղղուեց տեղում ու ամբօսին նայելով ասաց ցընծաղին:

— Լէյդիներ եւ ջէնդամէններ, Մինկին ձեր ամէնքին իր հաշուին հիւրասիրում է, ով ինչ որ ցանկանում է խմել:

Ներկաներն իրար խառնուեցին եւ ակեցին պատուիրել:

— Չարլի, — ասացի, — ես դնացի: Դու եթէ ցանկանում ես կարող ես մնալ եւ հիւրասիրուել:

— Ո՛չ, ես էլ գալիս եմ, — ասաց Չարլին եւ մենք միասին դուրս գընացինք:

Փողոցում, երբ արդէն բաժանում էինք, Չարլին խնդրեցի:

— Փորձեցէք Մինկիից գիտնալ, թէ ո՞վ է եղել այդ Սիդ Փուլ կոչեցեալը: Աշխատէ՞ որքան կարող է՞ այդ ուղղութեամբ շատ տեղեկութիւններ ձեռք բերել, դրանք ինձ պէտք են, — ասացի:

— Գ'անեմ, — խոստացաւ Չարլին:

**ՇԱՀԱՆԴՈՒՄՏ**

**ՆՈՐ ԿՕՇԻԿՈՎ...**

- Նայէ սա գայարածածկ բլուրնե-  
րուն: Բնութիւնը գեղեցիկ է հոս, չէ՞:  
Իմ մանկութեան օրերուն հոս կա գա-  
լիմք պտոյտի: Այն ատեն կարծես առա-  
ւել գեղեցիկ էին այս բուսիքը, ծառե-  
րը առաւել կամանչ: Մարախներ կը  
ցատկաւորէին մեր հալածանքներէն ասը-  
սափած: Կը վազէի զամռնք բռնելու զան-  
գով, բայց չէի կրնար, ինչպէս որ չէի  
կրնար այդ օրերուն բռնել Սիրունը:  
Հակառակ անոր որ իմ սրունքներս իր  
սրունքներէն երկար էին եւ վազի մէջ  
իրմէ աւելի ճկուն, հակառակ անոր որ  
իր ռատումները կ'ըլլային շատ «փա-  
փուկ» ու մանր, սակայն դարձեալ «չէի  
կրնար» հասնիլ իրեն...:

Բայց ի՞նչ մտածումներ յիշեցուց  
այսօրուան այս պտոյտը: «Այն Նեպի»-ն  
փոխուած է այսօր եւ ան կը կոչուի հի-  
մա նոր անունով. «Փառար Անթիլիաս»:  
Հիմա ամէն ինչ տարբեր գոյն ու ձեւ  
ունի հոս: Ջուրերը պահուած են սրճա-  
բաններու ծոցին եւ անոնց մտտեմայու  
համար պէտք է մտնես դռնէ մը ներս,  
ուր գիշեր ատեն կը պարզուի դրախտա-  
յին կերպարանք. լոյս, լոյս եւ միայն  
լոյս: Ձե՞ս սիրեր այսպիսի տեղ մը:  
Յաճախ կու գամ: Կու գամ բարեկամ-  
ներով, երբեմն առանձին: Ու այդ մի-

նակ օրերուս ինծի հետ կ'ըլլան միշտ  
այդ օրերը սիրուն...:

Այսօր դիտուածը այդպէս բերու,  
որ գամ հետդ: Թերեւս դուն ալ նկատ  
ես հոս մանկութեանդ: Ո՞ր մէկ Պէյ-  
բուքցի հայր չէ համդիպած «Այն Նե-  
պի», Անթիլիասի ակնադրիւրը: Մաս-  
նատրաբար Անթիլիասի վանքի՝ Ս.  
Գրիգոր Լուսաւորչի Ուխտի Օրը:  
Վանքի տօնակատարութիւններէն ետք,  
Արրագան Մատունքներու եւ Աջերու  
հանդիսաւոր քափօրէն ետք: Խնձոյճի,  
Խաղի ու տաղի ձայները հոս կը խոս-  
նելին սառնարակ ջուրերու համերգին,  
ու հայուն ապրելու խանդը կը տանէին  
հնա՞ւ, հեռա՞ւ:

Ես ալ հետունները գացի: Ըրածս մտ  
քառորդ դարու պատմութիւն մըն է:  
Ինչո՞ւ չեմք կրնար մտնուի մեր անցեա-  
լը: Ինչպէս երեխայ մը՝ փակած իր մօր  
փէշին, մե՞ք ալ կառչած եմք մեր անց-  
եալի փէշին: Այդ անցեալը երբեմն կը  
վնասէ մեր աշխատանքին, մեր յառա-  
գանալու ճիգին: Իբրեւ խոչընդոտ կը  
ցցուի մեր առջեւ ու կ'անդամաւորէ:  
Մասնատրաբար երբ տխուր անցեալ մըն  
է: Այդէն հայուն անցեալը ե՞րբ ուրախ  
եղած է որ...:

Բայց նպատակս այդ ըսիլ չէր: Շե-

զեցայ ներքեւ: Ուրեմն դուն ալ եկած ես մանկութեանդ «Այն Նեպի»-ի այս ջուրերուն մօտ: Կրցած ես երգել ու գրելալնամայ: Թերեւս ինկած ես ջուրի հոսանքին մէջ ալ եւ մէկը քեզ փրկած: Այդ տեսակ պատկերներ շատ կը պարզուէին եւ ջուրը ինկող երեխաները փրկողները ընդհանրապէս զրուան մեր գիտովները կ'ըլլային: Արդէն \*՞ր մէկ «խելացի» պիտի ուզէր ինքզինք ջուրին մէջ նետել ուրիշին կեանքը փրկելու համար: Խելացիին պարտականութիւնն ու պաշտօնն է միշտ մտածել: Զափել, ձեռնել, նորէն չափել, կրկին մտածել, դարձեալ վերահարկութեան ենթարկել իր միտքերը եւ այդպէս «յառաջանայ»: Բայց ես ասոր նահանջ կ'ըսեմ: Բոլոր յառաջացողներն ու յաջողները «խելքերն» են: Ասոր համար է որ ժողովրդային իմաստութիւնն անգամ ըսած է. «Մինչեւ խելացին խորի, խելքը աշխարհ կը շահի»:

Աշխարհը դարձնողները «խելքերը» չե՞ն միթէ: Բոլոր հանճարներուն ու հերթներուն «խելք» մակդիրը կու տան: Եթէ այդ «խելքերը» չըլլային, աշխարհ կրնա՞ր նուաճումներ կատարել: Կարելի՞ էր յաղթութեան համը գգալ: Անկասկած լուսնագնացներուն ալ «խելք» տիրուածը շնորհեցին...

Բայց չեմ գիտեր. թէ ես մարգոց ո՞ր մէկ դասակարգին կը պատկանիմ: Կը տեսնե՞ս, մտածելու սկսայ: Սկսայ չափել-ձեռնել, հետեւաբար պէտք է կոչուիմ իմաստուն: Հետեւաբար... ամուլ: Զգենք այս բոլորը: Դեռ քսելիքս չըսի: Կը տեսնեմ որ անհամբեր ես: Ուրեմն... Ի՞նչ պիտի ըսէի: Հա՛: Պիտի ըսէի, որ այսօր հոս գտնուելուս համար այնքան ուրախ եմ, որքան ինչ օրերուն. հակառակ անոր որ այն օրերուն արցունք ունէի աչքերուն, իսկ այսօր դրամ՝ գրք-պսակս մէջ:

\*\*

Օր մը դպրոցով հոս եկած ենք պըտոյտի: Բայց հոս հասնելու համար շա-

քաքներով արցունք քափած եմ, որպէսզի կարենայի հայրս համոզել եւ իրմէ կորզել 50 լիթ. դանկեան, դպրոցէն պահանջուածը՝ իբրեւ պտոյտի ծախս:

Սիրուն կարծես հասկցաւ, թէ կըրնար ըլլալ որ շերքայի այդ պտոյտին, շմանակցէի դասարանային ուրախութեան եւ պատճառ դառնալ իր տրամուշեան: Երեկոյ մը դպրոցէն արձակուելու միջոցին, մօտեցաւ ինձի եւ ըսաւ.

- Պտոյտի պիտի գա՞ս:

- Ո՛չ:

! - Եթէ դրամ չունիս ... Ես ... Ես կրնամ 50 դանկեան տալ քեզի:

- Ահա՛ 50 դանկեան (ցոյց տուի):

Եթէ քու հայրդ հարուստ է, կը կարծես որ մե՞նք յիտունն՞ց մըն ալ չունինք:

- Անոր համար չէ ... Բայց ... Եկու՛ր պտոյտի...

- Դրամ ունիմ, բայց պիտի չգամ: (Իսկ որքան կ'ուզէի երբայլ, սակայն ի՞նչպէս ծախսելի այդքան արցունքով ձեռք ձգուած 50 դանկեանը):

\*\*

Հիմա կը գտնուիմք «Այն Նեպի»: Քառարդ դար մը ետ դարձիք ամբողջ յիշողութեամբ: Ճաշէն առաջ պտոյտի գացինք: Նոյն այս տեղն ենք, սակայն մազլցելու յայտագրով: Հողը նանկրատել, ծաղիկներ քաղել, իյնալ-ելլել, երգել ու բոլորին բոլորովը դառնալ:

Զառիթափ մը խիստ վախ ազդեց մասնաւորաբար ուսուցչուհիներուն: Անոնց կօշիկներուն կրունկները շէն ենր դաշնակուտեր հողին, քարին, փուշին հետ. բոլորն ալ կը սաեծին: Ես կ'իջնէի անվախ: Կարծես կը քալէի ասփայլապատ ուղիէ մը:

- Վարուժան, քանի որ դուն չես իյնար, կեցիր թեւդ մտնեմ եւ միասին իջնենք:

Օր. Սառա իրապէս կը վախճար այդ գառիվարէն: Թեւս մտաւ: Ես իրմէ առաջ, ինք ամբողջ մարմնով փլած եսզլու

ւրատանի ուսերուս վրայ: Բայց այնպէս կը դիմանամ, ու ռոտս այնպէս ամուր կը փակցնեմ հողին, որ արժանապատուութիւնս չվիրաւորուի եւ գառիվարը անսայթափ իջնողի համբուս չսղարտուի:

- Զարմանալի տղայ մըն ես: Ի՞նչպէս կ'ըլլայ որ չես իյնար: Ուշագրութիւն ըրէ: Դոնէ իմ ձախուեր շարժումներս պատճառ չըլլան քու սահելուդ:

- Ոչ, օրիորդ, ամհոզ եղէք, չեմ իյնար:

- Քիչ ետք եթէ վար հասնիմք, պիտի նայիմ, քէ ի՞նչ դրած ես այդ ոտներուդ տակ:

Ես լուս կը շարունակեմ վայրէջքը, ուսերուս վրայ օրիորդ Սառային ծանրութիւնը:

Հասանք ստորտը բլուրին: Օրիորդ Սառա կ'ուզէ ստուգել ոտներուս տակ պահուած գազտնիքը:

Ես այնքան արագ սուրացի, այնքան սրաքօնիչ ուսումով հեռացայ իր քովէն, որ շունչս առի դիմացի բլուրի գագաթին: Օրիորդ Սառա չէր կրնար հասնիլ ինձի...

Իսկ եթէ հասներ ետեւս, հրաշքի պէս, ու նայէր կօշիկներուս տակը, ի՞նչ պիտի ըլլար վիճակս: Եթէ տեսներ կօշիկներուս խայտառակութիւնը, խոշոր բացուած ծակերը... Հասպա՞ Սիրունը...

Ի՞նչ պիտի ըսեր ան: Երաւունք պիտի չունենա՞ր 50 դահեկան առաջարկելու...:

\*\*\*

25 տարի ետք նստած եմք տես ազնուականի հովերով: Կը խմենք պատուական ըմպելիք: Սպասակները կը սպասարկեն մեզի ամենայն յարգանքով: Գրպանս ծակ չէ: Ոչ ալ... կօշիկս: Ու դրան առջեւ կը սպասէ «Փէօժօ»:

- Խմենք ծակ կօշիկ ունեցող բոլոր մանուկներուն կեանքը:

- Կեցի՛ր, դեռ չվերջացուցի: Ուրիմն, կը տեսնես, որ տիրացած եմ Երագներուս:

Երագին կարելի է տիրանալ կամբով, հաւատքով, աշխատանքով: Երբեմն ան կ'ուշանայ չլուսցող գիշերի պէս, բայց օր մը անպայման կը յայտնուի այգաբացի պէս: Յուսահատութիւնը մահ է: Դուն ներքէ ուսերուդ վրայ ծանրութիւններ դնողներուն: Պիտի ունենա խաղաղ երթդ: Դուն ալ օր մը պիտի ունենաս նոր կօշիկներ, այսքան փշուտ նանապարհներէ ետք: Ու երբ մարդիկ ուզեն ստուգել անոնց որակը, ցոյց կրնաս տալ առանց փախչելու, որովհետեւ նոր է ամէն ինչ քովդ: Մանաւանդ՝ զնացդ...:





Տ Ա Ռ Ա Պ Ա Ն Ք

Գիտեմ  
Թէ լի եմ ցաւով,  
Սպասումնով՝  
Իմ  
Ամէնում...:

Էութեանս՝  
Մէկը անգիր  
Անանում  
Ինչ որ յոյզ է ներմածած...:

Անապատի մը  
Անհունութեան մէջ,  
Անապատի մը  
Անհունը լեցնող  
Կանչեր կան,  
Ճոխնչ՝  
Փշրուող գանկերու...:



Անապատի մը՝  
Փնտռող  
Ելք ու պատասխան:

Եւ իմ աչքերու  
Լեզենդներուն հետ  
Եղաւ ջինջ արցունք՝  
Եւ լոյս  
Ազի լոյս  
Բիբերուս՝  
Գծուար  
Խիտ  
Գունաւորում...:

Յ . ՊԵՐՊԵՐՆԱՆ



ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

**...Ե Ի Ծ Ա Տ Ը Ն Թ Ա Ց Ի Կ**

**ԳՐԵԹԷ ԱՄԷՆՕՐԵԱՅ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ**

Մինչեւ այդ օր երբեք մտածած չէր, որ ինք ալ սէր կոչուած Հանելուկին հետ օր մը կրնար դորձ օւնենալ:

Այդ օր, սաւուտուն, սրճարան չընկաց ա'լ, երբ իր օրերուն սլաքը սէր կոչուած թնճուկին վրայ յօրանջելով յամենայ սկսաւ:

Չարմանալի ոչ մէկ պատճառս Բայց նոյնիսկ ինք չէր անգրագործած, թէ ինչպէ՞ս կրցած էր խորասակել իր կուռպ ապրելակերպի դասականացած սկուտաակր, եւ անոր փոխարէն սրտին մէջ յօրինել ներդաշնակ ապրելակերպի հաւասարակչիւ նժարները դէր ու վար օրօրոյ ու դեռ՝ աններդաշնակ ձայներու սանձարձակ քոտս մը:

Քայլերը, որ միշտ իր բանականութեան հրահանգները դորձադրող հնազանդ ստրուկը կղած էին, չէր զիտեր այդ օր ինչէ թելագրուած, ըմբոստութեան դրօշակը կը պարզէին:

Այլեւս համոզուած ըլլալու էր իրօքութեանը, որովհետեւ նոյնիսկ փորձեց շմտածել այդ մասին: Վերջապէս, հիմա ինք իջած էր Ծախիւնն ու ցուցամատր հանդիցուցած վերելակի կոճակին վրայ:

Չդանդաղեցաւ: Հաստատ շարժումով մը բացաւ վերելակին դուռը: Նետուեցաւ ներս:

Գրպանին մէջ թաղուած մատները ջղային պրկումներով հասցէն կը ճմրթկէին: Բայց ինք... արու էր, եւ այս ոչ-տրամաբանական պատճառ մը չէր որ շցանկար այդ ցանկաշարայց էր: Արդարեւ, ախորժակը թարմ միտի համարած էր եւ իր հոս գանուելուն պատճառը ուրիշ բան չէր, եթէ ոչ...

Կարգաց բացիկը:  
«Վաղը առաւօտուն, ժամը 10-ին Բեգի կը սպասեմ:  
Մեքսիք փողոց  
Մարսէլ շէնք  
5-րդ յարկ, Իլու 14  
Ն. Խ.»

«Ի՞նչ դիտար ինչո՞ք, որ ժամը 10-ին իրձէ աւելի սպասող մը պիտի ըլլայ անշուշտ», եղբակացուց լուեկայն ու կոճակը կոխեց:

✱

Երէկ օրը Կիրակի էր: Եստ սոյտրահան օր մը: Բայց ո՛չ: Երէկ իրեն համար, անուշտ իրե՛ն համար միայն, թե՛րեւ նաեւ անո՛ր համար ալ — ինչո՞ւ չէ՛ — գլխօղիի Կիրակի մը ըլլալու էր:

Ինք՝ Նորայր Սարգիսեան, վայելքի կողմէ ժլատ, Հայէպէն Պէյրութ... աչքի լուսնը առնելու եկած տղան, սիճեմայի

պատկերները դիտելէ ձանձրացած ու կենդանի պատկերներու հարազատութեանէն հրապուրուած, սքրիվ-քիվի շօնի իր համակ ձեղկութեամբ արելու տարփանքով, առաջին տնդամ ըլլալով դաղջ միսի հոտ առած կատուի մը զգուշութեամբ, լիբանանցի վարպետորդի մօրաքրոջը տղուն շուքին ներքե կծկուած, խաբխափելով, խմէջի, շրջուցիչ բարկ կարմիր լոյսին, ծխախոտի եւ մանաւանդ մեղկ տնուշահոտերու ազդեցութենէն յզփացած՝ ռունկերը գրգռելով, ու պատանութենէն երիտասարդութիւն նոր կամրոյզ հետաքրքիր տղու մը լարուած աչքերը լորս-լորս բացած, կենդանի պատկերները երկվայրկեան մը առջի ըմբռնելու անհամբերութեամբ, ոտքերը քալարէ կոշուած հաճոյստահ սահեցուցած էր:

Աչքերը արտասովոր փայլ ստացած էին: Ակնարկները տպակնած օդի շրջարշը ճեղքելով, ծիծեռնակի մը նահանջով օդին մէջ կը ճախրէին ու վայրկեանը մէկ, դիրք գրասի, հասունցած, ժպտուն ծիծերու եւ դեռ՝ աղուոր կոր ու սահուն արդիւնալ եռանկիւն մասերու վրայ կը դեղերէին:

Անշուշտ այս պահը կարելի էր երկարել, անվերջ շրթայի վերածելով սկնարկներու դնացքը, եթէ գիտացի սեղանը նստած է՛ր դաննք իր վրայ շղուծաբէր:

Գիշերային փայլուն մետաքոն պտուրաստուած միւլիո-միւլիո-բամուր գրկած էր մարմինը. զոյգ մը հարուստ ծիծերը իրենց համաշփի ելեւէջներով որսացին աղուն նայուածքները, որոնց ջերմութենէն ծիծերը հատուննալ ու ճաթառիւ սկսան:

Ակնարկները աւելի վարերը լիջան այս անգամ: Սահեցան դիշերային մետաքոն որորկ մակերեսէն, մինչեւ որ ծայլ սլակերտի մը անփութութեամբ դանդաղեցաւ պահ մը, զոյգ մը կօշիկներուն մէջ ջրվիժող միտէ գեղեցիկ այն մասերուն վրայ, զորս մարդիկ, գիտ, բուժք, ազգը, ճիւ եւ սրունք կը կուչեն: Յամեցան, խենթացան, բունկե-

ցան վերջնապէս ու անօթի աչքերով վայելեցին, ապրեցան զաննք:

Այս այն պահն է, որ աննք, որ դիտ, բուժք, ազգը, ճիւ, սրունք կամ որեւէ բառ կը կոշուին, դիտ, բուժք, ազգը եւ ճիւ եւ սրունք ըլլալէ աւելի շատ բան կը նշանակեն, իրենց նիւթական հալուստէն կը մերկանան, կը դառնան բոլորովին արտասովոր իմաստ, հեքիաթ, գեղեցկութեան հաղարբանդ, պատաս, զոյութեան համանուպ:

Եւ ինք որքան, որքան ուղեց, որ աննք երկարին, ու գեղեցկութեան զոյգ մը ջրվիժները շրջուին, չփշրուին, շտանկոխուելու համար սալաշատակին վրայ իբրեւ փշրանք, իբրեւ գեղեցկութեան աւելցուց:

Այս այն պահն է դարձեալ, որ սրունք բոռը հակառակ բառարանին մէջ մէկէ աւելի հոմանիշներ ունենալուն, քեղի համար կը դառնայ, այսպէս կոշուած, կեանքի մէկ անբացատրելի թրեճակ. ինչ փոյթ, որ գուն զոյն կ'ապրիս աչքերովդ, մատներովդ եւ մարմնիդ իւրաքանչիւր բջիջով: Կը նայիս, է՛ւ կը նայիս, է՛ւ կը նայիս: Մէջդ ետացող պատասխան մը տալու հարկադրանքը թիւրեւ շարշարէ քեղ աւելի ճիշդ պիտի շարշարէ, որովհետեւ հակառակ զայն գանկիդ մէջ պատէ-պատ զարնելուդ, պիտի սպաննէ մտածումներ լսուած եւ չբոռուած: Յետոյ միայն պիտի անդրադառնաս, որ կեանքի անլուծելի երեւոյթներէն մէկն ալ այս է, զոր մարդիկ սրունք են կոչած: Սրունք՝ եւ ո՛չ մէկ ուրիշ բան: Սրունք՝ որ մէկ խօսքով կը թարգմանուի զուարթ, սպիտակ միտ. կամ աւելի ճիշդ գեղեցկութիւն:

— Կը բաւէ դիտես, — խօսեցաւ մօրաբորջը տղան լիբանանցիի յատուկ քմծիծաղով:

Տնցուեցաւ: Ու պահ մը վարանումէ ետք:

- Հասա ինչո՞ւ եկանք:
- Հը՞... ի՞նչ բա՛ր:
- Կարպի՛տ:
- Ի՞նչ:

— Բան մը պիտի հարցնեմ... բայց  
 ...պիտի շինդաս... հը՞...  
 — . . . . .  
 — Ի՞նչ կ'ընես...  
 — Այս ալ հարցում էր... որ հար-  
 ցուցիր...  
 — Լո՛ւրջ:  
 — Ի՞նչպէս ի՞նչ կ'ընեմ, կը գիտե՛մ:  
 — Ինչո՞ւ...  
 — Ձեմ գիտեր...:  
 Ապա՝  
 — Քիչ բան մնացած էր, որ ձեռքէ  
 փախցնէինք, — խօսեցաւ հապճեպով:  
 — Ի՞նչը...:  
 — Ե՛՛՛՛ն  
 — Ե՞՞՞՞ր սկսաւ...  
 — Այն վտրիկեանէն սր սկսաւ:  
 «Առ քեզի պատասխան», մտածեց ու  
 գիտեց:

Իրտեց ե՛ւ գիտեց: Նայուածքները  
 հալեցան մերկացող պարուհիին այն  
 բանին վրայ... որ մարմին կը կոչուի:  
 Ինք գիտեց շօն, գիտեց ու չգիտ-  
 ցաւ, թէ ինչպէս բաժանել բարձրացնելով  
 էրզեց:

— Կենացդ, Կարպի՛ս:  
 Կարպիս չպատասխանեց:  
 Փառաթին մէջ մնացած դարեջուրի  
 վերջին պղպղակները պայթեցան կոկոր-  
 դին մէջ, ու մեղկութիւն մը եկաւ բտ-  
 րէրար աղղկութիւնը կատարելու:  
 Միջնադադարին, նայուածքները  
 զարձեւել գումարուեցան մարմարի սա-  
 հունութիւնը ունեցող զոյգ մը սրունք-  
 ներուն վրայ: Ծարժեցան, նախ դան-  
 դալ, ապա վաղեցին վեր. այս անգամ  
 սուղուեցան, մտան եռանկիւն մասերէն  
 ներս, ծուլացան, բռնկեցան, ձուլուելու  
 համար խիստ անորոշութեան մէջ:

Երբ բարձրացուց կնոջ սրունքներուն  
 դասական դեղեցկութեան արբեցած  
 զլուխը, նայուածքները բռնեցին դի-  
 րար: Նորայր այն ատեն միտն անդրա-  
 դարձաւ, որ գլխացիին այտերն ու ա-  
 կանջները ջերմէ բռնուած էին: Կնոջ  
 այտերն ու ալանջները կարմիր էին.  
 բորբ, սիրտ ոյրող կարմիր: Ի վերջոյ  
 հանելուկը շունչ էր: Իրմացիներ կին մըն

էր: Կին: Եւ այս մէկը բաւական էր, որ  
 իր անփորձ, աճչկոտ նայուածքները  
 համբուրէին, լիզէին էգին ծիծերը, այդ  
 դունդ ու կլար խնջոյք ծիծերը, սահէին,  
 սուղուէին եռանկիւն մասերէն ներս,  
 ծուլանայու, բռնկելու եւ ձուլուելու  
 համար...:

Աղջիկը կը ժպտէր: Մեղմ: Ժպտա  
 մը, սր միայն յատուկ էր իր սեռին:  
 Կնկան չրթներուն, հում-հում ուտուելիք  
 այդ չրթներուն վրայ ծլող ժպտին  
 փթթիլն ու խամբիլը մէկ կ'ըլլար:  
 Այդ օր, երիտասարդութեան առա-  
 ջին խրատումներուն խարկանքովը պի-  
 նովցած՝ վերադարձաւ սուն. սպասելով  
 վաղուան, ժամը սասին, որ ծոյլ էր եւ  
 անգութ:  
 Աւ գաղը եկաւ ուշ, շա՛տ, շա՛տ  
 ուշ...:



Առաւօտուն ծոյլ արթնցաւ: Հապ-  
 ճեպով տեղաւորեց տարատն ու շապի-  
 կը, վայրկեան առաջ փողոց ինչալու:  
 Այդ օր, առաւօտուն, սրճարան չղը-  
 նաց ա՛լ: Երբ հասաւ, ժամը 10:20 էր:

Պահ մը ապշած մնաց դրոն առջեւ:  
 Բայց, զի՛նչ գիտնար ինչո՞ր, որ ժամը  
 10-ին իրմէ աւելի սպասող մը պիտի ըլ-  
 լայ, անշուշտ, եղբակացուց լռելիայն  
 Նորայր Սարգիսեան կոչուած անձին մէջ  
 ծնած երկրորդ երիտասարդը եւ կտ-  
 ճակը կոխեց:

Կինը բացաւ դուռը:  
 — Կը ներէք, — կմկմաց Նորայր  
 արտորանքով:

— Ինչո՞րեմ, ուայաւ, միւսի՞օ, —  
 պատասխանեց կինը եւ ներս առաջնոր-  
 դեց:

Սենեակին ճախ կահաւորումէն են-  
 թաղեց, որ երէկ քաղաքէն տեսած  
 յաթսունի դուներուն բարեւոյց կնոջ քով  
 հանդէտը մարդկային ֆօթօ-էսփին, հա-  
 բուստ մէկը ըլլալու էր:

Հրճուեցաւ, էգին մատուցելիք հեշ-  
 տանքի երանութեանէն գինովցած:

— Ի՞նչ պիտի փափաքէիր խմել,  
 շէրի՛:

Շէրին «ուիլֆի» պատասխանեց:

Քիչ ետք, կինը երկու ձեռք զաւաթով եկաւ, նստելու իր մօտ: Կնկան մարմինը մօտեցած էր իրեն: Այնքան, որ անոր միտին փոփոխութիւնը զգաց իր մորթին վրայ: Հեշտունքի ֆերմ այլք մը, կնոջ մարմնէն իր մարմնին կը թափանցէր: Բուրը մարմնով կը դողար: Ակնոջնէրը, ճակատն ու քունքերը փլրփուր կը կապէին: Երիտասարդական սարսուռներ ծաւալեցան, ցնցեցին դինք եւ անփորձ աղու շփոթանքին մէջ դրին:

— Կը ներես որ շծանօթացանք: Իմ անունս մատամ նեյլի նուտարի: Քո՞ւկդ, շէրի:

— Նորայր Սարգիսեան:

— Ես քեզի նօսոջ պիտի բսեմ:

— Անանկ ապուր չուտես, Նո-բայր եւ Նո-բայր Սար-դիս-եան, Հասկնալի է, չէ՞:

— Օ Բէյ, նեղուելու Հարկ չկայ, այսպէս ալ լաւ է, Նորայր, — աւելցուց մատամը եւ աւելի եւս ծօտեցաւ:

Կինը երէկոսան կօճկուած վիճակը չուէր: Արդուկուած մաղբուն Հարուստ խորձը ցրուած էր ուսերուն վրայ:

Մաւի աչքերը, փոթորկոտ ծոփու խնթութիւնը եւ հորիզոնին խորութիւնը ունէին: Ու Նորայր խեղդուեցաւ այդ ծոփ աչքերուն փոթորկոտ այլքներուն մէջ:

Այտերն ու շրթունքները մերկացած էին, ու թարմ շրթները ելակի մը աղւորութիւնը ունէին: Հասուն էին. հասուն:

Ամառնային թեթեւ հազուստին տակ, ծիծիկը խենթացած՝ պարմանուհի մը աղատութեամբ կը պարէին...

Շրթները մօտեցան իրարու: Տղան խածաւ զսինքն արիւնելու աստիճան: Ծծեց:

Քիչ ետք, պուխները բռնած, միասին անկողին պառկեցան:

Յաջորդ անգամներուն, նեյլի գեղեցկութեան շարունակ մարմինը Նորայրի մօտ չողին գողին գեղեցկութեամբ, կեանքով եւ կիրքով լեցուց: Յորդեցաւ, յորդեցաւ...:

\* \*

Այն օր, բուրբովին արտասովոր քաներ պատահեցան:

Այն օր, ծովը իրենց զողանիքը թափելու շափ խորութիւնը ունեցաւ:

Այն օր, նեյլի տնասնային, բուրբովին վայրի, անկաշկանդ Հեշտանքով աղբու ախորձակ մը ունեցաւ:

Ու Նորայր արտակարգ անհամբերութեամբ այն օրուան սպասեց:

\* \*

Փամը մը ի վեր, այն օրը, իրեն զունաւոր օր մը ապրելու բացառիկ բուրբ պայմանները կը շնորհէր:

Այն օր: Տղայ մը: Քիչ մը՝ բերանը կաթի հոս: Թարմ: Փոթորկոտ խենթ արամազրութիւններ: Պրկուած Վեղեր:

— Պոտիկ տիկի՛ն, դուրը բաց, թաշկինակս ներս մնաց...

— Ինչ բո՞ր, — Հարց տուաւ արարերէն:

— Այսօր ձեւն պիտի դայ...:

— Քոմի՛, նոյն շա՛ր տղան ես:

Լիահազազ քրքջացին:

Նեյլի շուր նետուեցաւ:

Նորայր փորձեց լուծում մը տալ:

Իրենց մտերմութիւնը պոյաւորող աղբակները պեղել: Առեղծուած մըն ալ այս: Կի՞րք: Աէ՞ր...: Բայց այս մէկը ինքնին Հանելուկ մը: «Աէրը ծով է», բնած էր Աստուած օր մը: Մո՛վ: Բայց ի՞նչ էր ծովը, եթէ ոչ՝ քսոս մը: Ախարհ մը անթափանց: Անդունդ մը տնեղ: Կեանքի մէկ շատ ընթացիկ, դրեթէ ամէնօրեայ պատմութիւն: Պատմութիւն մը Հին. պատմութիւն մը նոր, որ կը նշանակէ շրթունքներու վրայ մաշուող հանապազօրեայ երգ, մրմունջ, աղօթք: Մայր, կին, դուակ չճող հայհոյանք: Գութ, ատելութիւն, կարօտ, նախանձ, անկողին եւ անկողին... յետոյ ճար կեանք... գեղեցկութիւն...:

Եւ սէր կը նշանակէր գեղեցկութիւն, որ իրաւ է եւ աղուոր ներկայութիւն մը: Ինք միայն այս պիտէր: Ուրիշ ոչ մէկ բան:

Անորը ո՛հր շէր: Իրը սէր չէր: Կերթ էր: Յանկութիւն: Փոթորկոտ խենթ ախորժակ էր: Պրկուած ջիղ:

«Այս կինը միայն զիս կը ցանկայ: Ոչ աւելի, ոչ պակաս», եղբակացուց: Այո՛, եւ ային թոռնաբլիշը, ուրիշին կինը, իր լարուած ջիղերուն համակ կենսականութիւնը կը ցանկար:

Արիւնին հաղորդականութիւնը... Ըսել է՝ միսին տաքութիւնը: Արոշեց սահմանում մը տալ: Փորձաքարին դարձել զայն: Մտածեց: Միայն մէկ բառ... մէկ բառ... — Բո՞ղ...:

Խառնածին մտածումներ, զիրար խաչմանոց կասկածներ, տեղի-անտեղի ենթադրութիւններ, իբրեւ վարձակալ՝ Նորայր Սարգիսեանի զանկէն ներս տեղաւորուեցան: Մայր, ուրիշին կինը, բող, արժանապատուութիւն, դաւաճանութիւն, խարնդայութիւն, սրկայութիւն... Աւղեց վերջ տալ իր բանականութիւնը ճմլոց այս մղձուանջին: Իրեն ի՞նչ: Մայր էր, թող ինք մտածէր, խրփո՛ւ ամուսինը թող հողար:

«Պարապ աեղը ինչո՞ւ դուն քու տապալիդ մէջ կը տապկուիս, դուն ապո՞ւշ ես», ինքզինք յանդիմանել փորձեց, ազատուելու համար այս ջղադրդիւս վիճակէն:

Ուրեմն. «Ճիւղերու պէս», եղբակացուց եւ էզին ներկայութիւնը փնտռեց:

Ատալին անզամ չէր, որ զայն իր բողուկներուն մէջ ունենալու ախորժակը կ'ունենար:

Այդ մէկը շատ սոփորական, պարզ երեւոյթ մը դարձած էր:

Ի վերջոյ, ինչո՞ւ ախքան յոգնութիւն: Ինչո՞ւ ախքան ժամավաճառութիւն: Այսքան ծախս վասն ինչի՞:

Ի՞նչ, տղուն հետ, հեշտանքի անհուն ծովերը նաւարկելու կանխամտածուած արամաղորութեամբ դրօսանալը վարձած էր: Այս մէկը զէթ, պարզ էր ու յստակ արեւի լոյսին պէս:

— Զրօսանաւ: Ծօ՛ւ անունը վրան է,

— ախմախ, դրօսնելու նաւ, — խօսեցաւ ինքնիրեն ու ծով ինկաւ:

Հիմա, ինք՝ խարխիսէն արձակուած միսէ խորտընկէց մըն էր, որ պէտք էր փշրէր այս ցոնկայարոյց էզին ջիղերը, ախորժակը: Պէտք է իբրեւ ջերմութեան եւ հեշտանքի ովկէան փոթորկէր, յորձէր, առնէր զայն իր բողուկներուն մէջ, խեղդէր, թաղէր... ու ապրէր... ապրէ՛ր...:

Մատամ Նելլի նշմարեց որորդը: Փարուստի դիմելը ժանուկի խաղ պիտի ըլլար, իսկ առանց պայքարի յանձնուելը՝ համ-հոտ չունէր:

Նորայր մօտեցաւ որսին: Զեռքերը սուղուեցան: Մտանքը մօտեցան միսէ գեղեցկութեան շարտուանին: Մօտեցան այնքան, որ ջուրի գաղջութեան մէջ իսկ տղան անոր ջերմութիւնը զգաց իր մորթին վրայ, իր մարմնին մէջ, եւ իր մարմնէն անդին՝ կինը տղուն մասններուն տաքութենէն բռնկեցաւ:

Նելլի մէջքին վրայ տղուն մասններուն ներկայութիւնը կ'ապրէր: Նորայրի ափերը բոց ու հեշտանք կ'եռային:

Կը պրկուէին տղուն ձեռքերը: Զուկը կը թփրտար՝ ձեռքերուն ստեղծած հաճելի ցաւէն դիմոյցած:

Նորայր էզին շրթներէն մեղր ծծեց, եւ ային մնացորդը աւելի եւս փարեցաւ:

Արդարեւ, փարելու, տղուն բողուկներուն մէջ հայելու իրաւունք ունէր: Ի՞նչ էր իբր: Կեանք: Եթէ ըլլար մօր փէշին տակ մեծցած այս տղան: Տղաքը: Քաշքուք մը պիտի ըլլար իբր: Բայց ո՛չ: Ինք կ'իւն էր: Բոց էր... հոց էր...:

Ամուսի՞նը: Ծարպէ դունդ ու կլոջ այդ անուտ թոյլ մտակոյտէ խամսնիկը: Անկողնին մէջ բացակայ ներկան, որ իր ստանութեամբ կը կրծէր իր գիշերները: Ինչո՞ւ ախքան բոց:

Կեանքի համար: Ապրելու համար: Եւ Նելլի գիտէր ապրիլ:

Զրօսանաւու վրայ, երբ մարմինները իրարու կեանքի պոեման կ'արտասանէին:

— Այսօր իրիկունը մեզի եկուր:

— Ի՞նչ...  
 — Ամուսնութեան շորքորդ տարե-  
 դարձն է... :  
 — Ամուսինդ...  
 — Արժէք չունի...  
 «Արժէք չունի... արժէք չունի...  
 արժէք չունի... չունի, չունի...» :  
 Գորշ մտածումներ եկան մթազնելու  
 ջերմ ու երանելի մթնոլորտը :  
 — Ծօ՛, սրկիւ՛յ, շե՛ս ամշնար, դուն  
 մարդ չե՛ս, պատիւ չունի՛ս, բարոյական  
 կոչուած ապրանքէ՛ն ալ չունիս, չէ՛ր  
 գիտեր, որ Նելլին մատամ է. դիտէ՛ր-  
 չա՛ն պէս գիտէ՛ր : Ծօ՛, դուն ուրիշին  
 կնկան հետ թ՛նչ գործ ունիս, քրիստոն-  
 եայ շե՛ս... լա՛ւ մարդ ալ չես, հը՛...  
 չխօսի՛ս... ու դեռ ինքզինքդ հոս ու  
 հոն... բարի՛, աղի՛, վեհա՛նան,  
 պատուախնդի՛ր... Ծօ՛, այս բոլորը դուն  
 չե՛ս, — սուչեց հայր լուս :  
 — Վայ քեզի ապո՛ւշ, դարձեալ նոյն  
 յանկերգը սկսար, այսքան ալ ախմախ,  
 — պոսթկաց Նորայր Սարգիսեանի մէջ  
 յայտնուող երկրորդ դէժքը :  
 Նելլի ժպտեցաւ :  
 Նորայր դիպց, որ երակներէն ներս  
 բան մը սկսած էր արողանալ, արտասո-  
 վոր արտադրութեամբ :  
 Վաւաչուտ զիրկնդխտանումներ ձու-  
 լեց դինք հեշտանքով արբշիւ :  
 Արդարեւ, երանական բան մը ու-  
 նէր պահը : Իսկ քաղցրութիւն մը, ջեր-  
 մութիւն մը, համով մեղկութիւն մը ու-  
 նէր այս բոցէ մարմինը... ճիշդ լսխումի  
 նման :  
 — Ականջը իտի, Կարպիւ, լսխում  
 չէ, դայմա՛խ է, դայմա՛խ... — մըտ-  
 մըտաց Նորայր թրքախոսն հայերէնով  
 մը :  
 — Ի՞նչ ըսիր, — հարցուց կինը օ-  
 րարեմէն :  
 — Փը ք՛էմ, շէրի, — եւ համբոյրի  
 տարափով մը ողորկեց... ծիծերը, վիղբ,  
 ալանջները, չրթները... :  
 — Կ'ուղեմ միշտ դրօսանալուն վը-  
 րայ, կողքիդ թլլայ, — ըսաւ կինը :  
 — Կա՛ւ, գիտիկա :  
 Փիսիկը ինքզինք շոյուած զգաց :

— Դուն միշտ այսպէս ես, — հաս-  
 տատեց ազջիկը պահ մը լուսութենէ ետք :  
 — Ինչպէ՞ս, — հարցուց տղան :  
 — . . . . .  
 Քիչ ետք -  
 — Գիտե՛ս ի՛նչն է որ մեզ իրարու  
 այսքան մօտեցուցած է, — լուսութիւնը  
 իրեց կինը :  
 — Ի՞նչ...  
 — Այս աշխարհին վրայ մեր ներ-  
 կայութիւնը յետոյ՝ բացակայութիւ-  
 նը...  
 Ըսաւ կինը ու խնդաց :  
 Նորայր մաքէն «ապուշ» ըսաւ ու  
 խնդաց :



Օրերը նոյն ձեւով չբուրեցին :  
 Թերեւս ամէն բան նախկին դունա-  
 ւոր գեղեցկութիւնը ունենար, եթէ այդ  
 օր Նորայր սրճարան երթալու փափուք  
 չյայտնէր :  
 Յետ միջոք էր : Թափսին կեցուց  
 սրճարան երթալու : Երկու շաբաթ է  
 վեր չէր խաղցած : Բոժակ մը դարեջու-  
 րին հետ, քանի մը ձեռք . . . . .ը ինք-  
 նամոռացութեան ու խարկանքի բարե-  
 րար դերը կը խաղային :  
 Թափսին մէջ, քովը մարդկային ոս-  
 կոր ու կաշի մարմին մը նստած էր : Հա-  
 լչոյի պիտակի եւ խաղողի այգիներուն  
 մէջ դետեղուած իրտուելակներուն պէս  
 բան մը :  
 Գլուխը դարձուց պատուհանին :  
 Գուրսը մայթերուն վրայ կետեք կ'իտար :  
 Իր մարմինը յողնած էր : Ջիղերը  
 քակուած էին :  
 Արմուկը հանգիւցուց պատուհանին -  
 եւ այդը ափին մէջ առաւ :  
 Դիմացի Զարտ-Մուսքան-ին մէջ  
 նստող կինը Նելլին էր : Քովինը մոնկու-  
 եան պիտով եւ այծի մօրուքով տոն-  
 ժուան մը :  
 Բոլոր մարմնով կը գեղեւէր : Կար-  
 մբութիւն մը մազնիսի պէս փակած էր  
 մորթին :  
 Կեցուց ինքնաշարժը պառ մտնելու :

Առաւօտեան զէմ ուղտի քայլերով  
սուն վերադարձաւ :

Փամուռն մը մըրափէն ետք, երբ ար-  
թընցաւ, ստուտիկ քրտնած էր :

\*\*\*

Երբ փողոց իջաւ, խանութէ մը Ներ-  
լիին հեռաձայնեց և յաջորդ առաւօտեան  
ժամը իննուկէսին համար ժամադրու-  
թիւն առաւ : Յետոյ մինչեւ յաջորդ ա-  
ռաւօտ երթալիք տեղ չգտնելով, պա-  
տահական զինեատուն մը մտաւ, խմիչքին  
միջնորդութեամբ ինքնիրեն հետ խօսե-  
լու :

\*\*\*

Հակառակ անոր, որ Նորայր ըստ իր  
սովորութեան ժամադրութիւնը շար-  
դեց, սակայն Նեյլի այդ մասին խօսք չը-  
բաւ :

Տղան թթուած դիմադիծէն Նեյլի  
ենթադրեց, որ շէրիւն բաներ մը ունի  
մըմտալիք :

Տղան չխօսեցաւ : Նայեցաւ լուռ :  
Դէմքին վրայ ա'լ ժպիտ չկար :

— Ի՞նչ պիտի իմես, շէրի, — հար-  
ցուց Նեյլի :

— Ոչինչ :  
— Դուն այսօր տանիքէ՞ն ինկար, —  
կատակեց կինը :

— Հա՛, քեզ կը հետաքրքրէ՞ :  
Ապա՛ :

— Առջի օր որո՞ւն հետ էիր :  
— Ուխտի տա՞մ... :

— .....  
— Չխօսի՞ս... :

— Թախտիս մէջ :  
— Ծանօթի մը հետ :

— Դուն զիս ի՞նչ կարծեցիր, —  
բարձրացաւ տղուն ձայնը :

— Ի՞նչ կ'ուզես ան կարծէ, քեզի  
պէս ուալատի մը հետ ժամադրուած էի,  
հասկցա՞ր :

— Ինչո՞ւ...  
— Ոչինչ, ինչու ես ձերին վեհա-  
փառութեան պերի՞ն եմ : Դո՛ւն զիս ո՞վ  
կարծեցիր, — պոռթկաց կինը, — բայց

ունչ, կրակ ըլլաս՝ դուն քեզ չես աշ-  
րեր : Մէյ մը սա ուալատին նայի՛ր, հա՛,  
հա՛, հա՛, հա՛, հա՛ա... — մտքէն ինչեր ալ կրր-  
նայ անցընել եղեր, հա՛, հա՛, հա՛, հա՛,  
հա՛ա... դուն զիս բո՞ղ կարծեցիր, հա՛,  
հա՛, հա՛, հա՛, հա՛աա... վայ պանտուր  
քեզի :

Եւ դարձեալ նոյն զնգուն քրքիջը :  
— Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛աա... :

Պանտուր ապշած էր :

— ...Ով որ ցանկամ, անոր հետ կը  
պատկիմ, — շարունակեց կինը խիստ  
ձայն մը կեղծելով, — այն ուալատը,  
որ ինծի դո՛հացում կու տայ, անոր հետ  
եմ... :

Եւ դեռ՝  
— Քեզի պէս ուալատները կը սիրեմ  
այնքան ատեն... որքան յապուրդ կու  
տան ցանկութիւններուս :

Ապա՛  
Դարձեալ խնդուք, շատրուան խրե-  
դուք, պարչահոտ, ու ուսմիկ այս ծա-  
ւալող, դիրքող ձայնին վազըր, շատրու-  
ան վազըր տղուն սկանջին մէջ ելաւ  
փոթորիկ, ծառայող փոթորիկ, երկրա-  
շարժ ներաշխարհի եւ... :

Ուալատը ջղայնացաւ : Ապացոյց, որ  
ինք պանտուր չէր, փաստ որ այս ինկա-  
ծին շպտաստանեց : Աւելի ճիշդ՝ ուղեց  
պատասխանել : Փնտոց բառեր, որոնց-  
մով լուար դայն : Սակայն... իր բառե-  
րը, քաղցր, մտերմիկ, հաղորդական...  
Եւ այդ բառերու համերդին ամէնէն  
զոհնիկ եւ փողոցային գարիկայի բառը,  
կը դառնար քաղցր, մտերմիկ, հաղոր-  
դական եւ սիրելի բան մը իր շրթներուն  
վրայ, օղիին պէս համով, օղիին չափ  
փնտուած, հաղորդական, շերմ... :

Իր բառերը... եւ... ինք :  
Իր ընդհանուր արձանէն շղատուող,  
միւսէ այս արձանին տարբեր ու բոլոր-  
վին արտասուվոր քաղցրականութիւն մը  
ու հանելի ջերմութեան մը սա տաք յա-  
ճախանքը, յանախանքը զեղեցիկին, եւ  
իր ներաշխարհին նման զեղեցիկ ու բա-  
րի այս զեղեցիկ բառերը... իր ընդհա-  
նուր պատկերէն պերագոյն լրացուցիչ  
տարբերը :



Ինք ու բառերը...: Որոնք տարբեր, բուրբոսիկն արտակարգ երանդ մը ունէին. բուրբոսիկն արտասովոր քնքշութիւն...

Ու դեռ՝ Հազար բան:

«Բողոքը կը խօսէր տակաւին: Անորը բառ չէր: Լուստնք էր: Գարշահատ: Բայց այլևէ, պոռչտացող այս արարածին հետ զբաղելու նախկին անորժակը ունեցող տղան չէր. ապացոյց, որ պանտուր չէր. փաստ, որ ինք զաւակ էր բիրտի: Պանտուր թերեւս ինք էր: Ինք՝ Նորայր Սարգիսեան, ալ ձանձրացած էր բողոքին շնորհներէն: Այ այս մէկը իրեն համար կ'ըլլէր հողմոյթ չէր: Թերեւս ուրիշներուն համար...»

Ուայտ, պանտուր բառերը հրաւերով քրքրէի մետաքս թելերուն հետ, սահած, թափանցած էին իր ուղեղէն ներս. մտած էին իրենց առաձգական ծիրին մէջ, կ'արձագանդէին, կը գիրնային, կ'երկարէին, կը հասունային ու կը ճաթաւտէին անխորժ աղմուկներու ծրնունդ տալով:

Այսպէս:

Մրայրուած քայլ մը չէր առածր: Ասիկա կը պատահէր յաճախ, երբ առանց անդրադառնալու, կանխամատուած առանց մէկ որոշումի, ի զարմանա բոլորին. մեքենայացած մէկ պահուն, երբ մարդուն լիզերն է որ միայն կը խօսին, անակնկալ քայլ մը կ'առնուի:

Նոյնիսկ ինք՝ երբ ուղբի եկած էր, չէր հաւատացած, թէ ինչպէս կարողացած էր նման անհաշկանդ որոշում մը առնել:

Հայը գտն էր արդիւնքէն: Որովհետեւ իր աչքերը պատուած էին ամպը երտողին ու բաղաձայն կարծուած ձայնը պոռթկացած էր ուժղին:

— Հէ՛յ կարաւան, կանգ առ...:

Ու խրտուիլակի թելերուն նման հորիզոնական լացուած անջիղ թելերը, ահամայ, մէկ բուլբուլ, կարողացած էին կանչնեցնել վնասցիկն սրարշաւ կարծուած վաղբը:

Ինք, այլևս իրաւունք ունէր վերա-

դառնալու իր դասական հաւատարակչուած ապրելակերպին: Եւ աղիճին նեխած մխերուն մէջ թաղուած, փտած արմատներուն տեղ սկսած էին նորերը ծլիլ: Կաթի պէս անարտառ ու սպիտակ վայլուն ստամոնք:

Ի վերջոյ, իր հունէն շեղած պղտոր ջուրի այս բարակ երկը, որուն ճանճի պղտոր զարգին մէջ մահ մը կը սպասէր, ջուրի այս երկը պոռթկացած էր ուժգին, նախ դարձած բարակ ու սոսիւտ վտակ, ապա սոսիւտ կացած էր գարձեալ ու յասակ, շատախօս, ուրախ ու համակ կապոյտ գետ դարձած, վազած էր նախկին ուղիին:

Եւ ի վերջոյ, մատամ նեխի թուտորի կոշուած այտը կը բռնկէր, հրդեհ մը, որ մինչեւ ականջներն ու աչքերը կը տարածուէին: Փաստ՝ իր ափը հնչած էր ուժգին: Ու մետաքս կարծուած այտէն աւելի արժանապատուութիւն բարձր կ'արհեստը լուս:

Նորայր բողոքին աչքերուն մէջ փութորիկ ու փրփուր տեսաւ:

Մատամը կ'արտասուէր:

\*\*

Օրերը եկան, անցան: Երբեմն ծոյլ իլրտումներ ցանկելով Նորայրի սրտին մէջ: Ապա՝ դարձան բնական, շատ սովորական պատմութիւն:

Քամին տարու էրեն հետ ամէն բան: Անցեալի բազմերանդ ներկայութեանէն մերկ ծառ մը մնաց միայն:

Այսպէս վերջացաւ առժամեայ պատմութիւնը:

\*\*

Վեց տարի կ'ընէր այդ դէպքը, որ մէ Նորայր ոչինչ կը յիշէր:

Վեց տարի ետք, Նորայր դարձեալ Պէյրուսի եկաւ համայնաբանական մասնագիտութիւնը ձեռք ձգելու:

Իրեկուն մը, Նորայր վրդոված վի-

ճակի մէջ տուն վերադարձաւ եւ օտերճ  
խմելէ ետք՝ անկողին մտաւ:

Առաւօտուն սուրճը կրկնուեցաւ սի-  
կարէքով:

Սուրճին անուշ բոյրէն զինովցած՝  
փոխադրուեցաւ երէկին:

\*\*\*

Երէկ, օրը Հինգշաբթի էր: Ծառ սո-  
վորակուն օր մը: Բայց... այո՛: Երէկը  
իրեն համար, անշուտ իրե՛ն համար  
միայն, թերեւս նաեւ անո՛ր համար ալ  
— ո՛չ, միայն իրեն համար — գլխազիր  
Հինգշաբթի մը ըլլալու... չէր:

Ինք՝ Նորայր Սարգիսեան, վայելիչ  
կողմէ ժլատ՝ Հալէպէն Պէյրութ համա-  
լսարանական մասնադիտութիւնը ձեռք  
ձգելու եկած երիտասարդը, սինեմայի  
պատկերները դիտելէ ձանձրացած սը-  
ղան, կենդանի պատկերներուն խորու-  
սիկ պատրանքէն զինովցած սքրիպ-քի-  
զի շօն իր համակ մեղկութեամբ ապրե-  
լու տարփանքով, հաստատ քայլերով,  
քապարէ կոշուած հանոցասրահը մտած  
էր:

Պաւաթ մը Բախմիլին տեղ, սպտսեա-  
կը շիշ մը Բախմիլի եւ կարմիր վարդի վը-  
բոյ պնդանեղուած բացիկ մը բերու:

Սպտսեակը զիմացի սեղանը ցոյց  
տուաւ:

Նեյլին էր. կը ժպտէր: Քոյինը ա-  
մուսինը չէր սակայն... մոնկոլեան պե-  
խով եւ այծի մօրուքով տոն ժուան մըն  
ալ չէր: Շիկահէն, յաղթանդամ, երե-  
սունհինդոց երիտասարդ մըն էր, որ  
բոս երեւոյթի հայ ու արար չէր:

Նեյլի նայուածքները պահ մը դամ-  
եցան իր աչքերուն: Սուղուեցան. եւ  
անցեալ օրերու յիշատակը քրքրեցին:

Այդ նայուածքները, անցեալին գա-  
պարէին մէջ տղուն կողմէ որսացուած  
նայուածքներուն աչնուութիւնն ու ի-  
մասաբ ունէին:

Հալէպ 1969

Բացաւ պահարանը:

«Անուշիկս, շա՛տ սիրելի Նօնօշս»

Գիտեմ որ պիտի ընդվզիս, երբ Նօ-  
նօշ բառը կարդաս: Բայց, այս անգամ-  
ւան համար միայն սիրով ընդունէ  
գայն: Քանի որ, այս տողերը գրողը, իր  
պահապանին պէտք ունի:

«Ներգութիւն անցեալին գործած  
սխալիս համար:

«Վազը երկնայեան ժաւը Եիմ կը  
սպասեմ Քօթօտի սրնարամ:

Համբոյրներով՝  
ՆԵՆԼԻՅ

\*\*\*

Ամիսներ ետք, տմառ օր մը, որու  
ընթացքին օդը սովոր է հեղձուցել ըլլալ,  
իսկ արեւը կրքոտ՝ Պէյրութ քաղաքին  
մէջ, ծովեզերքը հանդիպեցան իրարու:

— Բարե՛ւ:

Նոյնն էր, չէր փոխուած:

Նորայր քաղաքավար կերպով պո-  
պոտտսխանեց բարեւին ու դառնալով  
կրրորդ անձին:

— Բարեկամուհիներէս Տիկ. Նեյլի,  
որուն մտաին զեկի խօսած ըլլալու եմ, —  
կրկեց արարեբէն:

Ապա, թեթեւակի ժպտիլ կեղծելով.


— Նախկին Օր. Սոնա Գրիգորեան...:

Տիկինս, — աւելցուց բառերը ծամծմե-  
լով:

Հահառակ անոր, որ կէսօրին ծովը  
միասին ճաշեցին ու դիւրար խաբային, ի-  
րարու յաջողութեան եւ ուրախութեան  
կենացներ պարզելով, սակայն երկնոյ-  
եան միասին աւղ մը անցրին յու Տէր եւ  
Տիկ. Նորայր Պարթեւեաններուն առա-  
ջարկին համար, Նեյլի ներդուրիւն  
խնդրեց կարեւոր ժամադրութիւն մը  
պատրուակելով:

Եւ օր մըն ալ, դարակներու դասա-  
ւորման ընթացքին, սիկարէքի պարսպ  
տուփի մը վրայ՝ անխնամ եւ ջղուգրիկ  
զրուած Հանգէն, որ Նորայրէն մտացած  
էր, ճղմեց եւ աղբաման նետեց:

Ս. Կ.



### Գ Ր Ա Կ Ա Ն Վ Է Ջ Ե Ր



Փ Ի Լ Ե Ր Պ ՈՒ Ի Ժ Ա Ս

Արժույթի, Քառերգի ու Փրանսիսի բուրդը գրողներուն պէս միամտանակ քանի մը Քերթում մէջ յայտնուող ստորագրող Փիլիպ Պուրթուս, Եմիլիո Գրուլանս-ի թիւ 1231 եւ 1236-ին մէջ, երկու գրութիւններ ստորագրեց, որոնք նուազ շահեկան չեն նաեւ մեզի համար ու կ'արժէ որ կարգադրուին բարձրին կողմէ:

Վերջին ստանձնակին գրականութեան զարուար կենսափորձը արհամարհուց եւ նոր յաւակութիւններ տալով քուզ շարժումներ երեւան եկան, որոնք պահ մը ուշադրութիւնը գրուեցին ստեղծուած, կարճ ժամանակ մը ետք նուազեցան ու Հիմա կ'արժանանան Հակոբաբէի երկեր, որոնց հաշուարկուողը կը կատարէ Պուրթուս, սեղորդ արամաքանութեամբ մը:

Արհարկուած շարժումներէն առաջինը հրատարակ եկաւ վաթսուներեակ թուականներուն, ընդ Վէպը սնունդ ու իրերու նորութիւն ժողովրդաբան իր կենտրոն եւ մարդուն փոխարէն ժողովրդացու առարկաներուն, իսկ երկրորդին զննարկները եզան Եմիլ Գիլոյ եւ Եմիլիոս Հանդիսիտուն երիտասարդները, որոնք հակառակ մարքսիստական աշխուշ մաշած դաղափարներուն աշխարհային հանգամանքին, իրենք զիրենք յառաջապահ գրողներ դաւանեցան, ստանձնելով աշխարհային ընդարձակ թիւրիմացութիւն մը:

Փիլիպ Պուրթուսի համար թէ՛ ընդ Վէպի ստորակայապաշտները, թէ՛ գրականութեան ազգայնի գերեր սահմանող Եմիլ Գիլոյ-ի ուշացած մարքսիստները վրիպած են անկանգնութեան, որովհետեւ առանց մարջ էակին չկայ գրականութիւն, ինչպէս եւ չկայ, չի կրնար ամբողջական գրականութեան պատկանիլ մարքսիստ կնիքով խորագրուած որեւէ էջ:

Փիլիպ Պուրթուսի համար մա՛րջն է գրականութեան անփոխարինելի ու յանձնարարական նիւթը ու ազատութիւնն է գրողներին բացարձակ պայմանը, առանց որոնց կարելի չէ անպատիժ մնալ, ինչպէս պատահեցաւ Հոկտեմբերի մէջ մըտած ընդ Վէպի-ի Հասարակներուն ու Երկրորդային Միութեան մէջ պարտադրուած ծառայական գրականութեան յիմնական փորձին:

Գործարարութիւնը եւս ունիւք հետեւեալ ստորակայապաշտներ ու մարքսիստ վերջամասնիկ եւ ճի՛շդ ստոր համար խորհրդանշան եւ անդրադարձուի պատեն ստիճաններ են Պուրթուսի կատարած հետազոտ սխտանանշանները:

### Պ Ա Յ Տ Պ Ա Ն Ո Ղ Ա Կ Ա Ն Զ Ա Ռ

### «ԱՄԲՈՂԶԱԿԱՆ» ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԸ Ի ԽՆԴԻՐ

Շարժում կայ:

Ամէն կողմ:

Ահաւոր ուժ մըն է, որ կը ձգտի դէպի յոյսը, որ ելք կը փնտոէ, որ յամաօրէն թնջի Գիշ-ի փշտակները կը պեղէ: Այդ ահաւոր ուժն է, որ կը խուզարկէ երբեմնի ճնոր վէպ-ին երաշտ մնացորդները եւ անդրականութեան (alittérature) փշրանքներուն գէղերը: Բանաստեղծութիւն, ուշադիր եղիր, արտաքենադատութեան (hyper-critique) դարաշրջանը պիտի չբանայ, անհետանայ:

Բանաստեղծութիւն, ուշադիր եղիր: Մաղիկներով դարդարուած աղջիկներուն մասին չէ որ կը խօսիմ այստեղ: Չեմ խօսիր այստեղ իրենց լորձնոտ ծալքերը քակող շնական ու շինծու եղիութիւններու մասին: Չեմ խօսիր այստեղ բանտէն փախած թիպարտներու, շարժապատկերի լաւ կերտուած վարպետներու: Կամ եղբայրական ծիծաղաշարժ պատմութիւններու մասին, որոնք միլիտանով հրապարակ կը հանուին եւ քնքոյշ քննադատութեան շնորհիւ փրփուր կ'առնեն, կը յորդին:

Ո՛չ:

Չիս հետաքրքրողը ապագան է: Ես կը յայտնեմ ապագան: Գրադէտները, կ'ըսեմ ես: Ես կը խօսիմ իրենց սենեակներուն մէջ փակուած երիտասարդ տղոց մասին, պարսպ, ճերմակ թուղթի

դիմաց՝ սնանած, կշտացած բոլոր ձևի տեսութիւններէն, բանավէճերէն, մեկնարանութիւններէն, յողուածներէն, որոնք Ալթիզըրը կը մեկնաբանեն: Տեսութիւններէն, որոնք Լաքան կը մեկնաբանեն, ու Լաքանէն, որ կը մեկնաբանէ Ֆրէճօյտը: Փլէյնէթէն, որ Սոլլերզ կը մեկնաբանէ, ու Սոլլերզէն, որ Մարքս կը մեկնաբանէ, Բոպպէն, որ կը մեկնաբանէ Կրիշէն, եւ Կրիշէն, որ կը մեկնաբանէ Բոպպ: Բիւզանդական անհուն, անվերջանալի ոլորապիծէն, որ վերջին տասը տարիներուն գրականութեւնը հասցուց այսօրուան վիճակին, գրականութիւնը վերածեց ա՛յն բանին, ինչ որ է այսօր, այսինքն՝ պորտի մը, կամ աւելի շիտակը՝ խիտնջի մը պատեանին, որ կը դառնայ անդադար, բայց միշտ պարսպ է:

Բայց ահաւասիկ որ այս դրութիւնը մահանալու վրայ է: Մեկնաբանութիւնն ու սարքովի գրականութիւնը այլևս չենք կրնար հանդուրժել: Մոյթերի ճեպարտաց կիներդու հերոսներէն թրիտթէնտական այս բանավէճերը կը մեռցնեն այլևս մեզ: Անվերջանալի այս իծքը՝ ծանօթ դուռ կը բանայ ուրիշ խճրճանքներու եւ պղտոր մեկնաբանութեանց:

Այս հրովարտակիները, որոնք վճարներ կ'արձակեն, թէ ինչպէս պէտք է ըլլայ վէպը: Այս քաղաքկուած սարսա՛փը, այս բացորոշ սպառնալի՛քը: Այս

թուղթե՛րը, որոնք կը հրամանադրեն, թէ գրականութիւնը անկարելի է կամ սուտ, կամ մեղաւորից, կամ մեռած: Դիակը առաջ է սակայն: Կը տեսնեմ զինք, որ ոտքի կ'ելլէ, կը ծառանայ: Կը մօտենայ: Զայրացած է:

Մեր սիրելիին՝ ան կ'ապրի տակաւին: Իր պայծառ ճակատը դիտութեամբ կը ճաճանչէ: Իբրև է, թէ շատ բան տեսած է, շատ բան կարգացած, այսուհանդերձ կոյս է միշտ: Անիկա, գրականութիւնը, վերստին կ'ուզէ ըսել ամէն բան: Եւ տակաւին կը պնդեմ հետեւեալը — Կը խընդայ անիկա, կը հեզեմ: Զուտի անվճարելի լրջութիւնը ո՛չ հետեւակներուն, ո՛չ ճեղք Վէպոյի ջատագովներուն, ո՛չ ճիշդ Գեղարտաններուն եւ ոչ ալ մարքսիստներուն: Պաթալի ծիծաղը՝ հորթի պող միտն ունի անհանդուրժելի էջերով չի մեկնարաներ անիկա: Եւ կ'ըսեմ մա՛րդ է ան: Կը քալէ ինչպիսով: Թող հետեւի պատմութեան: Թող բռնէ այդ պարտնենքն առաջինին կոկորդէն: Սարսափի սպառնալիցներ, միջատակներ, ձեր որջերը ապաստանեցէք: Եթէ էրեք ձեր կողերը իր ճանկերուն մէջ ի՞նչան՝ կը կտրտէ, կը ճզմէ զանոնք:

ԱՌԱՋԻՆ ԱՀԱՐԵԿՈՒՄԸ

60-ական թուականներուն սկսաւ առաջին ահաբեկումը: Այն ատեն էր, որ ճարտարագէտներու պզտիկ շուկատ մը հայելիներով, սոփիստութեամբ ու բանադրանքներով գինուած՝ վճարելու հըրամանագրեց, որ վէպին մէջ մարդը մեռած էր եւ իր տեղը պէտք է զիջէր ասորիկաններուն, ա՛յն պատրուակով, որ աւանդական վէպը կեղծ է: Բայց մատնանշուած այդ կեղծիքը նորութիւն մը չէր: 60-ական թուականներու ճարտարագէտները պիտո մը չէ որ կ'ընէին, անոնց ըրածը ուրիշ բան չէր, եթէ ոչ կրկնել աւանդական վէպին քննադատութիւնը, ինչ որ արդէն ըրած էր Սարթը 1939-ին:

Քոսն տարի ետք, մեռած տիեզերք մըն է որ Թող կրիչէ կը հարուածէ: Եթէ իր քննադատութիւնը կրնայ հասնիլ մինչեւ Պարթէներուն, Պարտոներուն եւ կամ անոնց տժգոյն ժամանակակիցներուն, այդ քննադատութիւնը, սակայն, չի կրնար դուրս վնաս մը հասցնել այդ շրջանի իրական երկերուն: Ան չի կըրնար դուրս ո՛չ Պրլթոնին, ո՛չ Պաթալին, ո՛չ Սարթըին եւ այն հուսկու ու բանաստեղծական կառուցումներուն, զորս կը բարձրացնեն այսօր Պրլթորը եւ Լը Քրիզդին: Յիշատակուած այս դէմքերուն զործերը կը ծաղկին ճարտարագէտներու քննադատութեան երաշտ շրջադիմէն զուրս: Այդ քննադատութիւնը գրականութեան հարկը թէ մօտէն կ'անցնի:

ԵՐԿՐՈՐԿ ԱՀԱՐԵԿՈՒՄԸ

65-ական թուականներուն էր որ տեղի ունեցաւ երկրորդ ահաբեկումը: Ճարտարագէտներուն ետք՝ մարքսիստները: Մարքսիստները կ'ըսեն մեզի — «Յիշատակուած այսօրու գրականութիւնը քաղցինի գրագնբու գարծն է: Այն միակ գարծնեկութիւնը, որ ներքին է այսօր գրագիտին հաս եւ ամէնուր՝ պրոլետարական յեղափոխութեան համար տարած աշխատանքն է»:

Բայց ի՞նչ է այսօր պրոլետարական յեղափոխութիւնը ըսուածը...: Քրիզի՞նն է արդեօք...: Սոլլէ՞րը...: Արակո՞նք...: Մտկուա՞ն է արդեօք...: Փեքե՞նը...: Փրակա՞ն...:

Անցեալ տարի, Սեպտեմբերին, Փրակա գաջի: Տեսայ շեխոյովաք համայնախմբի, որոնք կուտակուած էին ատկութեամբ եւ կուլային սովետական համայնախմբներուն ի տես:

Տեսայ Ղերենք ոտքի կեցած ողջ գիշերուան երկայնքին, Վինչեսլավի արձանին տակ, պզտիկ մոմերու դիմաց: Մոմեր, որոնք կը նշանակէին, որ իմա, այստեղ չեմ պրոլետարներ հրացանագարկ եղած էին ուսերու կողմէ: Բանաւէճը, որ պատճառ դարձաւ գերբարձ



պաշտ շարժման բեկումին, կը մնայ բացուած: Եթէ գրականութիւնը ինքն իր մէջ բացարձակ նշանակութիւն մը չունի, կ'իյնայ այնպիսի՝ իշխանութեանց ծառայութեան տակ, որոնք միայն մէկ կարգ կը ճանչնան, միայն մէկ օրէնք՝ ուժին օրէնքը: Այդ պարագային բառերը ուրիշ բան չեն, եթէ ոչ չարաչափ արդարացումներ եւ տխուր պատճառաբանութիւններ:

Աշխարհի բոլոր պրոլետարները հարեմբք ունենալու իրաւունք չունին, բայց առաջ դորապարները իրենք՝ ունին հարեմբք:

«Թեյ-Գեյ»-ի պրոլետարները այս անելին մէջ միջոցառած են այնչափ մը, որ չկարենալով իրենք իսկ ընել այն գրականութիւնը, զոր կ'անդամեն, որովհետեւ այդ պարագային պէտք էր աղատութիւնը շատագոյն իրենց ցուցափեղկերուն մէջ միշտ կը ցուցադրեն հետեւեալ մեծերէրը, — Սատը, Ճոյսը, Պաթալը, Արթօն, որոնք այդ ցուցափեղկերուն ձողերէն կտրուած կը մնան՝ Մոսկուայի մէն դատաւարութեան գոհերուն պէս: «Թեյ Գեյ»-ականները, այսպիսով,

գաժան յարգանք մը մատուցած կ'ըլլան այնպիսի՝ մարդոց, որոնք տքնեցան ո'չ թէ պրոլետարական յեղափոխութեան մը համար, այլ մի'միայն յեղափոխութեան: Ո'չ թէ պրոլետարիստի ազատագրութեան, այլ պարզապէս եւ մի'միայն աղատութեան ի խնդիր: Ամբողջական գրականութիւն:

Բառերը, մարդը, պատմութիւնը, ամէն ինչ այսօր կրնայ դրականութեան ծառայել, գրականութիւն ըլլալ:

Տասը տարիներէ ի վեր, գրականութիւնը լքած էր ամէն ինչ: Թող այլեւս բացարձակին վերադառնայ: Ոչինչ չի պակսիր իրեն: Ամէն բան ունի անկէաբացարձակ դաճնալու համար: Պորժեռ պատճած է այս հերետիկոսութիւնները: Մարդիկ եկած ու Քրիստոսը փոխարէն ուղած էին հայելիներով: Ուրիշներ եկած ու խաչը փոխարինել ուղած էին զերեզմաններով: Այս էր պատահածը, կամ վերիվարոյ այս:

Արդ, գրականութիւնը տուորային կոչը հայելին չէ: Անկէա մտնող չէ, ոչ ալ պրոլետարական յեղափոխութեան ծառայելու կոչուած որեւէ մէկ զործիքը: Եթէ որեւէ բանի վերածելի է գրականութիւն ըսուածը, ուրեմն ոչնչութիւն է: Եւ որովհետեւ ոչնչութիւն չէ, ամբողջութիւն, ամբողջականութիւն է անիկա, առասպելներն մինչեւ առեղծուածները՝ ի՞նչ է ամէն ինչ: Երբ կը մերժեմ, որ մարքսիզմին ծառայող զործիք մը ըլլայ գրականութիւնը, բանը չեմ ուզեր անպայման, որ քաղաքական րոման-դակութիւնէ գուրկ պէտք է ըլլայ: Ինչո՞ւ այդ պարագային ինք ըլլայ որոշողը, վճռողը, բայց երբեք ծառան:

Մարդը խզումի մէջ է: Ասանց անցեալի ուշխարհի մը մէջ է որ կը մտնէ ան: Պիտի լմանէ հոն, ուրիշ դտորաչորջանի մը գաղափարաբանութիւնը քաշկըտելով: Գիրքերը մոռացութեամբ միայն նուիրական կը դառնան: Գրականութիւնը կ'ստէ վարդապետութիւնները: Ան կը տենչայ միայն տին, որ չկայ, բացակայ:

ԱՆՎՈՐՐՈՒԹԵԱՆ ԳԱՃԱՃՆԵՐԸ

Հասա էրոքի՞ գո՞ւ... Քննադատնե-  
րը փխրուն բանի մը վերածնեցին զայն: Տեսակ մը փոշի, որմէ բոլոր հեղինակ-  
ները մտա մը կամ երկուք պիտի կարե-  
նային սփռել իրենց վէպերուն մէջ: Ես  
ափերով կը ցանեմ անկէ: Այսպէս կը  
դատեն այս դաճաճները: Անգորրու-  
թեան դաճաճները: Ես չեմ կարծեր որ  
էրոքի՞ գո՞ւ այդ աղբ ըլլայ: Բայց կը կար-  
ծեմ որ անհատին նրբացումը, փուճ,  
անցաւոր, մահկանացու անհատին ձրգ-  
տումը դէպի այն, որ կրնար ըլլալ, բայց  
որ երբեք պիտի չըլլայ, յօրինելի բան  
մը չէ: Անհատը ի՞նչն է, որ դէպի հոն  
կը ձգտի: Անհատին այդ նոյն տենչան-  
քը աշխարհին հանդէպ, հետեւեալ տար-  
բեր անունը կը կրէ- ԱԶԱՏՈՒԹԻՒՆ:

Անհատին այս ծղտումը, այս շարժումը,  
զոր շատ մը բաներ ճգնել կը փորձեն, կը  
ճղմեն, զայն կրնայ կանգուն պահել  
միայն ու միայն գրականութիւնը: Ժա-  
մանակը հասած է: Ամբողջական գրա-  
կանութիւն...

ՈՒՇԱԿՐՈՒԹԻՒՆՆԵ՛

ՄԱՐԿՍԻ ԳՊԻՐՆԵՐՈՒՆ

Քրական շատ պզտիկ պատահար մը  
տեղի ունեցաւ այս տարուան Յունուա-  
րի 10-ին: Օրաթերթ մը, իր գիրքերու  
աշխարհն կոչուող շաբաթական յաւել-  
ւածին մէջ, չորս փող նուիրեց «Քայլ»  
տիւ շրմէն» անունը կրող գրական փնտրու-  
տութիւնը նուիրուած հանգչսին, որ կը  
հրատարակուի երկու տարիէ ի վեր Կա-  
լիֆորնիայի հրատարակչական ընկերութեան  
կողմէ: Ժորժ Լամպրէշի անօրհնու-  
թեամբ: Այս չորս փողերը պատահա-  
կանօրէն ներմուծուած էին տարեկան  
դոյզ էջերուն մէջ, զորս պատուարժան  
այդ թերթը, որ պետութեան գլխաւոր-  
ներուն, ուսանողներուն եւ այս առիթը  
ստորագրողին հաշիւն է, նուիրած էր  
«Թիլ Գել»-ի եւ «Շանճ»-ի, որոնք ըստ

իրեն կը մարմնացնեն գրականութեան  
յառաջապահ թելը:

Եւ անգամ մը որ յառաջապահ բու-  
ռը նետեցինք մէջտեղ, հարցնենք, թէ  
ի՞նչ ըսել է յառաջապահ:

Մարքսիստ հանդէս մը, որքան ալ  
համարձակ ըլլայ ու քաջ, կրնա՞յ կոչ-  
ւել, կարելի՞ է որ կոչուի յառաջապահ  
հանդէս:

Մարքսիստ զբաղէտ մը, որքան ալ  
նորարար ըլլայ, կրնա՞յ կոչուիլ յառա-  
ջապահ գրադէտ:

Մարքսիստ ամբողջութիւն մըն է,  
հինցած ամբողջութիւն մը: Իր դրական  
յառաջապահը յառաջապահ է արդեօք  
տակաւին: Ինչու յառաջապահները Փրա-  
կայի մէջ են: Քիչ մը շատ կ'ըլլար ըսել,  
որ անոնք Փրակայի մէջ կը մարմնացնեն  
յառաջապահը, յառաջգիժութիւնը:

Կ'ուզեմ նախ ըսել, որ կը սքանչու-  
նամ Սոլլէրդին վրայ: Կը հիանամ իր  
դժուար գործին վրայ: Կը հիանամ այն  
ճիւղերուն համար, որով կը փորձէ գրա-  
կանութեան առարկան վերանորոգել:  
Այս ճիւղը ի գործ կը դնէ իւրաքանչիւր  
ճշմարիտ գրողէտ, եւ կը կարծեմ, թէ  
ատիկա է բացարձակ այն չափանիշը, որ  
անժխտելիօրէն պողը կ'անջատէ ոչխա-



Ֆիլիփ ՍՈԼԼԵՐԳ



ՄՏԵՑԱՆ ՄԱՆԱՐՄԷ



ԱՐԹՕ

րէն, որուն նմոյսները կը վիտան Բոպ-կրիչէական փարատներուն մէջ:

Բայց վիպական ձեւի մը հնարիչ Սուլէրը մեղի կը ներկայանայ նոյն ատեն իբրև մտքի հետեւակ մը, որովհետեւ իր միտքը մարքսիզմի գաղղ ու անսխալական որովայնին մէջ կը տապըլտի:

Սուլէրգի փնտառուքին նորութիւնը համոզիչ պիտի ըլլար, եթէ երբևէ հին տեսութիւնը գրական արարքով թարգմանելու նպատակ մը չհետապնդէր, ա՛յն տեսութիւնը, որ ամէն տեղ կը ճարձատի եւ որուն վերջին տեսարանն է ինք: Առանց Ատուծոյ աստուածարան մը, բայց աստուածարան մը յամենայնդէպս: Սուլէրը կրնայ ասանձինն հերոս մը ըլլար, Մարքսով սակայն ոչնչութիւն մըն է, վարդապետութեան մը մէջ պարզօրէն յարախաղաց մը:

Այս վարդապետութիւնը, որուն մէջ կը դործեն «Թեյ-Գեյ»-ն ու «Շանմ»-ը, անդունդ մը կը բանայ իրենց եւ ժեռած գրողէաներուն միջև, որոնցմէ իբրև թէ կը ներշնչուին իրենք: Անդունդ մը, զոր այլևս ոչինչ պիտի կարենայ լեցը-

նել, ո՛չ իրենց իղձերը, ո՛չ մեկնարանութիւնը եւ ոչ ալ սնտաղներու որոտ-յո՛յզ հաւանութիւնը:

Մայրամէն, Լոթրէամոնը, Արթօն, Պաթայը, զորս «Թեյ-Գեյ»-ի խմբակը կը յաւակնի անգամ մը եւս իրմէ զաւանդի, եղած են նախ եւ առաջ ասանձին մարդիկ: Մարդիկ՝ որոնք ոչ մէկ բանի չէին հաւատար, ոչ մէկ կազմակերպութեան չէին պատկաներ եւ ապաւէն չէին փրձարներ ո՛չ մէկ գաղափարի կամ վարդապետութեան մէջ: Ասկէ է որ առաջ կու գայ իրենց տաղանդին ողբերգական հանդամաճը: Այսօրուան իրենց յաղթանակը եղած է նախ իրենց թշուառութիւնը: Այդ թշուառութիւնը այն տուրքն է, ասանձնութեան այն տուրքը, զոր կը վճարեն արուեստագէտները, մինչ փարսիզանները կը մերժեն վճարել նոյնը: Մայրամէն, Լոթրէամոնը, Արթօն, Պաթայը ասանձին մեռան: Զուր է այսօր որ մարքսիստ քրիստոնեաները խմբովին ու հաւաքական գործակցութեամբ գրականութեան աղբամանները կը քրքրեն վերոյիշեալ մեծերը իրենց պիտակներով ցուցադրել ջանալով: Ասանձնու-





ԱՆՏՐԷ ՊՐԸԹՈՆ

Թիւնը կը բաժնէ դիրքնէ միշտ այդ մեծերէն:

Մեծահոգիները իւրացնելու այս գայթակհուութեան մէջ, «Թիւ-Գիւ»-ը անսրբապարտի սխալագործութիւն մը գործեց, իր ցանկին մէջ առնելով Անտրէ Պրըթոնը: Այս մէկը շատ եղաւ այլեւս: Պրըթոնը ա՛յնքան մօտ է մեզի, ա՛յնքան ծանօթ մեզի, որ այս պարագան, այս իւրացումը, պօզանք կը ներշնչէ մեզմէ իւրաքանչիւրին: Ցաւալի է իսկապէս, որ... ինչորոշ առարկայ անը, որուն կեանքը խղումներով ընթացաւ, իսկապէս մեռած է հիմա: Որովհետեւ, եթէ տակաւին ապրէր, իր ծակծկած ձեռքերէն կայծակներու ստրող շարան մը պիտի սուրբ դէպի «Թիւ-Գիւ»-ը, վերջնապէս, ոչնչացնելու համար այս դիտակալութիւնը: Բայց իրապէս բարեկամ մըն ալ չէ՞ ձգած ան իր ետին, չէ՞ մընացած, գերիբազու մը... Մէկը, որ դուտար, «Թիւ-Գիւ»-ը տեսուար, կը բուռնէ:

ԱՅՈՒՆ, ԻՐԱՆ Է, 1968-ԻՆ  
ՄԱՐԳԱՐԻՍՏՐԸ ՓՈՒՆԵՑ ՓՐԱԿԱՆ

Ես համոզուած եմ արդէն, որ այս վարուելակերպը, այս մեթոտները, որոնք կ'ընդլղեցնեն մեզ, կը սեղմեն մեր կոկորդը, շատ բնական կը թուին սառկայն «Թիւ-Գիւ»-ի ու «Շանձ»-ի անտեսուն հատարակութիւններուն: Այս հանդէսները մարքոստ հանդէսներ են, կը կիրարկեն մարքոստ մեթոտներ: Անոնք գրականութեան մէջ կը կիրարկեն ճիշդ այն մեթոտները, ինչ որ ուրիշ մասնագէտներ քաղաքականութեան մարզին մէջ կը կիրարկեն: Եւ գիտենք, թէ մեռնելու վերիբաշտումը այն կարեւոր ու հսկայ գործն է, որ ժան Փօլ Սարթը լա շօզ կ'անուանէ: Մեռելները լա շօզ-ին համար անդտանելի ու անզնահատելի առաջի մըն են, որովհետեւ անոնք երբեք ոչ չեն բտեր: Կը մեռցնեն ու ապա կը վերակենդանացնեն: Այն մեծարանքը, որ «Թիւ-Գիւ» կը ցուցաբերէ գերիբազաւորութեան նկատմամբ, իրապէս որ վախ կ'աղղէ: Այն բացառիկ է, որ «Շանձ»-ը կը նուիրէ Փրակային եւ ճիշդ այն պահուն, երբ Փրակա քարտէսին կը ջնջուի, իրապէս որ շարագունակ սպանալիք մը կը պարզէ:

Փրակա կը զտնուէի անցեալ տարի, երբ Փրակայի ամբողջ բնակչութիւնը եւ ոչ թէ քաղքենիները, որոնք բնաջրն ջրած ցեղ մըն են այժմ, բնակչութիւնը, այսինքն՝ ամբողջ ժողովուրդը՝ դործաւոր, գիւղացի, մտաւորական եւ զինուոր մօլեզին անապարանքով փողոցներուն թողր ցուցատարտակները լաթերով կը ծածկէին, փողոցներու անունները կը փոխէին, սրաքներու ուղղութիւնը կը շեղէին, որպէսզի ուշացնեն կամ մտլորեցնեն ուսու բոնակալը: Այո, իբրեւ է, 68-ի Օգոստոսին տեսէք, թէ ինչպէս մարքոսիզմը կը փոխէր Փրական: Ահա-ասիկ այն զահաւոր բարեկենդանը», որ «Շանձ»-ը կը բազմայ: Ահա-ասիկ Փրակա-Մոսկուան եւ մարքոստ-լենինիստական գիշերուան մէջ բոցավառող իրենք դիրքնէ ջահի վերածած ուսա-

նողները, քաղաքի մը մէջ, ուր այլեւս եւ ոչ մէկ բան նոյն անուամբ չի կրնար:

**ՄԱՐԻՍԻԱՆ-ԼԻՆԻՆԻՍ ՍԻՍՏԵՄԱԸ ԻՐ ՕՐԵՐԸ ԲՈՂՈՐԱԾ Ե ԱՅԼՅԻՄ**

Ի՞նչ բան է Ալվան կարտը: Այս կարտը տեսաւ աշխարհին մէջ, ուր քաղաքական իշխանութիւնները, բոլորը անխորտիր, ինչ ալ բլան անոնք, նոյն է: Կարող եմ ասել սուտի ու խարտի մեծութեան բուրգերու պէս կը ներկայանան մեզի, ի՞նչ կրնայ բերել զրապէսը մարդկութեան իրեն նոր եւ ի՞նչպէս կրնայ օգտակար ըլլալ առանց դաւանանքի: Այս հարցումն է, որ կը զրուի ուժով զրապէսին առջեւ, աւելի՛ եղերականօրէն, քան երբեք:

Գոտական վերլուծումը, ըստ որում զրամատիրական զրութիւնն է միայն բունկայը եւ ազատագրող՝ մարքսիզմ լենինիզմը միայն, այլեւս վերջ գտաւ: Այս բուն իրողութիւնը ժեր ազրած օրերուն ճշմարտութիւնն է: Անիկա գամաւած է եօթնամասնական տարիներու երկիրներն տակ: Անիկա իր նոր ու եղերական լոյսով կը լուսաւորէ այն շրջանը, ուր պիտի մտնենք: Եթէ չենք կասկածիր այլեւս, որ զրամատիրութիւնը բունկայ ու հոգր զրութիւն մըն է, որ մոգովբային ըմբոստութիւնները արիւնի մէջ պիտի խեղդէ եւ որ պիտի աշխատի քամել աշխարհը մինչեւ քարիզի վերջին կաթիլը, զիտենք այլեւս հիմա, որ մարքսիզմ-լենինիզմը անկէ սուելի չ'արժեք: Ըսենք այլեւս, թէ անիկա աւելի վատ է, քան զրամատիրութիւնը: Անիկա կործանեց շատ մը մարդոց յոյսերը: Անիկա հաստատեց զրութիւն մը, ուր անհատը ոչնչացուած է ու փոխարինուած անանուն ու կոյր ու հաւաքական մէկ տարտած էակով, որ կա շօզ կը կրչուի: Իրաւունքի ոչ մէկ մարկան, ոչ մէկ իրաւունք: Երեք տարրական ազատութիւնները (երթիւն, բնակութիւն հաստատել, կարծիք յայտնել), որոնք արեւմուտքի հանապազօրեայ հացն են, որոնք տեսանելի չեն

եւ անոնց անոնց պիտի չկարենայինք սպրիւլ, զոյութիւն իսկ չունին այն մութ ու պղտոր պետութիւններուն մէջ, որոնք կը զեկապարտին կա շօզով եւ ուր ինքզ, պետութիւնը միակն է, որ կրնայ շարժիլ, գործիչ ու մտածիչ:

Որովհետեւ՝ կա շօզը ամէն ինչ կը տնօրինէ ամէնուն համար:

Կա շօզն է, որ գրադէտներուն ուղին կը ճշգրէ:

Կա շօզը ինքն է, որ կ'որոշէ անոնց բնակութեան վայրը:

Կա շօզը ինքն է, որ կը հրահանգէ ու կը սահմանէ անոնց բոլոր անդամութիւններն ու ճամբորդութիւնները: Ու ատիկա ո՛չ միայն արտասահմանի անդնչութեամբ, այլեւ իրենց իսկ երկիրներուն մէջ:

Կա շօզը կը մտածէ, կը խօսի, կը գրէ ու կը գործէ իրենց միջոցաւ:

Պետութեան մը մէջ, ուր քաղքենի զատակարգը բնաջնջուած է յիսուն տարիներէ ի վեր, խորհրդային զրապէսները կը ճանչնան աքտորը, ուղղիչ կայանները, ինչպէս նաեւ աստճանակիր աշխատանքի զատակարարութիւնը, պարզ այն պատճառով, որ յանդիման են անճանկան կարծիք յայտնել կա շօզի անդրորդելի, անողոք, բայց ոչ անփոփոխ ուղեգիծին դէմ:

Քանի մը օր առաջ, Ալեքսանդր Մոլոժնիցին, որուն զիտողութիւն կ'ըլլար զրոշներու միութեան կողմէ, թէ պէտք եղած յարատեւութեամբ՝ մասնակցութիւն չի բերեր այն ժողովներուն, ուր կա շօզը իր միտքն ու զիտաւորութիւնները ի յայտ կը բերէ, Ալեքսանդր Մոլոժնիցին, ուրեմն, պատասխանած էր իր երէկուան բարեկամներուն, որոնք վաղուան իր դահլճները պիտի ըլլային, թէ չէր արտօնուած Մոսկուա երթալու եւ ոչ ալ հոն բնակութիւն հաստատելու: Միութենէն վտարուեցաւ ան եւ մենք վաղը պիտի իմանանք, որ իր զատակարարութիւնը անդի կ'ունենայ առանց իրեն՝ «Լուսնէք», կ'ըսէր տրամարանօրէն պետական զատակարար Տանիէլին ու Մի-

եազնակիին, որոնց յանցանքը այն էր, որ  
Լա շօզի մասնակիակերպին պէս չէին մը-  
տածած:

Ահաւաստիկ այն դրութիւնը, որ «Թնկ  
Գնլ»-ներն ու «Մանժո»-երը մեղի կը վե-  
րապահեն: Մենք կը մերժենք ատիկա:  
Եւ արուած ըլլալով, որ շատ մը մար-  
դոց համար մահու եւ կենաց հարց է  
այս մէկը, չենք ուզեր նոյնիսկ լուրջի  
սունել այն ձեւակաւ փնտառութիւնն ու  
մտային մարզանքները, որ կ'ընկերանան  
անոնց ճիշդութիւն: Քիչ է ըսել, որ այս  
երկու հանգէսները պրակտիկական յա-  
ռաջապահներ չեն երբեք: Ես կը կաս-  
կածիմ նոյնիսկ, որ անոնք կարենան  
մարքսիզմի յառաջապահներ ըլլալ: Ա-  
ւելի ճիշդ կ'ըլլար ըսել, թէ մարքսիզմին  
վերջապահներն են իրենք: Որովհետեւ,  
մարքսիզմը կ'ընկրկի, կը տապալի ու  
պիտի ոչնչանայ: Այն սկստ երաժշտու-  
թիւնը, որ «Թնկ-Գնլ»-ը մեղի ունկնդրել  
կու սայ, Լա շօզի ահնթեանելի հոգե-  
վարքին ճիշն է պարզապէս:

Ավան կարտը կոյր է: Կուրօրէն  
կ'ընդունի վախճանը այն բանին, որ զո-  
յութիւն ունի: շիմէն կը ջնջէ նախկին  
սմէն կարգ ու կանոն ու չկայ ոչ իսկ  
մէկ վարդապետութիւն, զոր շատէ ինք:  
Եւ հակառակ մարքսիզմի առաջնորդնե-  
րուն, անիկա չի յօժարիր ոստիկանական  
կարգուսարք մը ուրիշով մը փոխարի-  
նել: Մտային ազատութիւն մը ունի Ա-  
վան կարտը եւ բանաստեղծական զօրա-  
ւոր ուժ մը, բաղձալու համար ամէն տե-  
սակ կարգուսարքի արմատական ոչնչ-  
չացումը: Ավան կարտը անցեալ չունի:  
Անոր բաղձանքը ժողովուրդն է: Իրբեւ  
նպատակ աղատութիւնը ունի, իրբեւ մի-  
ջոց՝ բանաստեղծութիւնը, եւ իրբեւ ս-  
պառայ՝ ինչ որ տակաւին զոյութիւն  
չունի: Ամէն ինչ կը ճարճատի, փուլ  
կու դայ: Ամէն ինչ հարկ է վերստին  
կերտել:

Փիէր ՊոլօժԱՏ



## ԲԻԻՉԱՆԴ ԵՂԻԱԵԱՆ

### ԱՇՈՒՂ - ԱՐՔԱՅ ՍԱՅԱԹ - ՆՈՎԱ



Իրաւունք պիտի ունենար զրասէր մը հարցնելու, թէ ի՞նչ հարկ կայ Սայաթ-Նովա աշխարհածանօթ հաննարի մասին խօսք ու գիր աւելցնելու, անոր պարզ ու պայծառ դիմադրիքին շուրջ ծանր-ծանր շրջանակներ հիւսնու:

Արգարեւ, աշուղներու արքայ Սայաթ-Նովայի ամէնօրեայ կենդանութիւն է արդի հայ մշակութային կեանքին մէջ: Իր երգերը ուրախութիւնն են մեր դեղարուեստական բեմերուն, իր տաղերու արտասանութիւնները կայծկլտուն դինիով լեցուն ոսկի թասն են մեր ինճույցի սեղաններուն: Սայաթ-Նովայի հայ սիրտի խօսուն լարն է; դպրոցական պատանիին ու զրասէր երիտասարդին ու ծերունի հայրիկին՝ հաւասարապէս բոլորին ծանօթ, բոլորէն սիրուած:

Աւ ճիւղ այդ քրոյրին ծանօթ ու բոլորէն սիրուածն ասութեան մէջն է թերեւս պատասխանը զրասէրի արդար հարցումին: Արովհետեւ զծանօթ ու սիրուածն անձ՛րը միայն կ'արժէ լա՛ւ ճանչնալ, անոնց կեանքը դիտել, զործերը դասաւորել, մանաւանդ դաննք ուղիղ եւ լման հասկնալ: Այն միւս համեստ ու պատասխանող հայ արուեստին, որոնք յանկարծակի կայծկլտումներով պահելի մը կը լուսաւորեն մեր կիանքի ճամբան ու կը մարին իրենց ժամանակի նեղ շրջանակին մէջ՝ անոնք պէտք չունին մեր յարատեւ ուշադրութեան: Մինչդեռ, հայ հողի խորերէն բոցալառուող հանճարները իրենց լուսաւորութեան հորիզոնը կ'ընդարձակեն ալ ժամանակի ընթացքով:

ու մեզ կը հրաւիրեն հետզհետէ աւելի լախօրէն եւ աւելի խորապէս ճանչնալու դիրքնք եւ իրենց պապագամբ:

Եւ ոչ ոք չի կրնար արքայ Սայաթ-Նովան բարձրագահ մէկն է սերունդէ-սերունդ իրենց լուսարձակումի շրջանակի ընդարձակող հանճարներէն: Այնոր, Սայաթ-Նովան հայութեան շատ աւելի «ծանօթ» է, քան իր երգերուն «Տափարը» կազմած օրը, իր յիսուն տարեկանին, մեղմէ երկու դարեր առաջ: Այդ օրերուն, երբ աշուղ Սայաթ իր քամանչան կուրծքին տալով՝ ուղեց հեռանալ աշխարհի հրապարակէն եւ առանձնանալ հայ վանքի իր խոսքին, ան հաղիւ թերեւս ծանօթ էր թիֆլիս քաղաքին ու շրջակայքին: Ան դեռ «անծանօթ» մըն էր հայ մեծ գաւառներուն, Հայ Պոլսին, Հայ Իդմիւրին ու Կիլիկիոյ բեմերուն, մինչև որ մեր այսօրէն ճիշդ 111 տարիներ առաջ՝ դրասէր Բժիշկ Գ. Հախօրէրեան զայն Հայ մշակութային աշխարհին ծանօթացուց, անոր մասին հրատարակած իր հոյակապ պիւբլիքը, 1852-ին, Մոսկուա:

Այնուհետև բազմաթիւ ուսումնասիրութիւններ եկած են ճոխացնելու հանճարն աշուղին պիւսնը ու տարածելու անոր երգերը: Սայաթ-Նովայի մասին գրուած հարիւրապատիկ աւելի էջեր կան, քան իր Տափարի էջերուն թիւը:

Բայց այսքան ծաւալուն ու մանրամասնաւ ուսումնասիրութեանց երբ կը նայինք այսօր, մեզի կը թուի, թէ անոնք նկարագրի ունին խնդրելու եւ ծանրարեւոնելու աշուղին երգերը, եւ պայծառացնելէ աւելի մշուշելու անոր դիմադիժը: Ուստի հարկ է որ մենք անկեղծ ճիշդ մը ընենք սրբիւնը մեծ աշուղը իր անուան ու պորձին շուրջ կուսակուած թուղթերու բեռնէն, ու զէմ առ զէմ մեզի ծօտեցնելու անոր լուսածածանջ դիմադիժը ուղղակի ընթերցումովը իր երկերուն, եւ զգալու անոր սիրտին բարախումբը, մանաւանդ անոր արուեստը գիտելով իր անձին շրջանակին մէջէն: Որովհետև Սայաթ-Նովայի անձը նուազ գրաւիչ չէ, քան իր արուեստը:

**Ա.— ԳԱՂՅԱՇԽԱՐՀԻ ԶԱՒԱԿ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ**

Առաջին մեծ իրողութիւնը, որ մեր ուշագրութիւնը կը գրաւէ՝ սա է, թէ Սայաթ-Նովան հայ գաղթաշխարհի ծնունդ մըն է՝ կիանքով եւ արուեստով: Այս հաստատումը կը հանդիս երկու-երեք տուեալներու վրայ:

— Նախ՝ Սայաթ-Նովա զաւակն է Հալեպէն թիֆլիս գաղթած մահտախի Կարապետ անուն երիտասարդի մը, որ թիֆլիս երթալէն ետքը ամուսնացած է տեղացի հայ օրիւրդի մը հետ՝ Սառայի՝ որմէ պիտի ծնէր մեծ աշուղը:

Սայաթ-Նովան իր ատրպեճաններէն երգերուն մէջ ալ մէկ-երկու անգամ կը յիշէ իր հօրը ծագումը, իբրև Կիլիկիայէն: Օրինակ, 18-րդ երկրէն մէջ կ'ըսէ, թէ հայրս Հալեպէն է, կամ Արամայէն: Այսպէս՝

«Սայաթ-Նովա հօր վաթամից հարց կու տամ,  
Ասում է — վուր Հալաբն է, ես՝ Ատանան»:

Սայաթ-Նովայի հօր այսպէս հաւանաբար ասանացի ըլլալուն յիշա-

տակութիւնը իր իսկ գրչով՝ շատ հետաքրքրական է Կիլիկիոյ Հայոց Համար: Թիբեւս Կիլիկիոյ քայքայումին՝ Սայաթի որդի Կարապետ Առանայէն Նրուսաղէմ դացած, հոն Վանտեօն եղած եւ անկէ Հայէպ գաղթած էր, եւ ապա գէպի Կովկաս շարժած:

Հայէպ քաղաքը, Կիլիկիոյ թագաւորութեան անկումէն ետքն ալ, շարունակած էր մնալ Հայ կեանքի ամուր կեդրոն մը՝ վաճառականութեամբ, արհեստով եւ եկեղեցիով, ինչպէս Ծանօթ է մեր աղգին պատմութենէն: Նմանապէս, Հայէպ արտարական աշխարհի մէջ կեդրոն եղած է արհեստներու, եւ այս կարգէն՝ հիւսուածեղէնի, ջուլահութեան: Եւ ապահովաբար՝ ջուլահութեան այս արհեստին մէջ զիրք ունէին Հայեր՝ Սայաթի դարուն ալ, ինչպէս ներկայիս եւս, մանաւանդ Այնթապէն Հայէպ գաղթած Հայեր հոն մերովանդեմ են հիւսուածեղէնի ճարտարարուեստը:

Արդ, վաստերու քայքայութեան՝ թուրքերի է ենթադրել, թէ Հայր Ապու-Սայաթ իր ջուլահութեան վարժ արհեստին վտանակելով՝ Հայէպէն ալ ելաւ գաղթեց գէպի արեւելեան հայաշխարհ, ու թափառելով դընաց, հաւանաբար նախ Սանահին եւ ապա Թիֆլիս, ուր դառաւ հարուստ հայ գաղութ մը:

— Աշուղի գաղթային ծաղման երկրորդ տունայն է Թիֆլիսը: Եւ երկու տեսակէտներով կարելոր է թիֆլիս: Նախ, Թիֆլիս պարսկական տիրապետութենէն անկախ Վրաստանի հարուստ մայրաքաղաքն էր, վաճառաւան կեդրոն, ու ճոխութեանց, շքեղութեանց ու կենցաղատիրութեան համարաւոր աշխարհ: Նաեւ, Թիֆլիս հայկական շէն գաղութ մըն էր, Ղարաբաղի Մելիքներու օրերէն ի վեր: Հայեր այնտեղ քաղաքացիական եղբայրութեամբ ազատօրէն կ'ապրէին ու կը մասնակցէին երկրի յառաջգիծութեան՝ վաճառականութեամբ, արուեստով եւ արհեստով: Մանաւանդ Թիֆլիս ուրախ-դուրս կենցաղի, երգի ու թմրի ու խնձոյթի աշխարհ մըն էր, նշանաւոր՝ իր Վիսնիքի գիմնոսով, իր Վիլյոնիստանի գոգալաներով, իր դուարմասէր, կեանքը ուրախութեան մէջ լմրոնող բարձր իշխանական եւ ազնուապետական դասակարգերով, որոնց Վէլլիսաներուն մէջ անպակաս էին դինարութ, սալ, քամանչա ու երգ:

Այրարատեան հայրենի հողը տակաւին պարսկի խաներու գերիշխանութեան տակ փախուած ըլլալով, ԺԸ. դարու արեւելահայութեան համար Թիֆլիս ճիշդ այն արժէքը ունէր, ինչ որ ունէր նոյն ատեններուն եւ այնուհետեւ Պոլիսը արեւմտահայութեան համար: Անցեալ դարուն իսկ, բուն Հայկական աշխարհի պարսկական լուծէն ազատագրումէն ետքը, դեռ Թիֆլիսի Հայ գաղութը կը մնար ազգային-մշակութային կեանքի առաջնորդ կեդրոնը: Օրինակ, երբ Հայաստանի մէջ դեռ դպրոց ու տպարան չկային, Թիֆլիսի մէջ՝ ԺԹ. դարու առաջին քառուրդին՝ հաստատուեցաւ կանոնաւոր ներսէսեան վարժարանը, որ աղջին պիտի տար Նաղաբեանցի, Նալբանտեանի, Արովեանի սերունդը:

Թիֆլիսի ազատ, ապահով ու շէն Հայկական դպրութի մը ծնունդն է ուրեմն Սայաթ-Նոփան՝ իրրեւ մարդ եւ իրրեւ արուեստ: Առանց Թիֆլիսի վրացա-հայկական խառն մշակութային միջավայրին՝ ո՛ր կարելի է հասկընալ Սայաթ-Նոփայի աշուղութիւնը, ոչ իսկ կարելի պիտի ըլլար թերեւս ունենալ զայն: Ասով հասկնալի է, թէ ինչո՞ւ դեռ այժմ ալ վրացիք Սայաթ-Նոփան վրացի կ'ընդունեն:

Այս իրողութիւնը այլապէս եւս մեզի կը սուրբանջէ կարեւորութիւնը՝

ներկայիս «Ափուսք» կուլուած հայ զաղութներուն, թէ ասոնք անտեսուելիք աշխարհներ չեն, այլ Հայ կեանքի կենսունակ կեդրոններ, ուր կրնան ծընունդ առնել միջուկային արժէքով մշակութային ստեղծագործութիւններ եւ գրականորէն նպաստել հայրենիքի ալ զարգացման, ինչպէ՛ս պատմական անցեալին՝ Հայ մշակոյթի ստեղծագործ կեդրոններ եղած են Նոր-Ջուղան, Պոլիսն ու Իզմիրն ու Թիֆլիսը եւ Վենետիկը, իրիւ շիման կէտեր ու հաղորդակցութեան գիծեր Հայ եւ միջազգային մշակոյթներու միջեւ:

Այսպիսի ազատութեան, նոխութեան ու քեյֆի ու գեղունիներու մեջ ջախջախ մը մէջ է որ կը ծնի Սայաթեան Արուսիին, ըստ ընկալեալ աւանդութեան՝ 1712-ին, ըստ արդի ուսումնասիրողներէն ոմանց՝ աւելի ուշ մէկ թուականին, մինչեւ իսկ 1717-ին:

Մանկութեան տարիներէն մեզի հասած միակ ծանօթութիւնը այս է, թէ Արուսիին՝ պատանի տարիքին՝ կը սկսի ջուլհակութեան: Արուս արթննալ միտք է ու վարդիտ՝ ջուլհակութեան մէջ ալ: Իր ուշիմութիւնը յայտնի կ'ընէ ասով, թէ ան կը կատարելադործէ իր ջուլհակի վահրակը, գործը աւելի դիւրին եւ աւելի կանոնաւոր ընելու համար: Կը հնարէ, օրինակ, զլան մը, որուն սիտի փաթթուի գործուած կտաւը՝ փոխանակ երկարելու փողոցին մէջ:

Ու ջուլհակի գործիքին երաժշտական բիթմին մէջն է որ — շաքարը-շաքարուր, շաքարը-շաքարուր — կը յայտնուի Արուսիին հոգւոյն մէջ եւս երաժշտական կշռոյթը: Իր մազոզի խաղին կը սկսի ընկերանալ իր նուազի ու երդի խաղը: Ու մարդիկ որ կը լսեն անոր քաղցր երգերը՝ կը հրաւիրեն զայն իրենց երեկոյեան խնձոյթի սեղանին, որպէսզի անոնց մէջլիսներուն մէջ ալ ան բաշխէ իր զուարթ սիրտին բխումները, սրամիտ եւ յանպատրաստից յորինուած:

Ջուլհակ-երգիչին համբաւը քիչ-քիչ կը տարածուի, եւ ինքն ալ այլեւս վստահ իր մէջ ծլող-բացուող հանճարին, կը լքէ ջուլհակութիւնը ու կ'երթայ բանաստեղծներու պաշտօնի սուրբի ստեղին — Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետին: Եօթը շաբաթներու պահքը կը բռնէ, մտի լոյսով կ'աղօթէ, գիշերներով՝ սալը գիշերին՝ կը սերտէ իր արուեստը, եւ երգելու ու նուագելու երկնային շնորհ կը խնդրէ: Հին-հին դարերէն ի վեր՝ բանաստեղծներ ու երգիչներ շնորհ խնդրած են Մուսանիւրէն: Հայ աշուղներու Պարնասն ալ Ս. Կարապետն է, որ Արուսիին առատօրէն կը շնորհէ բանաստեղծելու, երգելու ու նուագելու երթեակ տալանը: Իր երգերէն մէկուն մէջ Սայաթ-Նովա կ'ըսէ.

«Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետ, երկիւնք է հասել գովքի քո-  
Գըլուխ վարպետ եջմարտարեան՝ չկայ հաւոար սքըն քո-  
Սայաթ-Նովա շաւ կու սղըայ, ազալուք է երեան անկիալ  
Մեղաւորաց մեղքըն հալէ՛. յաւտով լի է տապանըն քո»:

Իր ազօթքն է՝ մեղքերէն ու շար մտածումներէն ազատուի՛լ, բարձրանա՛լ սրբութեան ու հոգեկան մաքրութեան, որպէսզի կարենայ սիրտէն բխած երգերը լոյսով լիցնել:

Եւ Երկնային շնորհներով ու լուսով լեցուած, ահա Ձուլհակ-Արութ՝ մազադի տեղ ջանանցան ձեռք առնելով՝ համարձակ կու գայ աշխարհի հրապարակը: Այլ իր անունն ալ փոխած, Սայաթ-Նովա մկրտուած, ինքզինք ամբողջութեամբ կը նուիրէ աշուղութեան: Կը մրցի հին աշուղներու դէմ իր նոր երգերով, ու յաղթական՝ իրաւունք կը խլէ «վարպետ» կոչումի: Ու վստահ կ'երգէ, խօսքը իր քամանչային ուղղելով.

«Քեզ ք՞ով ինձմէ կրնայ յսլել...»

Անշուշտ կ'ակնարկէ՝ աշուղներու մրցանքի պահուն՝ պարտուածի ձեռքէն քամանչան խլելու սովորութեան: Բայց ինք այլեւս «վարպետ» է, ու ոչ ոք իրմէ կրնայ «խլել» այդ տխրոտը, շահուած՝ այնքան երիտասարդ տարիքին: Իր Երգերէն մէկուն մէջ կ'ըսէ, թէ ինք աշուղ մըն է.

«Քսան տարուց էշի ինկած...»

Եւ իր երգերէն ոմանց ալ ներքեւ, թէ՛ Հայերէն, թէ՛ ասորյեւեաներէն, կը կարդանք երբեմն ծանօթագրութիւնը «Արուսիմի ասած», ինչ որ կ'ապացուցանէ, թէ Սայաթ-Նովա ծածկանունին հետ աշուղը ճանչցուած էր նաեւ իր աւաղանի անունով:

«Սայաթ-Նովա» կոչումը կարծիքներու տեղ տուած է մէկ դարէ ի վեր: Ոմանք ենթադրած են, թէ Սայաթ, ըստ արաբերէնի, կը նշանակէ «որսորդ» — ինչպէս Սայտա, Լիբանանի հին քաղաքին կոչումը կու գայ՝ ձուկերու առատ որսալայր իմաստէն — ու Նովա «մեծահամբաւ», «տխրոտեակ», — «հեծման», «հին», «միւսնէվիւս» — ուստի Սայաթ-Նովա, «որսորդ համբաւաւոր», որսորդ գեղեցիկ բաներու, երաժշտութեան ու բանաստեղծութեան: Ուրիշներ կարծեր են, թէ Սայաթ-Նովա կը նշանակէ «Տէր, վարպետ, նոր»: Բայց կը թուի, թէ իր անունին ամէնէն բնական նշանակութիւնն է «Սայաթի-թոռ», իր մեծ-ձօրը Սայիտի անուանակոչումով, «Սայաթ-ողլու» իմաստով, ինչպէս ուրիշ աշուղներ եւս կոչուած են «Քիւլ-չիւք-ողլու», «Շիրին-ողլու», կամ իրեն նման «Կիւրճի-Նովա», «Սկէնտէր-Նովա»: Իր զերգաստանի անունն ալ մնացած է «Սայաթեան»: Եւ իրմէ սերունդներ հասած են մինչեւ մեր ժամանակները.

— Իր Երկու որդիներն էին Մելիքիսէթ եւ Օհան, իսկ երկու զուսարեբը՝ Սառա եւ Մարիամ.

— Իր նշանաւոր թուրը եղած է Թիֆլիսի եկեղեցւոյն աւաղերէց Տ. Մովսէս Աւաղ Քհնյ. Սայաթեան, որմէ Հախվերդեան պիտի ստանար մեծ աշուղին «Տափթարը»:

— Տէր Մովսէսի որդիները եղած են. Գէորդ Եազոբ Մ. Սայաթեան, 1839-1920, որ նախապէս Թիֆլիսի չրջանային գատարանի պաշտօնեայ եղած է, ապա Գէորդեան ճեմարանի մէջ աուներէն լեզուի դասատու.

Երկրորդ որդին՝ Բազարտ Մ. Սայաթեան — վախճանած 1933 — Թիֆլիսի Շրջանային Դատարանի աստիճանաւոր:

— Սայաթ-Նովայի չորրորդ սերունդէն կու գան՝ Գէորդի որդին Յարութիւն Սայաթեան, որ եղած է նաեւ Երզնի, 1916-39-ին մասնակցած՝ Թիֆլիսի երգչախումբին, գործով զբաղարանի պաշտօնեայ.



— Հինդերորդ սերունդէն, Գէորգ Յ. Սայաթ-Նովա, ծնած 1924ին, աւարտած է Թիֆլիսի բժշկական ինստիտուտը:

Բայց սնունն եւ համբաւ չին որ կը բարձրացնեն Սայաթ-Նովային երգերը, այլ իր սիրահեղեղ երգերն են որ կը բարձրացնեն իր համբաւը: Եւ օր մըն ալ ահա, Սայաթ-Նովան կը հրաւիրուի Վրաստանի չին թագաւոր Հերակլ Բ-ի պալատը, զուարճացնելու ասոր մէջլիտները: Ինչպէս Սայաթ-Նովան ինքն ալ կ'երգէ հպարտանքով:

«Վրաստանի թագաւորին սագանտարն եմ, Սայաթ-Նովան»:

Արջունի պատիւի բարձրանալը Սայաթ-Նովան պատմած է հետեւեալ կերպով՝ ըստ վրացի ժամանակագրի մը:

«Ես գիտէի սազ նուագել: Միաժամանակ՝ պարսկական եզանակներին վրայէ երգեր յարմարեցրի, մի քանի՝ որ դեռ ոչ ոք չէր արել: Երբ Հերակլ թագաւորը մէջլիս կազմեց ու երաժիշտներին տարան Էնտեղ, ես պարսկական եզանակներով երգեցի վրացերէն: Այս քանը թագաւորին շատ դուր եկաւ եւ ինձ պարգեւ տուեց: Գրանից յետոյ՝ շատերը ցանկանում էին իմ օրինակին հետեւիլ: Ինձ սիրով էին ընդունում ամէնէն, ո՛չ միայն իմ երգերու արանատիս, այլեւ կատակներիս եւ ազնուական մարդկանց ժողովներին մէջ ինձ լաւ պահել գիտնալուս համար»:

Ասիկա պատահած պիտի ըլլայ 1712-44-ի ժամանակները, երբ Սայաթ շուրջ 30 տարեկան հասունութեան մէջ էր: Որովհետեւ այդ թուականը կը կրեն նաեւ իր առաջին գրուած երգերը, օտար լեզուով:

Ձենք կասկածիլ, թէ իր երգերուն եղանակները աչպէս՝ ինչպէս կ'երգուին այսօր Հայ բեմերէն՝ իր յօրինումի հարազատութեամբ փոխանցում են յաջորդ սերունդներուն, մինչեւ որ՝ երբորդ եւ շրբորդ սերունդներուն՝ այդ երգերը սկսած են բիւ-բիւ նօթայի վերածուիլ, իսկ մեր ժամանակներու երաժիշտներու կողմէ վերստին մշակուել բաղմամբն նուագի ընկերակցութեամբ:

**Բ.— ՕՏԱՐ ԵՐԳԷՆ ՀԱՅ ԵՐԳԷՆ ԳՐԱՉՈՂ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ**

Թող Վիրաւորուի մեր Հայկական Հպարտութիւնը, եթէ ընդունինք որ Սայաթ-Նովան սիրելիները օտար լեզուով միայն յօրինած ու երգած է: Իր աշուղական ստեղծագործութեան տարիներուն ամբողջ տեսողութիւնը աւելի չէ, քան 20-22 տարիներ, 30-էն 50-55 տարեկանին, եւ այդ տարիներու առաջին կէսը Հայ աշուղը նուիրած է օտար երգերու, նախ ասորպէս՝ ներէն, ապա վրացերէն, ու ետքէն է միայն որ սկսած է նաեւ Հայերէնով յօրինել:

Գիտնանք նաև, որ ասորյեաններէն ու վրացերէն հրդեհը «օտոր» բուն չէր թիֆլիսի Հայութեան համար, որ բնականօրէն կը խօսէր վրացերէն լեզուն, ու կը սիրէր ալ խօսիլ այդ լեզուով, մանաւանդ երբեք այդ լեզուով: Հայոց համար վրացերէն երգելը նոյնքան բնական էր թիֆլիսի մէջ, որքան բնական էր թուրքերէն խօսիլն ու երգելը Կիլիկիոյ Հայոց մէջ, կամ ինչպէս բնական էր Պոլսոյ մէջ Չուհաճեանի «Լեպլեպիճի Հոյսեր»-ը եւ Հայ քանոնիստներու թուրքերէն թագսիմները:

Նախ, Սայաթ-Նովային աշուղականները օտար են քանակով: Իրմէ մեր ժամանակներուն հասած ժամ 200 հրդերէն 150 հատը օտար լեզուով են. մեծապոյն մասը տարպեճաներէն, 115 հատ, ու 35 հատը վրացերէն, մնացած հաղիւ մէկ-չորրորդը հայերէն: Առաջին հաւաքումին՝ Հախիբիզեան միայն 36 հայերէն երգեր գտած էր: Թէև արդի հրատարակութեանց մէջ հետզհետէ հայերէնի թարգմանուած են ասորյեաններէնէ 50 ու վրացերէնէ 25 հրդեր եւս, ընդամէնը 120-ի բարձրացնելով հայերէններուն թիւը, բայց այս «Հայացումը» չի կրնար հաւասարակշռել իրողութիւնը, թէ Սայաթ-Նովայի երգերուն միայն փոքրամասնութիւնը կը կազմեն հայերէնները:

Սայաթ-Նովան օտար լեզուի դրոշմը կը պահէ նոյնիսկ իր զուտ հայերէն երգերուն մէջ, ուր ազատօրէն կը դործածէ վրացերէն, թուրքերէն, պարսկերէն եւ արաբերէն բառեր: Իր դեղեցիկ մէկ տողը յանկարծ կը կիսւի օտար ասութիւնով մը, զոր հասկնալ կարենալու համար մենք այսօր ներկայութեամբ կը մնանք դիմելու պարսկերէն կամ այլ օտար բառարանի մը: «Նաճագ մարդ» — անձոր՝ մարդ, «Ղաստ արա» — ջանք քրէ, «Պայասպ վախտի բալիա կուզիս» — ազատ պահի տպրուտ կ'ուզես, «Էսալիսիմ էս իլիսիմազ արա» — ժողովուրդին այս խնդրանքը կտտարէ, եւ այլ օտար ասութիւններ՝ միայն իր մէկ երգին մէջ, Եշանաւոր «Քաւաւաւայլիմ» մէջ: Ուրիշի մը մէջ:

«Էշիւէմէդ ինկիլ իմ տարտ հալիս,  
Թաք իս մեռնիմ, դամ սաղ ըլիս»:

Սւ իր միւս բոլոր երգերուն մէջ կը վխտան օտար բառեր — դումաջ, մալ, զամզիմ, աղալաք, աշկարաւ, ազայիպ, բեմալվատ, տիվաւա, մէք-Յամ... Իր լեզուն թիֆլիսի բարբառն է, որ ինքնին արդէն խառն է օտար բառերով, ճիշդ ինչպէս որ մինչեւ ԺԹ. դարու առաջին քառորդին՝ Պոլսոյ Հայ բարբառն ալ կիսով չափ խառն էր թրքերէն բառերով: Եւ Սայաթ-Նովան ո՛չ թէ անհոյ է իր հայերէնի մաքրութեան մասին, այլ աղտօտօրէն փոխ կ'առնէ պարսիկ, թաթար, արաբ եւ այլ բառեր, բաւական է որ այդ խառնուրդով դանկ իր հոգւոյն աղտա ու երանդաւոր արտայայտութիւնը: Եւ տարօրինակ է, որ Սայաթ-Նովայի երգերուն այդ օտար բառերուն հնչումը մեր ականջներուն հաճելի՛ ալ կու դայ, թէև այսօր պիտի չլինար լինէր այդպիսի օտար ասութիւններ մեր բանաստեղծութեանց մէջ:

Սայաթ-Նովան օտար է նաև իր արուեստով: Իր տաղաչափութեան տարազները պարսկական են, ինչպէս ինքն ալ կը խոստովանի, իր ոճն ալ պարսկական «Վարդի ու քլքուլի» մոթիֆներով նախշուած, եղանակները առանկապէս դրացի մողովուրդներու երկարամիզ ելեւէջներով հիսուած: Յանգերն իսկ օտար ձեւեր ունին: Տողերը շարքով կը վերջանան սա սեռակ

զիւրին յանդերով. «...իսազ մի անի: ...դազ մի անի: ...շազ մի անի:» Կամ  
«...սարար մի անի... ճաւար մի անի... խարար մի անի...» Կամ՝

«...վասի ձեռներէն կու լամ իս,  
...եասի ձեռներէն կու լամ իս,  
...շասի ձեռներէն կու լամ իս»:

*Քերեւս շատ խիստ թուի, բայց ճիշդ է Լեւոն Շանթի դիտողութիւնը.*

«Սայաթ-Նովան կիսովին օտար մըն է՝ ուզեմք թէ չուզեմք: Հայերէնէ աւելի գրած ու երգած է վրացերէն ու քուրճերէն: Երգած է օտար եղանակներով, սնած ու մեծցած է օտար շափերով, օտար յանգերով, օտար ճաշակով: Եւ իր հայերէն երգերուն մէջ ալ իր սիրած եւ ունեցած օտար վարպետութիւններէն շնորհիւ բնականօրէն ո՛չ կրնար, ո՛չ կ'ուզեմար, օտար արձանիքի մը սեղանէն սնած, իր սեպհակամ պետական կեանքէ ու մշակոյթէն զուրկ ասլոզ ժողովուրդի մը բանաստեղծը:»

(Լ. Շ. «Անբողջական նրկեր», Թ. Հաստր, Գէյ-բուք, 1946, էջ 313):

*Սակայն կանոնները այստեղ եւ աւելին չըսենք: Սայաթ-Նովան այնքան ալ «օտարացնելը» շատ-շատ է: Որովհետեւ Սայաթ-Նովան Հայ երգիչ մըն է օտար լեզուով, բայց հոյիով օտարացած հայ մը չէ: Ու կը թուի, թէ աշուղը ինքն ալ պայցած է, որ իր ստեղծարարութեան առաջին տարիներու օտար այդ ճամբով եթէ շարունակէր՝ քուրճերովն պիտի հետանար իր Հայ հողի աշխարհէն: Ուստի յանկարծակի ու վճռական դարձ մը կ'ընէ դէպի իր հարապատ հողատունը: Հաւանաբար 1752-ին, իր ատրպեճաններէն երգերու «Տափթարին» մէկ էջին կը գրէ սա տողը.*

«Հիմի կ'ուզիմ՝ թէ հայնվար տսիմ...»

*Եւ այնուհետեւ — տարօրինակ բան չկարծուի — առաւելագէտ հայերէն են իր նոր յորինումները: Արդեօք քէ՞ն ունեցաւ, զայրո՞յթ զգաց, եւ օտար երգերէ հրաժարումը արդեօք կը համապատասխանէ՞ վրաց արքունիքէն զրկումի իր տարիներուն: Քերեւս, բայց առաւելագէտ սա է իրողութիւնը, թէ յանկարծ իր հոգւոյն խորերէն ժայթքեց Հայ ցեղային հանճարը: Իր մուսան՝ Ս. Կարապետը՝ բանց իր ձեռքէն ու քաղցրութեամբ զինքը ետ գարձուց բերաւ Հայ հողի տունը: Իր թիւ 45 թաթարերէն մէկ տողին մէջ աշխարհին կը ծանուցանէ.*

«Սայաթ-Նովա տիմիսիմի ինքեար էք մէզ, էրմէնի՛ տիր»:  
Թիւ 34 ատրպեճաններէն երգի մէջ կը կարգանք՝ շնչուելու համար իր «խառ հայ» ըլլալը.

«Խառ ժամանակ խառ բանքերըն խառ գրվեց,  
խառ Արարչէն խառ պատկերըն խառ տրվեց՝  
Սայաթիմ խառ, Նովային խառ, ցե՛ղը խառ»:

Ու դեռ ուրիշի մը մէջ (Թ. 65), հպարտութեամբ կը յիշէ իր ցեղին արժէքը.

«Սիւնի սուրբ գերեզմանը, փրկութեան(\*) տեղը մերն է,  
էմբրածեայ Մայր Աթոռը, ազիզ ցեղը մերն է»:

Վրացեալներն ու թուրքերէնը կրցեր էին իշխել Հայ աշուղի լեզուին ու ոճին, բայց չէին կրցած թափանցել անոր հոգիին: Օտար միջավայր ու մըտայնութիւն չէին կրցած ազարտել անոր մաքուր արիւնը, որ կը հոսէր հին իր ցեղային երակէն: Եւ այստեղ է, իր հայերէն երկերուն մէջն է, որ Սայաթ-Նովայի հանճարը կը ծաղկի նոր էջերով, որոնք զինք պիտի վերադարձնէին իր հարազատ ազգին: Ան հայերէն լեզուն կը համարէ «Բիրուլի լեզուն», եւ այլեւ ասով կ'ուզէ տալ իր «Լեզու իսուրը», ճշմարիտ սիրոյ ըմբռնումը ու կեանքի փիլիսոփայութիւնը: Իր հայերէն այս երկերուն մէջն է, որ բացառիկ փառփուռով կը յայտնուի իր լեզուին, ոճին ու ճաշակին շքեղութիւնը, ինչպէս եւ մտածումին ու կեանքի ըմբռնումին վստաստութիւնը: Որովհետեւ նախապէս օտարէն ատածը եւ օտարին տուածը հետեւութիւն մըն էր, իսկ հիմա Հայ սողերուն մէջն է, որ կը ցուցար հարազատ Հայու տաղանդը, Հայու հոգին, ճշմարիտ Հայ քնարերգութիւնը, ան՝ որ խորագոյնն էր իր մէջ, ու զսպուած աղբիւրի մը պէս յանկարծ դուրս կը ժայթքէր հիմա:

Եւ այս կարուածին մէջն է, որ Սայաթ-Նովան կը կատուցանէ իր յանճարտական բնակութիւնը հայ բանահիւսութեան:

(Շար. 1)

Բ. Ե.

(\*) Աճիմաստ է ձեռագիրներուն թարգմանած «ապրեալ» բառը. պէտք է ըլլայ՝ կը կարծենք՝ «փրկութեան»:

Լ. ՄԿՐՏՉԵԱՆ

# Ընթացիկ Բանավէներ Ազգային Հարցերի Շուրջ

Ա.

Խորհրդային Միութիւնում ազգային հարցերի շուրջ երբեք այնքան առասօճէն յատուկ զրգեր ու յօդուածներ չեն տպուել, որքան որ անցած տասը տարում, երբեք «ազգ» բառն ու նրա հետ կապուած հասկացութիւնները այնքան խօսակցութեան նիւթ չեն ծառայել, որքան որ այս նոյն անցած տասը տարում: Ընդամին՝ աստիճանական վերընթաց անկ կարգով: Այսինքն, տարեցտարի տեսլանում է այդ բնոյթի գրականութեան օրանաւոր խօսակցութեան ծաւալը: Եւ այս պարագան ժամանակ առ ժամանակ ընդունում է հենց խորհրդային հեղինակների կողմից, հիմնուելով այս կամ այն ներքին վիճակագրական տուեանների վրայ: 1964 թուին, օրինակ, Հայաստանեան ամսագրերից մէկում մի յօդուածադիր Հաստատում էր, թէ Խորհրդային Միութիւնում «վերջին երեք տարում հրատարակուել են ազգային հարցին նուիրուած մօտ 400 գիրք ու ամսագրային յօդուած»:

Իսկ 1967 թուին մոսկովեան ամսագրերից մէկում տեղեկացում էր, թէ «հինգ միայն սոցիալիստական ազգերի ձեւադրման խնդրի վերաբերեալ ԽՍՀՄ-ում վերջին տար տարուայ ընթացքում հրատարակուել են արեւելի քան 300 մեկագրութիւններ, գրքային եւ յօդուածներ»:

Խորհրդային գիտական ու հրատարակչական մարմինների գործունէութեան ընթացքին քիչ թէ շատ ուշադիր հետեւողները պարբերաբար այդպիսի թուական տուեաններ սասնալու գրեթէ բաւարար Հնարաւորութիւններ ունեն: Բայց նոյնիսկ հարկ չկայ անպայման տրամադրուող թուերի հիման վրայ ամբողջական պատկերացում կազմել: Ամէնօրեայ մամուլը, միմեանց յարողող գիտատղովներէ շարքը, քարոզչական բաղձապիսի միջոցառումներն արդէն ինքնին շատ բան են վկայում տիրող եռուն միտումների մասին:

Այժմեան միտումները լուսարանելու առումով, իր հերթին, յաւելեալ իրողութիւն էր 1969 թուի Ապրիլի 10-ին Մոսկուայում տեղի ունեցած մի ըստ էութեան աննախընթաց իրադարձութիւն: Ի՞նչ պատահեց այդ օրը: Խորհրդային Միութեան արտաքին գործերի նախարարութեան մամուլի բաժինը օտարերկրեայ թղթակիցների համար կաղձակերպեց մամուլի ասուլիս այն նիւթի շուրջ, թէ Խորհրդային Միութիւնում ինչպէս է լուծուած «ազգային հարցը»: Այդ առթիւ յատուկ հաղորդումով հանդէս եկաւ Համաթութեանական Գերագոյն Խորհրդի՝ իրենց փաստական իրաւագրկութեամբ «իրաւահաւասար» երկու պայտոններից մէկի՝ Աղղութիւնների Խորհրդի նախագահ Պալեցկիսը, կրկնելով հանրայայտ առասպելները այն իմաստով, թէ Խոր-

Հըրդային Միութիւնում «ազգային հարցի լուծման» ապարէշում ամէն ինչ կարգին եւ օրինակելի է: Այդ մամուլի ասուլիսի ոգով էլ այնուհետեւ զանազան էլոյթներ ձեւակերպուեցին համախորհրդային ու տեղական-հանրաշեղանկան մամուլի էջերում: Հենց նոյն Պալեցկի-օր, «ընդառաջելով», օրինակ, բելոստասական «Ձեւագրա» կենտրոնական պաշտօնաթերթի թղթակցի ինկորաճին, մի ընդարձակ պաշտպանողական շարագրեց «լենինեան ազգային քաղաքականութեան» օլտիւն:

Ինքնարդարացման նպատակ հետապնդող սկտական-քարոզական միջոցառումներից բացի, շարժման մէջ դրուեցին եւ երկրի գիտական հաստատութիւններն ու մարմինները, այսինքն առաւել եւ յատուկ թափ հաղորդուեց նըրանց «պլանային» գործունէութեանը, բողոքապատկելով նրանց հերթական արշաւային եւանդը: Ուղղակի դժուար է լինիլ հետեւել ամբ-ամիս միմեանց յաջորդող «գիտափոփոխներին» ու խորհրդակցութիւններին, որոնք նուիրուած են ինքնուրուազային հարցերի այս կամ այն կողմի քննարկմանը, մանաւանդ որ նրանց աշխատանքների արդիւնքների մասին նոյնիսկ գիտական մամուլում սովորաբար հարգուում է շատ ուշ եւ այն էլ կիսատ - պոստ մեւով: Այդ ուղղութեամբ, վերջի վերջոյ, հենց Պորհրդային Միութեան Գիտութիւնների ակադեմիայի ցանցում, 1969 թուի կէսերին ստեղծուեց յատուկ «Աղղային Ոճերին»-ը Գիտական Պորհրդոյ», այդ բնագումարի այլեւայլ հետազոտութիւնները եւ միջոցառումները համակարգելու կամ աւելի ճիշդ՝ դրանք կենտրոնական վերահսկողութեան ենթարկելու նպատակով: Որքան էլ ուշադրաւ եւ խոստմնալից լինի այդ ուշացած քայլը, այնուամենայնիւ անհնարին է լաւատես լինել նրա հետագայ գործունէութեան նկատմամբ, քանի որ սկզբից եւեթ Պորհրդի նախադաս է նշանակուել ոչ այլ ոք, քան իր ազգամերժ տեսակէտներով յայտնի խաւարամուլ ակադեմիկոս Եւգենի ժուկովը:

Ուստի դժուար է նախօրօք անխալ կողմնորոշուել, թէ իրականում ինչպիսին կը լինեն այդ Պորհրդի աշխատանքի արդիւնքները: Բայց «ազգային յարաբերութիւնների» ուսումնասիրման գործին այդպիսի արտակարգ նշանակութիւն տան իսկ ինքնին շատ պերճախօս երեւոյթ է:

Ուրեմն, որպէս էլակէտ, հարկուոր է նախ արձանագրել, որ ազգային հարցերի շուրջ Պորհրդային Միութիւնում գնալով աւելի շատ յօշուածներ, մեծագրութիւններ եւ ժողովածուներ են սըպուում, քան երբեք, աւելի շատ խորհրդակցութիւններ, գիտական հաստատութիւնների ներկայացուցիչների հաւաքոյթներ են տեղի ունենում, ու նոյնիսկ հասարակագիտական յատուկ հետազոտութիւններ են կազմակերպուում: Բայց ի՞նչ նշանաբանի տակ են կատարուում այդ աշխատանքները: Առաջին հերթին՝ «լենինեան ազգային քաղաքականութեան յաղթանակը» ապացուցելու եւ այդ բանը ի լուր աշխարհի վերստին հուշակոչելու նպատակով: Այլեւայլ հեղինակներ ու ճառարտանք կարուից դուրս են գալիս, որպէսզի «զանդուածների սեփականութեան» դարձնեն եւ կամ աշխարհի միլիոնաւոր մարդկանց սկանչին հասցնեն այն զարմանալիօրէն դժուարամարտ «մեծ ճշմարտութեան», թէ իբր խորհրդային կոմունիստական կարգերը փրկութիւն են ապահովում նաեւ բոլոր ճշուած ազգերի համար: Ամբողջ կոկորդով ճշարտ միջոցով սեփական «ամեհողութեան» պաշտպանելու անօրինակ ջանքերն ու նըրանց հետ կապուած միապաղաղ ինքնազոյժութիւնները այսօրուայ իւրաքանչիւր ազգախօսութեան հիմքն ու առանցքն են կողմում:

Բայց դրանով հարցը չի սպառուում: «Լենինեան իմաստուն ազգային քաղաքականութեան» ու նրա կարճեցեալ յաղթանակի մասին ճամարտակութիւնները կրկնուում են անաւասիկ արդէն 50 տարուց ի վեր: Ուրեմն, ինքնազոյժութիւնները նորութիւն չեն, ոչ էլ զուգընթացաբար առաջ քաշուող ինքնարդարացում:

ները : Այսօրուայ համար ընտրույր այդ ամէնի աննախընթաց ծաւալն ու ուժգնութիւնն է : Ու նաեւ ժի այլ հանդամանք : Երկար ժամանակ զաղղային հարցի» լուծման հղանակներէ մշակման եւ համապատասխան ձեւակերպումներ շըրջանառութեան մէջ զննելու մենաշնորհը պատկանում էր բացառապէս մտկոմեան կենտրոնի գրահաստատած միջուկին : Խորհրդային ժողովուրդներին ու նրանց իրական տրամադրութիւնները արտայայտող ներկայացուցիչներին մանաւանդ այդ ասպարէզում ուղղակի զխօսք չէր հասնում» , իսկ կենտրոնի կամքը հլուութեամբ կատարող տեղական ի պաշտօնէ մանկլաւիկները իրականում էլ ինքնուրոյն ասելիք չունէին : Մինչդեռ այժմ ուժերի յարաբերակցութիւնը բաւական այլ պատկեր ունի : Միակ ու միակողմանի դործօնի փոխարէն , այսօր գրտիօրէն ու դեր են խաղում արդէն բազմաթիւ ու բարձր գործօններ , ի դէմս արթնացած Խորհրդային ժողովուրդներէ ու նրանց կենսունակ ուժերի :

Այստեղ հարկաւոր է նկատի տունել Խորհրդային Միութիւնում իր թուով մեծամասնութիւն կազմող եւ հետեւապէս կենտրոնական իշխանութեան քաղաքական տիրապետութեան հիմնական յետբան հանդիսացող ռուս ազգի եւ մնացեալ ոչ-ռուս ազգերի ուժերի ջանակական ու սրակական կողմը : Արդ , նախ , որքան էլ որ արհեստական դիտաւորեալ միջոցառումներ լինեն բնակչութեան զանոյնաձայն տեղափոխութիւններ կատարելու եւ գրանցով իսկ համախորհրդային ազգամուլումը արագացնելու , այսինքն ռուսականութեան քանակային տեսակարար կշիռը բարձրացնելու ուղղութեամբ , փաստօրէն աճում են ո՛չ միայն ռուսները , այլեւ ոչ-ռուսները ամբողջութեամբ վերցրած , ընդամին տեղ-տեղ կրթման շատ աւելի արագութեամբ , քան բուն ռուսները : Եւ քանի որ այդ ոչ-ռուս ժողովուրդները չեն կարող ամբողջովին քոչուոր դառնալ ու ցանուցիլ լինել , նրանք հիմնականում մնում են իրենց տեղը , զանակով աճում եւ հետեւապէս ա-

ւելի ինքնապատահ , անխոցելի ու պահանջկոտ դաւնում : Իսկ ռուսները տարածում եւ ռուսականութիւն են սրդոտում դերագանցապէս , որպէս կանոն , տղատ ու սակաւամարդ երկրամասերում : Որքան էլ որ արտաքին պարտադրանքներ լինեն , ոչ-ռուս ժողովուրդները իրենց հերթին քանակապէս ամբանալով՝ ամբանում են նաեւ քաղաքականապէս ու իրենց ճակատագիրը որոշելու գործում ձայն են պահանջում , որոշ դեր խաղում : Բացի այդ , որքան էլ որ Խորհրդային Միութիւնում իշխելու լինի կոմունիստական ազգամերժ դադափարախօսութիւնը ու պարտադրուի բոլորին , մանաւանդ անգոր թոյլերին , այնուամենայնիւ ոչ-ռուս մեծ ու փոքր ժողովուրդներէ մշակութային նուազագոյն ինքնապարտութիւնն իսկ , — մայրենի լեզուի գործածութիւն , սեփական ուժերով գրականութիւն , արուեստ ու դիտութիւն մշակելու պատենութիւն , հայրենական զարուար անցեալին օրաուր հազարակիցուելու հընարուստութիւն եւ նոյնպիսի արժէքներ իրուատելի լինելու դիտակցութեան ձեւաւորում , — նպատատար հող է ըստեղծում ազգայնօրէն հասունանալու եւ ըստ այնմ էլ կողմնորոշուելու համար : Որքան հասունացած եւ գիտակից է սրբեալ ազգային հաւաքականութիւնը , նիւթական կոտաններ ունենալու պայմանով , անշուշտ , այնքան գծուար է նրա ձայնը իսկին ու նրա իրաւունքները իւրացնելը : Իսկ այդպիսի ազգային հաւաքականութիւններ շատ կան Խորհրդային Միութիւնում , նրանք ժամանակի բնութագրում որակով եւս աճել են եւ այժմ ուղղակի թէ անուղղակի միջոցներով պահանջում ու պարտադրում են , որպէսզի իրենց գոյութիւնն ու ձայնը եւս հաշուի առնուեն : Եթէ պահանջներէ բացառապատ մեակերպումը յաճախ կատարած է որոշ անպատենութեան ու վտանգի հետ եւ չի գրտեւորում , դա դեռ չի նշանակում , թէ նրանք չկան ու չեն ազգում ներխորհրդային կեանքի ընթացքի վրայ : Խորհրդային ժողովուրդները եւս այսօր որոշակի գործօն են ազգային հարցի»



լուծման մէջ, խօսք ունեն ասելիք: Դրանով իսկ բարդանում է կացութիւնը, պայմանաւորում քարոզական աշխուժութիւնը, նրա հերթական փուլերն ու դարտուղութիւնները:

Աւշադրու է, որ, ասենք, տակաւին տասը տարի առաջ, ազգային Հարցերի շուրջ զբաւորելով իր լոկալներէն էին լինում դժբեկ բացառապէս մոսկովեան մամուլում, ընդամենն հանդէս էին դալիս հիմնականում ոչ-ռուս հեղինակներ եւ վերին յանձնարարութիւն կատարելու կարգով միարեբան փառաբանում կենտրոնական իշխանութիւններէ ազգամուշման քաղաքականութիւնը: Այդ ժամանակ ուսանելը «հեռուից» դիտում էին, թէ ինչպէս են ետանդով մարտնչում իրենց վարձու կամ պատահական կամակատարները: Իսկ ազգային Հանրապետութիւններում այդպիսի նիւթերով լայն ճակատով դրադուելու իրաւունք եւ հրահանգ, ըստ երեւոյթին, չկար, քանի որ խաղաղութիւն էր տիրում: Պէտք է ենթադրել, որ կենտրոնի այդ դործեկապերպը իր ազդեղ կողմերով պատշաճօրէն բարձրուեց Խորհրդային ժողովուրդների գիտակից խաւերի կողմից, եղան համապատասխան տրուելիքներ, բողոքներ, հակաեւրոյթներ: Իսկ էլ իր բարեբար նշանակութիւնն ունեցաւ ու բաւական ազդեց գործերի ընթացքի վրայ: Մտաւ հինգ տարուց ի վեր ազգային Հարցերի ճննարկման ասպարէզն են ներգրաւուել նաեւ ազգային Հանրապետութիւնների մտաւորականները, ինչպէս եւ ռուս հեղինակները՝ իրենց այլազան թեւերով ու միտումներով:

Աւրեմն, այսօր Խորհրդային Միութիւնում ազգային Հարցերի ճննարկումը ընթանում է ո՛չ միայն ազգաճուլման դազափարով շահարկողութեամբ ու խանդավառութեամբ ուսանելի «վերին հովանաւորութեան» տակ, այլեւ այդ պաշտօնակիր իրադրմանն օրգանապէս ընդգրկմացող ոչ-ռուս ժողովուրդների ուղղակի կամ անուղղակի մասնակցութեամբ: Այդ պատճառով էլ «Հարցի լուծումը» անընդհատ յետաձգում եւ այնքան «ձրգ-

ձրգում» է: Ինքնաբերաբար թէ յատուկ դիտաւորութեամբ Հրապարակ են հանում բազմատեսակ, երբեմն միմեանց հակասող նշանախօսքեր ու ձեւակերպումներ, ոմանց աստեղիւ, ոմանց հանդարտեցնելու, ոմանց էլ քնացնելու նըպատակով: Այս խնդրում իւրաքանչիւր ժողովուրդի վերաբերմունք պայմանաւորւած է իր իրական կացութեամբ ու հասարակական մտկարդակով:

Մոսկովեան կենտրոնի աչքում զուշադրութեան արժանի են յատկապէս բալթեան ժողովուրդները, որպէս ազգայնօրէն ամէնից լաւ կազմակերպուած ու հետեւապէս յամառ հաւաքականութիւններ: Ճիշդ է, այդ «Խորհրդային Միութեան Եւրոպայի» բնակիչները եւս թուով քիչ են, նրանց հայրենիքները փոքր, բայց դա չի խնդարում, որ նրանք ցուցաբերեն նկատելի հաստատակամութիւն: Այդ ժողովուրդները հերտակաւ գիրք ընդունելու կամ ընդհանուր տեսական վէճերի խառնուելու տրամադրութիւն, կարծես թէ, չունեն, բայց պործնականում անում են իրենցը, պայտպանում իրենց շահերն ու իրաւունքները, գրանով իսկ արժանանում մոսկովեան յաճախակի յանդիմանութիւններին: Ազգային Հարցերի մոսկովեան քննարկումներին բալթեան հեղինակներ ընդհանրապէս չեն մասնակցում կամ էլ սակաւադէպ են երեւում:

Ռուսներին ցեղակից ուկրաինացիներն ու բելուսները իւրայատուկ կացութեան մէջ են գտնուում: Այսօր էլ շատ առաններ, նկատի ունենալով յիշեալ ժողովուրդների ցեղային ու լեզուական ազնայն մտտիւթիւնը, մեծամտօրէն հակուած են նրանց ինքնուրոյն ազգ չնամարելու, գրանով իսկ հետեւելով այն պաշտօնական ու հանրային մտայնութեանը, որը կար եւ իշխում էր ցարակաւ ժամանակ: Այդ պարագան գծուարացքում է ուկրաինացիների եւ բելուսների դարձը եւ իւրայատուկ երանգ տալիս նրանց ինքնորոշման պայքարին: Նրանք եւս շատ չեն խառնում մոսկովեան վէճերին, բայց, ընդհակառակն, ջանում են



օրաուր ամրացնել իրենց ներքին ազգային ամրոցութիւնը, դրա համար ստեղծելով նիւթական ու մանական մշակութային կրուաններ, երբեմն էլ մրցելով հենց ուսաների հետ՝ ձկանելով ամէն ինչի սեփականն ունենալ, սեփական լեզուով:

Անհերքաշնակ շահերի հանդոյց հանդիսացող բարձրագոյն կրթութիւնը է ներկայանում մոսկովկան քննարկումներին: Երեք միութենական հանրապետութիւններից շատ քչերն են հանդէս գալիս կենտրոնական բեմերում, եթէ չհաշուենք Անդրկովկասից դուրս ապրող հայ հեղինակների բացառիկ եռանդուն դերը, որի մասին խօսք կը լինի հետագայում: Գլխաւոր հակառակ, Հիւսիսային կովկասի փոքր ժողովուրդների պատկանող երկուստարգ մտաւորականները բաւական աչքի են բնկնում իրենց միջամտութիւններով: Նոյն ձեւով աչքի են բնկնում նաև միջին-ասիական ժողովուրդների որոշ մտաւորական ներկայացուցիչներ, ընդամին ցուցաբերելով հաշուի առնուելիք լուրջ ու հասուն տեսակէտներ, որոշակի թարմ մտածողութիւն:

Պորճրդային ընթացիկ ու գիտական, ինչպէս նաև կուսակցա-գաղափարախօսական մամուլի էջերում տարիներից ի վեր զարգային հարցի մասին երեւացող հեղեղանման նիւթերը, հակառակ իրենց տպաւորիչ ծաւալին, բովանդակութեամբ տակաւին շատ աղքատ են: Միշտ նոյն չոր-ցամաք կրկնութիւններն են, լեկնեան «ցիտատներ», ընդհանուր ճամբարակութիւնները: Պատճառ պարզ է: Վերին թոյնտուութեամբ ու հրահանգով դրիչ բռնող զաղաղէտները», ամենայն զգուշութեամբ, երբեք չեն ծառնում բուն նիւթին, հաշուի չեն առնում մարդկային իրական արտադրութիւնները, ժողովուրդների բաղձանքները, այլ պարզապէս փորձում են աւելի կամ պակաս «համոզիչ» ձեւակերպումներ յորինել՝ կենտրոնական իշխանութեան հերթական միջնորդումները կրկին ու կրկին արգարացնելու, իբր թէ բացատրելու եւ նրանց առջև կանաչ ճանապարհ ապահովելու համար: Այսինքն,

բացահայտւած է անկեղծ ու ինքնուրոյն խօսքը: Դրանով էլ պայմանաւորուած է շուկայ հանուող բացարձակապէս ցածրորակ գրականութեան անհամութիւնն ու սաղտկալիութիւնը:

Այդ ընդհանուր յետնախորհում յատուկ իմաստ է ձեռք բերում այն գիտական լայնահուն բանալիէն, որը մոսկովկան «Վապրասի իստորիի» («Պատմութեան հարցեր») ամսագրում ծաւալուեց 1906, 67 եւ 68 թուականներին, աւելի քան երեք տարի: Պորճրդային օրօք աղային հարցերի լուրջ տեղի ունեցած եւ ո՛չ մի բանալի չի կարող հաւասարուել դրան, ո՛չ մասնակիցների թուով և ո՛չ էլ հեղինակների մտքերը շարադրուելու ոգով: «Վապրասի իստորիի» ամսագրի էջերում, ի հարկէ, ոչ ոք ուզողով շանդրադարձաւ այն հարցերին, որոնք ազգերի համար ու նրանց կեանքում իսկապէս կենսական ու վճռական են հանդիսանում: Բայց եւ այնպէս դա մի նշանակալի յառաջադիւլ էր կարեւոր հարցեր քննարկելու ասպարէզում: Առաջին անգամ փորձ արուեց ազգային հարցերին ծոռնալ քննել շատ գիտական գիրքերից, խօսել գիտնականին վայել հաւատարակչուած լեզուով ու ոճով, դիմացինի ամէն մի անդուրեկան տեսակէտի սակ անպայման «քաղաքական աստուած» չփնտռելու լրջութեամբ: Այդ վերաբերմունքը ինքնին հետաքրքիր երեւոյթ է, խորհրդային հեղինակների այսպէս ասած «մարդ դառնալու» տեսակէտից: Եթէ մոսկովկան ամսագրում հանդէս եկողները ոչ մի յայտնադործութիւն չարեցին, այնուամենայնիւ տուին որոշ վերկայութիւններ, թէ ինչ-որ բան վերջապէս այլ կերպ է հնչում: Ուստի եւ որոշեցինք այս ուսումնասիրութիւնը նուիրել յիշեալ բանալիէն ընթացքին ու այնտեղ բացայայտուած էական իրողութիւններին:

Ինչո՞ւմն է բանը: 1905 թուին Վոլգոգրադի Բժշկական ինստիտուտի «Մարքսիզմ-լենինիզմի ամպիոնի» վարիչ Մատվէյ Սվերդլովը եւ նոյն քաղաքի մի այլ բարձրագոյն ուսումնական հաստա-

տուժեան «Փիլիսոփայութեան ու գիտական կոմունիստի ամսկոնի» վարիչ Պետար Բողաչովը, որոնք առհասարակ յաճախ են միասին յօդուածներ գրում, «ազգ» Հասկացութեան մասին» վերնադրով մի յօդուած ներկայացրին ժողովուհան «Վոպրոսի իստորի» ամսագրի խմբագրութեանը: Խմբագրութեանը, իր իսկ խօստովանութեամբ, նկատի առնելով այդ յօդուածում արծարծուած Հարցերի կարեւորութիւնը, նոյն տարուայ Մայիսին իր մօտ Հրաւիրեց շատ մասնազէտներ, որպէսզի նրանք գործարար միջոցառում մասնակցեն յօդուածի քննարկմանը: Ներկաները պաշտպանեցին խմբագրութեան որոշումը, որպէսզի ամսագրի էջերում լայն բանավէճ բացուի յօդուածի մէջ առաջ քաշուած Հարցերի վերաբերեալ, ելակէտ ընդունելով «ազգ» Հասկացութեան բնորոշումը, որը թեր ու ղէժ կարծիքների դուռ բացեց: Այդ նոյն խորհրդակցութեան մասնակիցներէն մէկը՝ Պ. Վ. Միլոպրազովը, դատւոյ որ «ազգի» երբեմնի ստալինեան սահմանումը դիտական, մարքսիստական է, բայց 50 տարուայ փորձը թելադրում է որոշ լրացումներ կատարել, առանց փոխելու «չորս յատկանիշներ» սկզբունքը: Ս. Ի. Նակուրովսկայան Համարելով, թէ առհասարակ «որեւէ գիտական ընդհանուր սահմանում չի պատշաճում կեանքի բոլոր ղէպերին», յայտարարեց, թէ ստալինեան սահմանումը եւս պատճառ է դառնում թիւրիմացութիւններ, ոչ թէ իր մեղքով, այլ ուրիշների զոգմատիկական մտեցման հետեւանքով: Նա անհիմն Համարեց եւ քնննարկուող յօդուածի հեղինակների որոշ մտքեր: Ս. Տ. Ղալթաղչեանը, անդրադառնալով նախորդ խօսողներին, ասաց. «Երկար ժամանակ կարծում էր, թէ ազգի տեսութիւնը մշակուած է միանգամ ընդմիջտ, թէ այն հարկաւոր է միայն պատկերագրելու ու մեկնաբանելու: Եւ այսօր այստեղ այդպիսի նկատառումներ արտայայտուեցին: Ես չեմ կարող համաձայնուել Ս. Ի. Նակուրովսկայայի հետ, որը գտնում է, թէ բանը նրանում է, որ

«ազգ» հասկացութեանը Ի. Վ. Ստալինի տուած սահմանումը դազմատիկորէն չհասկանալ: Իսկ ինչո՞ւ մենք պետք է վերապահուամեր անհեմք, թէ այսինչ բանը հարկաւոր է հասկանալ այսպէս, միւսն ահա այնպէս, մի ուրիշն էլ մի այլ կերպ. փոխանակ մտածելու եւ անելի ընդունելի բնորոշում տալու: Ես արդէն բանիցս ասել եմ, թէ ազգի գոյութիւն ունեցող սահմանումը վերափոխելու փարձը բաւական անհեռանկար եւ անհարկաւոր գործ է: Ազգի տեսութեան հետագայ մշակումը ԹՅՅՅ կը տայ գտնելու տարբերակուած ու ընդհանուր տեսանկար: Միայն ազատ բանավէճը կարող է պտուղներ տալ»: Վ. Ի. Կոզլովը յայտնեց, թէ՛ «ազգագրագէտները «ետրիդային Հանրագիտարանի» համար մօտ հազար յօդուած են գրել աշխարհի տարբեր ժողովուրդների մասին: Բայց նրանք ի վիճակի չեն որոշելու, թէ նրանցից որքան է ազգ եւ որքան ազգութիւն»: Ս. Ա. Տոկարիւր նոյնպէս նշեց ազգն ու ազգութիւնը իրարէն տարբերելու դժուարութիւնը եւ քննադատեց յօդուածագիրների մի շարք դրոյթներ, յայտարարելով, թէ՛ «ես եւրոպական ժողովուրդները ազգային ընթացքի զարգացումն ուսումնասիրելու, արարական, ափրիկեան եւ այլ ժողովուրդների ազգային խնդիրը հետազօտելու կողմն եմ»: Է. Վ. Թադէոսեանը եւս արտայայտեց ազգային յարաբերութիւնների գծով բանավէճ ծաւալելու օգտին, ինչ որ կարող է Հասցընել դործնական ու տեսական կարեւոր եղբակացութիւնների: Մ. Ս. Ջունուսովը դատւոյ, որ «ազգի տեսութեան կարեւոր հարցերի գծով բանավէճ կարելի է անցկացնել միայն տարբեր մասնագիտութիւն ունեցող շատ գիտնականների ջանքերը համաձայնեցնելով ու միաւորելով»: Նա յիշեցրեց, որ 20-ական թուականներին այդ մասին շատ բան է գրուել, որը, սակայն, հիմա ամբողջովին մոռացուել է: Ջունուսովը Հարց դրեց կապուել նաեւ արտասահմանեան Համադատասխան պաշտօնակիցների հետ, Վերոյիչեալ խորհրդակցութեան մէջ ե-

լոյթ ունեցան եւ ուրիշներն ու Հենց յօդուածագիրները: Վերջում ամսագրի պատասխանատու քարտուղար Ե. Ի. Տրեապիցինը պաշտպանեց այն միտքը, թէ «պարտադիր չէ վերջնական համագումարի բերելը, քանզի դրա մէջ չէ քանակի մի նպատակը»: «Եթէ արտասայտուեն երկու-երեք կարծիքներ, — շարունակեց նա, — կարելի է եզրափակիչ յօդուածում դրանք շարադրել. դա կը լինի որոշակի համրագումար եւ որոշ յառաջաբան: Ուստի պէտք չէ վախճանայ, որ մեզ մօտ չի լինի խնդրի վերջնական լուծում»: Ահա այսպիսի դժբախտութիւններու մեծաւորութեամբ անհաշիւ զարգացանք:

1906 թուի Յունուարին, ամսագրում պարտեց Պ. Մ. Խոզաշովի եւ Մ. Ա. Ավերբախի «ԱԶԳ» ՀԱՍԿԱՑՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ» 16 էջանոց Հանդամանայից յօդուածը, որպէս բանավիճակի ելակէտ: Խմբագրութիւնը միտմամանակ բացատրում էր, թէ՛ «վերջին ժամանակ պատմաբանների, փիլիսոփաների, ազգագրագետների, իրաւագետների շարքում էր նմարկում են ազգի տեսութեան գամագամ հարցեր», ուստի եւ շարունակ անհետը պաշտպանում էր, խմբագրութիւնը որոշել է ամսագրի էջերում քննարկման դնել այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ էթնիկական ընդհանրութիւնների բնաշրջան ուղիները, «ազգ» եւ «ազգութիւն» հասկացութիւնների սահմանումը, ազգերի տեսակները, ազգային յարաբերութիւնների գարգացման դիալեկտիկական սոցիալիզմի կառուցման եւ կոմունիզմի տեղանքները, ժամանակաշրջանում, ազգային խնդիրը ազգային ժողովուրդների մօտ, ճնշումը եւ ճնշող ազգերի ազգայնակա-

նութիւնը: Աւսում էր նաեւ, թէ այդ առթիւ արդէն բուսական յօդուածներ կան խմբագրութեան տրամագրութեան տակ ու այդպիսի նիւթեր շարունակում են ստացուել, եւ որ յոյս կայ, թէ՛ «այդ յօդուածների հրատարակումը կը յարուցի գիտական հասարակայնութեան հետաքրքրութիւնը եւ սկիզբ կը դնի ազգի տեսութեան ու ազգային յարաբերութիւնների կարեւոր խնդիրների լայն քննարկմանը»: Այդպէս էլ եղաւ. ամսագրի էջերում երեք տարի միմեանց յարցուցիչն այնուայն յօդուածներ ու ամփոփումներ, գլխաւորապէս ներխուժողային իրականութեան կապակցութեամբ: Փաստորէն բանավիճակ մինչեւ Հիմա էլ շարունակուած է, եթէ Հաշուի տունեք պատմական եւ արտախորհրդային նիւթեր ընդգրկող յօդուածները, որոնք վերաբերում են առհասարակ ազգերի առաջացման ու զոյութեան հարցերին: Օրինակի Համար բերենք այսպիսի վերնագրեր. «Հաստատուութեամբ նախնազարեան հասարակութեան պատմութեան մէջ», «Եթնիկական ընթացքների տեսակները եւ երբեք պատմական զարգացման առանձնապատկութիւնները», «Ուղիների մասին էթնիկական կացութեան վերլուծութեան շուրջ», «Միջնադարեան ազգութիւնների ծագման ու անկման հարցի շուրջ», «Արտասահմանեան Ասիայի երկրների էթնիկական զարգացման խնդիրները»: Մրանք պարզապէս ցոյց են տալիս, թէ ժողովուրդային «Վոլպրոսի իստորի» ամսագրի բացած բանավիճակ ինչպիսի արձագանք գրուաւ եւ ինչքան Հեռուները տարու, թէեւ Հիմնականում վերաբերում էր ազգային բարձրագիւ հարցերից սոսկ մէկին՝ ազգ հասկացութեան բնորոշմանը:

(Շար. 1)

Լ. Մ.

Թատերական կեանք



«ՈՍԿԻ ԱՔԱՂԱՂ»Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Թեմադրույիւն՝ ԺՈՐԺ ՍԱՐԳԻՍԵԱՆ

Համազգայինի «Գառար իփէկեան» Բա-  
տերախումբը, Յունուար եւ Փետրուար սմե-  
ներու ընթացքին, Պարս Համուտի ձեռքով Տէր  
Մելքոնեան Բատերաւարտին մէջ, զտեղիւնս  
անգամ ներկայացուց Բաճֆիի ձՈՍԿԻ ԱՔԱՂԱ-  
ՂԸ (Բատերակի վերածուած Ճ. Սարգիսեանի  
հոշմէ), ամէն անգամուն ալ լեցուն սրաններու  
առջեւ: Տանձըտըս հազարին աւելի հանդիս-  
տաններ ներկայ եղան ներկայացումներուն: Ո՛չ  
միայն ներկայ եղան, այլև ժանտակցեան ներ-  
կայացումներուն, իրենց սպրտումներով, արտա-  
յայտութիւններով մինչև անգամ:

ՁՈՍԿԻ ԱՔԱՂԱՂԸ Բատերական գրականու-  
թեան լի պատկանիք, յա՛նգ չէ նաև իր Բա-  
տերակի վերածուածը: Երկար, շատ երկար, երկը  
ժամ տևողութեամբ Բատերակի մը զարժած է,  
որուն վերջին արտուանները, ուրի՛նչ կը բացա-  
կուէր Պետրոս աղա Մատիսեան, կը կորսնցնեն  
իրենց ուժակաւութիւնը, եւ կը վերածուին ա-  
մէն զնո՛վ ուրախ վերջաւորութիւն մը ապահո-  
վելու մտահոգութեամբ երկարող տեսարաննե-  
րու: Մազայն հայ կեանքին հետ առնչուող, հին  
եւ նոց որո՛ւ արկարներ կը պարունակէ, արտեք  
կենդանի են, եւ խորապէս յուզող, այլ պտ-  
ճաւով ալ հանդիստանները անհամբերութեամբ

կը սպասեն տիպարի զարգացման, անոր կեանքի  
Բաւալումին եւ կը մասնակցին ուղղակի ներ-  
կայացման:

Տիպարներուն տիպարը, գլխաւորը, շքունու  
համար միակը, Պետրոս աղա Մատիսեանն է,  
լուկայի հարպիկ ստեւարականը, որ կծծի մը  
լէ, որուն համար, սակայն, դրամ չա՛հիւք ար-  
ևեստի ինչիք է, սկզբունք է, որով եւ ոչ շա-  
հարեք բաներու վրայ դրամ Եսիսեանը զտնկորդ  
բաներու վրայ մտնել է շահուածը, մինչև ան-  
գամ եթէ սեփական զուկի հիւանդութեան հա-  
մար բժշկին վճարուելիք գումար է: Անհետրու-  
կան խորքայութիւնները Մատիսեանի համար  
իւելոք մարդու հարպիկութիւններ են, իսկ ու-  
ղիկ ստեւարը՝ անիւլիքի զործ: Կինը, գաւա-  
կը, թող ու դրացի, պարտաւոր են շուտ ու  
ժունչ զործադրել ազալի փափագներն ու հրա-  
մանները: Հուսարի ու արտաքաղես ցոյց շուտ  
հարստութիւնը, խուսափել տոմարակալութեան,  
թղթիկներու վրայ պարտաւորակներով զուտ-  
նալ, յիւղութեան ապուխիւլ, ու ծծել դրամը  
զիւղացիին, կամ անոր, որ բուտական արթուն  
չէ ինչպիսիք պաշտպանելու համար: Միտմա-  
նակ արթուն միտքը զնահատող, ուսումը արհա-  
մարկելով՝ յազգող մը: Վատութիւնը չէ, որ կը



Փարձ Սարգիսեան «Տակի Ահազար» ներկայացման Աէջ Պարտա ազա Մասիսեանի դերով:

ժող դէմը, այլ զուգայի մարդու իր ընդունու-  
նքը, այսինքն՝ տնտեսական մարզու արուես-  
տը:

Պարտա ազա Մասիսեանի մարմնացումը ե-  
զա Փ. Սարգիսեանի՝ իր նաբը, ուսումնասիր-  
ւած խաղարկութեամբ:

Տեսած էինք զինք ու խոմբը, նոյն թատե-  
րակի խաղարկութեան շնթացքին, տարիներ ա-  
ռաջ. հիանալի էր Փ. Սարգիսեանի խաղարկու-  
թեանը այն առևն, հիանալի է ևս այսօր: Տե-  
պարը Հասցուցած է կատարելութեան, պէտք չէ  
փորձուիլ իրկնել զինք. այլ զէրին մէջ անկրկ-  
նելի պետի մնալ: Առանկութիւն մըն էր այս  
անգամ խոմբի ամբողջութեան խաղարկութեան  
իտափոխուած ըլլալը, զբազան իմաստով: Կոզմ-  
նակի անմատչութիւններն ու տրիպանները աստ-  
ցած էին աւելի ազատութիւն, մեզ բերած էին  
աւելի անկախանգ ու բնական խաղարկութիւն:  
Աւետ ապեր (Յարութիւն Պարեան), Կաջ (Օր.  
Մարտ Սարգիսեան), Միման Եակոբիչ (Փ. Եան  
Հապեան), Տիկ. Մասիսեան (Տիկ. Նեյի Մի-

նասեան), Մասիսեանի տղան՝ Ստեփան (Գալուստ  
Հանաբեան), Միգայիչ (Մարգիտ Առանեան),  
Բժէշիչ (Օմիկ Սարգիսեան), յանախորդի  
կամ պարտիկանի զերբրով (Կ. Արտարեան),  
Գայեանէ ևս Հարիսիէ Մասիսեանի աջիկնե-  
բու զերբրով (Օր. Ա. Կալատարեան և Տիկ.  
Գ. Գարապաշեան), յանախորդուհիներու զերբե-  
րով (Տիկ. Զ. Եանթ, Տիկ. Գ. Տէր Կարապետ-  
եան, Օր. Մարտ Սարգիսեան), մեր մէջ զերբ  
(Տիկ. Զ. Եանթ) էլ կազմէին իրարու յաջորդող  
տրիպաններու շարան մը, որ Պարտա ազա Մա-  
սիսեանի շուրջ զանազան՝ առիթ կու տային՝ ա-  
նոր տրիպարի արտայայտան ևս լրացումին: Ի-  
րենց խաղարկութեամբ, բարձր ու կրցան անե-  
ցնել թատերակի կենդանութիւնը:

Բոլոր պարագաներուն մէջ ալ աւելին, այդ  
անմատչութիւնները էլ մնային լրացուցիչներ  
Պարտա ազա Մասիսեանի կամար, թատերակի  
կատային ևս երթին իսկ՝ պատճառով: Պարտա  
ազա Մասիսեանի մակնի նաբ, թատերակը անե-  
լորդ մտտերու շարանակութեան մէջ էլ զանաբար,



Պետրոս ապա Բասիսեան (ժ. Սարգիսեան)

նիթէն շեղում մը, նոր նիթերու սկզբնաորութիւն մը, ինչ որ եթէ ներքի է վկայերու մէջ, ընդունելի չէ Քատերգութեան մէջ:

Համազասկիի ՀԳասպար Իփէկեանք Քատերգութեան արձանագրած յաջողութիւնը (25 անգամ լրի սրաներով ներկայացում, մտա 800 աթուներէն դաս գտարն աթուներ զնկու պարտաւորութեամբ...) յաջողութիւնն է անշուշտ պիտարարար խաղարկութեան եւ մանաւանդ Սարգիսեանի կատարեալ խաղարկութեան: Յաջողութիւն մըն է նաեւ, հայ ժողովուրդի Քատ-

րոնի անդէպ ունեցած անտարբերութեան անասպիլը փչրելու անասպիլէն: Պարն Համուտի Հայութիւնը արձանագրեց մեծ յաջմանակ մը, եւ հուանում մը, իբր անվերապան ներկայութեամբ ու մանակցութեամբ ընդէկի Աջազաղընքի: 25 ներկայացումներուն, որոնք դեռ երկար իջ շարունակուելին, եթէ որանը գրաւուած ըլլար այլ ներկայացումներու նամար, այլ խումբերու, կամ նոյնինքն ՀԳասպար Իփէկեանք Քատերգութեան կողմէ: Անոնք, որոնք Հայութեան Քատերոնի անդէպ ունեցած սիրոյ մասին կասեմաներ ունէին՝ պէտք է աշքերնին բանան եւ բժրուն, իջ Քատերոնի անդէպ սիրու պակասը չէ, որ կ'ընէ այնպէս, որ կարգ մը ներկայացումներ չեն յաջողիր, այլ երկու իրողութիւն՝ Քատերակին պէտք եղածին պէս չխաղաղուելու եւ ժողովուրդին անմասնելիութիւնը կարգ մը Քատերակներու: Անոնցք ինտուքոյի ճշադատ երգչուհինքն եւ կրծայ պատահիլ որ որանը պարպուի, կամ երկրորդ անգամ պարպայ ըլլայ սմբողմէն, պէտք չէ գտրմանայ ատոր, եւ ոչ այլ նամարի այլ իրականութիւնը Քատերոնի անդէպ սիրոյ պակաս: Փարիզի մէջ անգամ, երբ խաղաղուցու ճշադատ երգչուհինքն, որանը պարպայ էր, սուրչեցին, Հեռացան որանէն անոնք, որոնք ներկայ էին բացի մէկ հոգիէ: Հեռացային է որ իտեանք ըմբռնուցու եւ գարնաւ յատկապան Քատերոնի ներկայացուցչներէն մին: Եթէ Քրանսայի ժողովուրդը ինք յատկապան Քատերոնի մը անմեղական ըմբռնողներէն չէ, ինչու ըստգասել որ հայ ժողովուրդը ըլլայ յատկապան Քատերոնի մը պանանմաներն ու զնանատողը: Պէտք է սայլ ժողովուրդին կ'է իրեն մասնելի, կ'է միտմամանակ Քատերական արժէք պարտանակող Քատերակներ: Այն ատեն անու ժողովուրդը կու տայ անհրաժեշտ արձանագրումը: Ընդիկ արձանագրը այդպիսի արձանագրում մը դասու ժողովուրդի հոգիին մէջ, յարճի Քատերակի նիթին եւ լաւ խաղարկութեան: Ինչքան անելի խոր պիտի ըլլար տպաւորութիւնն ու արդիւնքը, եթէ խաղարկութեան վրայ անկմար լաւ բեմադրութիւնը, եւ Քատերակի Քատերական լաւ կատուցումը:

Բ. Փ.

### «ԻՏԱԼԱԿԱՆ ՅԱՐԴԵ ԳԼԽԱՐԿԸ»

Թեմադրութիւն՝ ՎԱՐՈՒԺԱՆ ԽՏԸՇԵԱՆԻ

Կիրակի, 15 Մարտ 1970-ին, «Յակոբ Յէր Մելքոնեան» թատերաբաժնի մէջ, Պուրն Հասուի էլեւոն Ծանթ» թատերախումբը ներկայացուց հոֆէն Լապիշի գիտական Յարդէ Գլխարկը թատերադրութիւնը:

Լապիշի բոլոր թատերակներն ալ վտովիներ են, զրուած հանելի ժամանցի համար: Վտովի մը մէջ ալ կառուցուած կ'ըլլայ թիւրիմացութեանց, սխալ հասկացողութեանց, ակամայ առաջացած նեղ կացութեանց վրայ, որոնցմէ զուրս գալու համար, այդ կացութեանց ենթարկուած անձնաւորութիւնները հազար ու մէկ միջոցներու կը դիմեն, առաջնեկով յանձնա տրուող զբուսութիւններ, որոնք շղթայի նման կ'երկարին, մինչև վերջին այսպիսի բախաւոր լուծումը, որ խաղաղութիւնը կը վերահաստատէ պահ մը, թիւրիմացութեանց պատճառով ի զուր խուճուած միջովայրին մէջ: Թէեւ երկնային ներկայացումներ չեն վտովիները, սակայն, սովորաբար քոնի մը երգ կը պարունակեն:

Վտովիներն ալ ունին իրենց բնագրական դժուարութիւնները, որոնք փոքր չեն թէեւ, բայց անյայթահարելի ալ չեն: Որպէսզի կարենան ընդունելի ըլլալ, անհրաժեշտ է որ ծայր աստիճան մանրամասնօրէն ուսումնասիրուած ըլլայ իրենց ամենափոքրիկ տեսարանին ներկայացումն անգամ, ամենապզտիկ դերը անգամ: Նիւթը չէ, որ պիտի գրուէ, զուարճութեան թատրոնին մէջ նիւթը մասնաւոր հետաքրքրութիւն չունի, ներքին զարգացում մը չունի, սրտաբան զգացերու յաջորդականութիւն մըն է միայն, որ հետաքրքրողական կամ զուարճալի կացութիւններ կ'առա-

ջացնէ, որով՝ կարելի չէ ասպիկի նիւթին, յաջորդու համար: Ամբողջովին խազին ու բնածաղկոթութեան արդիւնքը միայն կրնայ ըլլալ ներկայացման յաջողութիւնը կամ հախաղութիւնը(\*):

Պուրն Հասուի Համազասկիի էլեւոն Ծանթ» թատերախումբի գիտական Յարդէ Գլխարկը-ն ներկայացումը ամբողջական յաջողութիւն մը եղաւ, յաջողութիւն մը, զոր կը պարտինք Վիտաւորաբար խումբի գեղեցկութիւն՝ Վարուժան Խաղճանին:

Առաջին սկար արարուածէ մը ետք, որուն պատճառներէն դիտարկը անշուշտ այդ արարուածին նախամուտ արարուած մը ըլլալն է, որ բուսարար նիւթ չի տար դրամականներուն իրենք զիրենք կիրառու համար, թատերակը դատու էր կ'ըստէր, եւ անհրաժեշտ նիւթը (Brio):

Անկէ ետք, հակառակ մտերմունք չափազանցումներու, վայելք մըն էր «Յարդէ Գլխարկ»-ի ներկայացումը, անխառն զուարճութեան պահերու յաջորդականութիւն մը, որ կը զբաւէր կը տանէր Հանդիսատեսները թատրոնի ինքնատուարութեամբ առաջացող աշխարհը, որ ամենատեսանէրեւակայութիւնը անգամ կրնայ իրականանալ, իրականացնել ինքնինք, եւ այդ ճանապարհով գտնացում առլ Հանդիսատեսներու ներքին աշխարհներու պահանջին:

(\*): Ըսել չենք ուզեր անշուշտ, որ վտովիները, բոլորն ալ համարժէք են, չկան լաւ կառուցուած կամ գեշ կառուցուած վտովիներ. անշուշտ որ կան: Մեր իտիք կը վերաբերի լաւ կառուցուած վտովիներուն:



Տեսարան մը շնորհակամ ճարդէ Գլխարկոյ ճերկայացումէն, ուր կ'ընդունուին զայնք 'Փարսիփո', Գարայի գործակատարը (Փետր. Չիբրապչեան), 'Նոնաճուր' հարսին հայրը (Վարուճան Խոջեան), Հէլեն' Խորոնցեան (Նոնա Վարդապետեան) և պոզի' Հէլենի խոյնը (Յակոբ Յոսեփեան):

Մանրամասնութեանց մէջ, սուրմասերտան բնավորութիւն մը, բնասարգարում մը և Խաղարկութիւն մը խորքը բազմաշնորհ զերակատարներու մէջ ժամին կողմէ, կ'ընկնին անպէտ, ոչ բնէ կը վերածուէր հանդիսատեսին առջեւ բացուող սրբէլ աշխարհի մը, ուր կենտրոն կ'ընտար իր գուարթ, հանկէ, միամտանակ որոշ լուրով լուրի կողմերով: Այլ բոլորը մտք բերուած էր շատ բնականիւր, երկարատեւ, աշխատանքով, ուր կը սրբաշուէր իրադատուկ սեռականոթ բնասարգի մը, արուեստի կերտումը: Կը շորհաւորեն Վարուճան Խորոնցեան ո՛ր միայն իր շատ յաջող խաղարկութեան համար (Նոնաճուր, աներ դերը), այլ մանաւանդ, և մասնաւորաբար բնավորութեան և զերակուցման իր արուեստին համար:

Յուզման մէջ ժամը (բանաբանիչ հոգեկոտ խոր մը բնին վրայ էր), սկսեակ զերտնէր

էին, հաշիւ բուն մը հոգին միայն երկու կամ երեք անգամ բնէ կ'ընտ, անցնող երկու կամ երեք աստուան ընթացքին, ստիպել և ոչ մէկ բողբ պատի զարմուտ անխորձութեան զերակատարներուն, ոչ մէկ սուտրան կը բնացուց իր աշխարհը, այս կամ այն զերակատարի սխալին, կամ անբնական կեցուածքին պատճառով: Ձեռարանները իրարու կը յախարկէին, կատարեալ զերակատարութեան մը, շարժումներու, կեցուածքներու, զերակատարներու խորհրդուններու մ'ընտ լուսաստեղծութեան իրադրութեան, որ ներկայացում մը զերտելու բնագրայի կացութեան զուր գալով, հանդիսատեսը կ'անցնէր Քատրոնի նմանի տակ, կը փոխադրուէր բնական, աշխարհէն ներս, մազնակը կը գտնուէր իր զերտ Քատրոն տեսարաններու:

Նման Քատրոնիներու խաղարկութեան լուրի փոխան զերտարին պարտականութեան մը և, ս-



րուն տակէն զուրս կրցաւ դուր խուճրը թէ՛ եր  
 ամբողջութեան մէջ, եւ թէ՛ ասանձին-ասանձին  
 տասն, գլխաւոր դերակատարներու իրականա-  
 ցումներուն մէջ: Արագութիւնը պարտաւորիչ  
 աւար է վտովիւններուն համար, սրբանմով որ  
 բնականութիւնը պահուի, եւ պատասխանները,  
 շարժումները զան ճիշդ փամուսկին, ճիշդ տե-  
 ղին, աշխարհն արագութիւնը չի փրկեր: Ոչ մէկը  
 պակասեցաւ խուճրին: Տեղ-տեղ, երբեմն թիւ ժր  
 շարժանցունեցաւ արագութիւնը եւ տեսանկարի  
 մտային որոշ պարբերութիւններ, սակայն այնքան  
 բնական ձևով կ'ընթացար ամէն ինչ, որ շուտով  
 մտացութեան կը արուէր ամէն թերացում, եւ  
 կը մնար միայն վայելքը:

Դերակատարներէն ո՛ր մէկը չէ՛ւէլ: յաճող  
 էին բոլորն ալ:

Ստիպան մասնաւոր յիշատակութիւն մը պէ՛տք  
 է կատարուի թատերակի ամբողջ ծանրութիւնը  
 եր ուսերուն կրող երիտասարդ փեսացուի դերին  
 համար, որուն տակէն յաղթական զուրս կ'աւ:  
 Ասա Յովհաննէսեան: Դժուար, շատ դժուար դեր  
 մը, ամէն բողջ անբնականութեան գիրիչը նետ-  
 ւելու պատրաստ դեր մը, որ կրնար, մէկ բողջի  
 իսկ զանգաղեցումով, մտացումով, անբնակա-  
 նութեամբ աշխատար ընել զերկատարն ա...  
 Թուերակը: Ասա Յովհաննէսեան իր դերին բե-  
 րաւ այնքան նուիրում, այնքան սէր ու բարբա-  
 նում, որ կարելի է ըսել իր շունչով առաւ տա-  
 րաւ խուճրը ամբողջ, երբն պատահող թիւրիմա-  
 ցութեանց փոթորիկին մէջէն, զէպի Թուերա-  
 կան յաղթանակ:

Բնական է, որ սրանց զինք շրջապատողներու  
 համարպատասխան խաղարկութեան, Ասա Յովհան-  
 նէսեան միմակ պիտի մնար, եւ իր խաղը պիտի  
 կարծեցներ իր արժէքը, որով՝ բուրյին ամբողջու-  
 թիւնը կազմող տարրերն են, որ պէտք է շնոր-  
 հաւորել անջարան, Յակոբ Քոզմիսեան՝ Հէլենի  
 ջուղէն՝ Պուրիի զերով, Յր. Նոն Վարդապետ-  
 ան՝ Հէլենի (հարսնուն) զերով, Մարի Բոզ  
 Մանուկեան՝ գլխարկաւանաւորի Գլարայի զե-  
 րով, Գլարդ Պիթալան՝ Գլարայի պորձակա-  
 տար Քարտիվոյի զերով, Հարի Տասոյեան՝ Պո-  
 տոյի սպասուհիի զերով՝ Նարհաւորելի էին ի-  
 բնից բերան յարմարմէն եւ իրաւաստի խա-  
 ղարիութեան համար: Երեւութապէս փառք էին,  
 սակայն այդ պատարութիւնը վերցած էր Նար-  
 Հիւ իրենց խաղարկութեան: Իրաքանիւրը ա-  
 նանցմէ կրցած էր ասանձին տիպար մը կերակել:



Գլարա՝ գլխարկաւանաւորի (Մանի-Բոզ  
 Մանուկեան) եւ Պատիկար՝ փեսացուն  
 (Ասա Յովհաննէսեան)

Ասանձնացուցիչը բուրյին Յր. Արփի Տա-  
 տոյեանը, որուն բնական ընդունակութիւնները  
 առաջին տեղում չէ որ կը հաստատուի, եւ որուն  
 շատ յաջող խաղարկութիւնը արդիւնք է ո՛չ միայն  
 բնական ընդունուող աշխատանքին, այլև իր  
 կողմէն դերին յերանման մտածուող նպատին, իր  
 ազատ եւ խորապէս յարմարած խաղարկութեամբ:  
 Վարուճան Խարչեան կը խաղար նմանորով  
 գերը, հարսնացուի հայրը: Վարժ գերասանը, որ  
 ինք է, գծուարութիւն պիտի շունչեար այդ դերը  
 խաղայու համար յաջողութեամբ, ինչ որ իրական-  
 նացաւ անշուշտ: Եւ իր խաղարկութեան համար  
 չէ որ դաստատարի խառն պէտք է ուզուի Վա-  
 րուճան Խարչեանին այնքան, սրբան իր բնագործ-  
 յի պարտականութեան մէջ ձեռք բերած յաջո-  
 ցութեան համար: Այնպէս՝ ինչպէս անձնութիւ  
 նուագործներն մը զեկամուրը իր երաժշտանե-  
 լին եւ երաժշտական գործիքներէն կը հանել ար-  
 յատի յարմարմով երեւութեան մը, որ կը  
 գտնուի ըմբոյնում ունեցիկներուն համար,  
 Վարուճան Խարչեան յաջողած էր օգտագործել իր  
 արտագրութեան տակ գտնուող սերտ զերակա-  
 տարներու ընդունակութիւնները, անմասկան ի-  
 րաւաստի կարողութիւնները, աննայմէ զուրս

բերելու համար բնական նուրբ շքրոնով զերակատարում էր, ուր զգալի էր սանդնաղործու-  
մը և քաղկոյ էր թուփակային խաղաղութիւն-  
ը. առիկու է արուհաւր թաւրոնին մէջ:

Դերակատարները կ'էին կրջան լուսազոյն խա-  
ղաղութեան մը հասնել, կը պարտին ստիկա,  
այս պարապային յոտակորէն զգուշ, իրենց խոճ-  
քաճարի կարողութեանց և Ժառանգի եղանա-  
կին:

Նոյնքան բնականութեամբ Ժառանգուած էր  
տարազներու հարցին, որոնք մէկէ միւսին ընտիր  
էին, որոնց համար շորհաւորիք է սիկ. Տայա-  
նա Խարչան: Նոյնք կրնանք ըսել սեփորներուն  
համար (Ձուէն Խարչան): Նոյնք չենք կրնար ը-  
սել, զժրտաւոր, թարգմանութեան համար

(Վարուսան Խարչան), ուր սկանչ կը ծակէին Լը-  
րինն անհարստա թարգմանութիւններ, օրինակ  
համար՝ «երեսասարդ պարոնն արտայայտութիւ-  
նը, փոխարինելու համար Փրանսերէն «jeune  
homme»ը. անուշտ պիտի չըսէնք «երեսա-  
սարդ մարդ», սակայն «երեսասարդ պարոնն ու  
չենք ըսեր, կ'ըսենք պարզապէս «երեսասարդ»  
և չնշտով կ'արտայայտենք մնացեալը:

Բացասական այս իրողութեան ժառանգումը  
չի կրնար նուազեցնել զԼեւոն Շանթն թատերա-  
խումբին մեք բերան յաջողութիւնը: Վայելիք  
մըն էր խումբին իրազորումը զիտեղը, և վա-  
յելիք մը պիտի ըլլայ բոլոր անոնց համար, որոնք  
վաղը առիթը պիտի ունենան տեսնելու Լուսիկ  
«Յարդէ Գլխարկ»ը:

Բ. Փ.



## ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

«Գ. Մելիքեանի ԳՐԱԳԱՆ ՄՐՅԱՆԱԿ»-ի մ արժանացած

ՆՇԱՆ ՊԵՇԻԿՓԱՇԼԵԱՆԻ

«ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ»-Ը

Ընտիր թուղթ, պատկերագարդ, մաքուր սպագրութիւն, 1150 մեծագիր էջ

Գին՝ 15 Լ. Ոսկի

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ՝ 5 Տուար

Ստանալու համար դիմել՝ «Բագին»-ի եւ «Ազգակ»-ի իմ քաղաքատուներուն,  
ի նշպէս նաեւ Կիլիկիոյ Կաթողիկոսարանի գրախանութիւն:

---

«ԽԱՂՐԱԿԵԱՆՔ ԿԱՄ ՊՈՆՇԵԱՆՔ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

(Ուսումնասիրութիւն)

ԳԱՐԵԳԻՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՅՈՎԱԷՓԵԱՆՑ

Հրատարակութիւն՝

ԳԱԼՈՒՍ ԿԻԼՊԵՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ

Անքիլիսա — 1969

---

«Ա Ր Ա Մ Ը»

(ՅՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ - ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

Տպ. Համազգային

---

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄՔ ԱՍՏՅԱՆՔ

«ԹԱՏԵՐԱԿԱՆ ԴԷՄՔԵՐ» (Ուսումնասիրութիւն), Ն. Պէշկեքաշլիսա, Պէշ-  
քուք, 1970:

ՏՈՒՆԻՍԻ ԲԱՆՆԵՐԷՆ

ԼԻՔՆԱՆ 22 Լ. ՈՐԿԻ  
ՈՐՏՈՒՆՈՒՄ 8 ՏՈՒՆ  
ՀԱՏՈՒՆՆԵՐ 2 Լ. ՈՐԿԻ



Վարչապետի Խոսքով -

G. SASSOUNI

Rue Selim Boustani,  
Beyrouth - Liban